



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

23412  
996

Гор

Симбирск

398.7

G-93

4. Марта  
1872.

2010

3987  
6-93

# ԱՐԱ ՎԻՃԱԿԱՀՈՆ

ԵՒ

## ԵՐԱԶԱՀԱՆ

### ՀՍՏ ԲՆՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ի ՀԱՒԱՔԱԾՈՅՑ

ԶԵՌԱԴՐՈՑ ՀՆՈՑ ԱՐԱԲԵՐԵՒՆ

ԵՒ ՀԵԼԵՆԱՐԵՆ ԼԵԶՈՒԱՅ

ԲԱԺԱՆԵԱԼ Ի ԶՈՐ ՀԱՏՈՐՈՒ

ՀԱՏՈՐ Ա.



Կ. ՊՈՂԻՄ  
Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ

— 1872 —

ՅԱՌԱՋԱԲՈՆ

Վիճակահան ու երազական գիտութիւնը .  
քրիստոսական թուականէն իրը երէք դար յա-  
ռաջմանէ՝ սկսաւ տկարանալև հետզհետէ կորնչիլ .  
և որովհետեւ այն ժամանակէն 'ի վեր ընդհանուր  
աշխարհ հետաքրքիր կըլլար այս գիտութեան ծա-  
ւալմանը , խել մ'անձինք զանազան տեղեր գաղ-  
թեցին և մեծաւ մասսամբ տղէտ հանրութեան  
իոցն յագեցնելու ծտուայեցին :

Արարիոյ մէջ գլխաւորաբար կան այնպիսի վի-  
ճակահան և երազական անձինք որոնք թէ և  
տղէտ , սակայն իրենց նախնիքներէն աւանդա-  
կան կերպով սովորածնուն չնորհօքը Արաբացւոց  
քով յարդ ու համարում ստացած են :

Տասն և եօթ դարէ 'ի վեր այս արհեստոց  
գրէթէ աշխարհիս ամեն կողմը մուրացկաններու  
ձեռքն իրեւ դրամագլուխ մ'եղաւ , և տղէտ  
հասարակութիւնն իր յոյն ու հաւատքն ասոնց  
ընծայելով շատ մ'ընտանեաց և անհատից կորըս-  
տեան և չքաւորութեան հետեւանքներ երեւան  
ելաւ :

Ուստի՝ մեր նապատակն զտղէտ հասարակու-  
թիւնը հմայից և կախարդաց ձեռքէն փրկելով յիշ-  
եալ գիտութիւնն աւելի բժշկականութեան և  
բնութեան ճիւղերուն մէջ ըլլալն ապացուցանել  
և անոնց իոցն ու փափաքը մի միայն ներկայիւս  
յագեցնելն է :

53092 - սեհ



40107-67

9

12002

Մենք պիտ' ապացուցանեմք թէ մարդկանց  
երազը սուտ է եթէ՝ ի կիւանդութեան յարբե-  
ցութեան և ի յեղափոխութեան արեան է: Սուտ  
է նաև,՝ դլայն մասանց մանաւանդ աչաց փոք-  
րիկ ցնցումներէ գուշակելի նախողացումը եթէ  
ջղային ակարութենէ յառաջ դայ:

Այսուսամբ որ կախարդասէր հասարակութիւնը  
ներկայիս պարունակութենէն ծանօթանակէ դկնի  
պիտի խորչի բնականաբար այնպիսի վիճակահան  
և երազահան անձներէն որոնց սկատդամը մի մի-  
այն բատ պատշաճի անձին, հասակին և աւուր  
յարմարաւորեալ խարէութիւն մ'է:

## ԳԼՈՒԽ Ա

Բնութիւնը մեզի կը սորվեցնէ թէ Հա-  
մայն արարածք մարդկան աշխարհիս, աճո-  
ղական և յեղափոխական ըլլալով՝ երկրա-  
դընտիս տիպարն են:

Հին Հեղեն վիլխառիաները մարդկային ա-  
րարածոց հուրած այսինքն փոքր-աշխարհ  
կ'անուանէին, և բնութիւնն ալ նոյնը մեզի  
կը ցցնէ թէ ինչ որ կայ աճողական և յեղա-  
փոխական մեծ աշխարհին մէջ նոյնը կայ նաև՝  
մարդկային արարածոց մարմոյն մէջ: Եթէ  
աշխարհս ու իր որ և է սեսակ արարածներն  
ըստ բնութեան իրարու համաձայն չըլլան տա-  
րակոյս չը կայ թէ՝ աշխարհիս ներկայ կարգա-  
ւորութիւնը չը՝ կրնար տեղի ունենալ: Բնու-  
թեան օրինաց մէջ ամեն արարած կը կազ-  
մակերպի կը ծնի կ'աճի կը ծերանայ և ապա  
կը մեռնի, ըստ իր կազմութեան: Երկրա-  
դընտիս վրայ բոյսեր կան որոնց կազմակեր-  
պութիւնը ծնունդը ապրիլն ու մեռնիլը տաս-  
նօրեայ միջոցի մէջ կը լրանայ, կան նաեւ  
բուսոյ տեսակէն այնպիսի ծառեր որոնց ըս-  
կիզբն ու վերջը 1000 տարուան միջոցի մէջ  
կըլլայ: Նոյնպէս է այս օրէնքը կենդանեաց

Համար ալ որոնց մէջ կամ շաբաթականէն սկսեալ մինչեւ 600 տարի կեանք վարողներ իրենց կազմութեանը կամ մեծութեանն ու փոքրութեանն համեմատ . իսկ մարդկային արարածը կենդանեաց կարդէն ըլլալով իր կազմութեանը կամ մեծութեանը համեմատ կեանք ունի : Եւ որովհետեւ աշխարհս կամ երկրագունսա ալ կազմակերպեալ ծնած ու աճողական վիճակի մէջ կը դանուի , անոր ալ կեանքն արարածոց կենաց յար և նմանն է , քանզի շատ տեղեր նոր նոր երկիրներ կը կազմակերպին կը ծնին , կ'անին , միւս կողմէն շատ տեղեր ալ կը ծերանան և մաս առ մասն անհետանալով կը մեռնին և կը վերանորդին : Հրաբուղինները և երկրաշարժները երկրագնատիս մեռեալ զանազան մասերը կը վերակենդանացնեն : Եւ ահա երկրագնտիս այս կեանքն ալ իրեն տիպարն ու նեցող արարածոց կենաց շրջանին հետ բաղդատմամբ իր կազմութեանն ու մեծութեանը համեմատ եղած կ'ըլլայ :

Ինչպէս որ բոյս մը կամ կենդանի մը որ իր կազմակերպութեան տեղն ու հունտը տրկար ըլլալով տկար ծնունդ կունենայ . նոյնպէս է երկրագնտիս տկար այսինքն՝ անբերբի մասանց ծնունդը որուն ծեղութիւնը շուտ կը հասնի : Արաբացի հին վիլիսովանները

կըսեն թէ մարդիկ և բոլըր կենդանիք երկրագնտիս վրայ շարժուն բոյսեր են , և այս երկու տեսակաց ներքին կազմութիւնն իրարու յար և նման ըլլալէ 'ի զատ այս աշխարհս ալ որուն մէջ կ'ապրիմք , ճիշդ իր մէջ պարունակեալ բուսոց և արարածոց կազմուածքն ունի , քանզի բոլոր արարածք իրմէ սերացած են :

Առանց աւելի անդին անցնելով մտքերը շփոթելու , կ'իմանամք թէ բոլոր Արարածք , աշխարհիս համընթաց կը գտնուին իրենց համարնութեանը պատճառաւ , և ահա՛ ասկէ կը հետեւի բնականաբար թէ ինչպէս որ մեծ աշխարհս միօրինակութեան մէջ չէ , այլ շարունակ վոկտիսութիւններ կը ենթակայ է որով կ'ածի ու կապրի ու իր շրջանը կը լրացընէ , նոյնպէս ալ մարդիկ միօրինակութեան մէջ չեն կրնար ըլլալ . այլ շարունակ վոկտիսութիւններ կը կըն իրենց մարմնոյն մէջի յեղափոխութեամբը :

ԳԼՈՒԽ .

Ինչպէս որ երկիրս աճողական և պարագիչ վիճակի մէջ դնողն իրարու հետ հազորգակցութիւն ունեցող մեծ և փոքր գեաե-

ըու ջրերն են, նոյնպէս ալ մարդս աճողական և կենսական վիճակի ենթարկողն իր մեծ ու փոքր երակաց արիւնն է: Ուստի՝ մարդկային կենաց ամեն հրաշալիք մի միայն իր արեան մէջ պէտք է բնտուենք: Արիւնն արարածոց հոգին ու կեանքն է, երբ արիւնը նուազ է մարդս տկար է, երբ ջրոտ է հիւանդութեան ենթակայ է, երբ խառնու ած ու չափազանց շոքեւորած է հետեւանքը պաղիլ է: և 'ի ցամաքիլ կամ 'ի սառիլ արեան մարդս ալ իր կեանքը կը վերջացնէ:

Պէտք է նախ դիտնանք թէ արիւնն ի՞նչ յատկութիւն ու հանդամանք ունի, որ արարածոց մարմնոյն վրայ ունեցած մեծ ազդեցութենէն 'ի զատ՝ արտաքին աղդեցութեանց սքանչելիքն ալ կը դորձէ:

Արիւնն ելեքդրական զօրութիւն ունի և երկրս տարերց զօրութեան բովանդակութիւնն իր մէջը կը պարունակէ:

կենդանական արարածոց կամ մարդկանց նախզդացումը կամ նախզդացողական զօրութիւնն իր արեան շնորհիւն է: Մէկ խօսքով առանց արեան լոկ մարմնը ոչնչական է:

Արեան պարունակած մարմնոյն վրայ ըլլալու բոլոր փոփոխութիւններն արիւնն իր ելեքդրական զօրութեամբը կը նախազդէ. բայց ըլլալու բառուածն ելեքդրականութեան մէկ

ճիւղն է. և մարդկային երեւակայութիւնն կոչուածն ալ գարձեալ ելեքդրականութեան շրջանին մէջ կ'ամփոփի :

Արիւնը կենդանեաց կամ մարդկանց փոքր ու մեծ երակաց մէջ տարածուելով իր կեդրունն ունի ստամոքսը, և գարձեալ այս կեդրունէն երկրորդ անգամ կամ երկրորդ ճամբով յարաբերութիւն ունի մարդուս գլխունք վրայ պարունակեալ բոլոր անդամոց հետ, և ասոնցմէ ուրիշ ճամբով մը գարձեալ նուրբ թելերով յարաբերութիւն ունի մարդուս աշաց հետ: Ուստի՝ մարդուս մարմնոյն վրայ ըլլալիք փոքր ու մեծ փոփոխութիւններն արիւնն իր երակաց և անոնց օգնական ու իրարու հետ յարաբերութիւն ունեցող ամենանուրբ թելերու միջոցաւ մարդուս աշացը կը նախազդէ, քանզի արեան ելեքդրականութիւնը ժամանակին հետ գլխաւորաբար առընչութիւն ունի: Արիւնը որչափ մաքուր և ուժով ըլլայ, իր ելեքդրական զօրութիւնն ալ նոյնչափ զօրաւոր և ազդու կըլլայ:

ինչպէս ըռւախն օդոյն նոյնպէս ալ արիւնը ժամանակին կանխաչափն է բայց ասովլ բսել չենք ուզեր, որ արիւնն իր ելեքդրականութեամբը ժամանակին ապագան կը նախատեսէ կամ կ'ազդարարէ, զի ասի բնութենէ դուրս ըլլալով այսպիսի նախազդացում մը

բալորութին սուտ է, այլ՝ մարդուս նախաղդա-  
ցումն այն է միայն որ իրեն ապագայ ճան-  
չաց բայց ժամանակին մէջ նոր սկզբնաւորու-  
թիւն առած իրողութիւն կամ փոփոխութիւն  
մը որ մարդուս վրայ պիտի գայ, արիւնն  
անպատճառ իր ելքքդրական զօրութեամբը  
մարդուս մարմնոյն վրայ գալու փոփոխու-  
թիւնը ժամանակէն անմիջապէս առնելով  
կը հազրդէ :



### ԳԼՈՒԽ Գ.

Եւ որովհետեւ մարդուս արեան յատկու-  
թենէն ու զօրութենէն ծանօթացանք, կ'սկը-  
սինք հիմայ մարդուս վիճակահան գիտու-  
թեանը վրայ խօսելու :

Տարակոյս չը կայ որ երկրիս վրայ եղած  
մեկ սեռ բուսոց կամ մեկ սեռ ծառոց մէջ  
դժոնուածներուն նման մարդկային սեռն ալ  
միօրինակ կամ իրարու համաշափ զօրու-  
թեամբ ճնած ու սեռացած չէ, այլ՝ թէ և  
մէկ սեռ, բայց հունտի և կազմակերպու-  
թեան եղանակէն մարդուս ճնունդը ուժով  
կամ տկար կըլլայ իր սեռին մէջ :

Ուստի՝ մորդակաղմութիւնը կը սովորեցնէ  
մարդոյս մարմնոյն կազմուածոց որ աստիճանի

ուժով կամ տկար ըլլալը: Մարդկային ծննդ-  
գոց մէջ կան այնպիսիներ, որք զանազան  
գիւղերու մէջ տկար և զանազան գիւղերու  
մէջ զօրաւոր են:

Բայցատրենք.

Մարդ մը տկար կ'սուի երր իր ծննդեան  
կազմակերպութեան ատեն բնութեան պա-  
հանջաց օրէնքէն խոտորած է: Սակայն ՚ի  
ծնէ կըյր մը համբ մը կամ կաղ մը կամ  
խուլ մը տկար չը կրնար ըսուիլ քանզի ի՞նչ  
զօրութիւն որ կայ կատարեալ մարդու մը  
վրայ նոյնը կայ նաեւ կուրին կաղին, համ-  
րին խուլին վրայ :

Ենթադրենք թէ մարդոյս բոլոր զգայա-  
րանաց և անդամոց զօրութիւնը 1000 տրամ  
է, որմէ հաւասարապէս բաժնուած է բոլոր  
զգայարանաց: Կոյր մը որուն  
աչաց զօրութիւնը պակսած է բայց այս պակ-  
սած զօրութիւնը կամ ականչին կամ մտքին  
և կամ ուրիշ տեղ մը գայած կամ մէկ քանի  
տեղեր բաժնուած է, նոյնպէս է խիլ մը  
և համբի մը պակսած զօրութեանց եղանակը:  
Սովորաբար տեսնուած է թէ կուրի մը համբի  
մը մտաւորական զօրութիւնը կատարեալ  
մարդու մը մտաւորական զօրութենէ առա-  
ւելագոյն է. դարձեալ, միտքը մշակեալ  
անձի մը ձեռաց կամ ոտից կամ ականջի և

այն զօրութիւնները թեթեւցած և այս պակտածները մտքին վրայ բեռցած և միտքը զօրացած է : Շատ քալող կամ վազելու վարժուող անձ մ' իր անդամնց և զգայարանաց մէջ տարածուած զօրութեանց մեկ մեկ մասն ոտից զօրութեանը վրայ աւելցուցած ունի , այսպէս է բեռնակիր մը իր մէջքին վրայ , լարախաղաց մը թեւերուն վրայ , գերասան մ' իր ձայնին վրայ , շատախօս մը իր ստամոքսին վրայ , գրադէտ մը բանաստեղծ մը հաշուագէտ մը քաղաքագէտ մը իր մտացը վրայ , և խորհող ու խիստ քիչ խօսող մը մտաց և աչացը վրայ :

Ուստի՝ մարդկային սեռին այս զանազան ճիւղերու մէջ ամփոփուած արենական եւ լէքդրական զօրութեանց աստիճաննը եթէ լաւ և ուղիղ չափուի կրնայ անմիջապէս հաւկըցուիլ հաշով զնուած անձին իր կենացը մէջ ի՞նչ ի՞նչ բնաւորութեանց և երեւելի փոփոխութեանց ենթակայ ըլլալը :

Հին Արագ և Հելլէն փիլիսոփանները մարդուս համար ճակատագիր ունի կըսեն և ի՞նչ որ ճակատագին մէջ կայ նոյնին անշուշտ ենթակայ է կըսէին մարդս : Սակայն մարդուս ճակտին վրայ գիր չ' կայ և ի՞նչ նըշաններ որ կան մարդուս ճակտին ոսկերացը վրայ անոնք գլխուն կազմուածքին և կա-

պակցութեանց պահանջումն են : Ուստի՝ ճակատագիր ըսուածն ալ բնաւ տեղի չունի , իրաւ է որ մարդուս կազմուածքէն այսինքն նարդակազմութեան եղանակէն կրնայ հասուլցուիլ միայն բնաւորութիւնն ու փոփոխութիւնը , այսինքն զօրութիւնը տկարութիւնը , երկշուառութիւնը , անվեհերութիւնը , քաջութիւնը , ապշութիւնը և անոր ի՞նչ բանի ենթակայ կարենալ ըլլալը , սակայն իր կենաց շրջանին մէջ ըլլալիքը ո՞չ ճակատագրի մը մէջ նշանակուած է և ո՞չ աղ ճակատագրի ունի :

Եթէ ճակատագրի մը գոյութեանն հաւատանք պէտք է որ հաւատանք նաեւ՝ անոր անեղծաննելի ըլլալուն , որուն հետեւանքը թանձը նախապաշարմամբ մարդկային սեռին յառաջդիմութեան արդելք է : Քանզի մարդու իր կենաց շրջանին մէջ իր մտաւորական կարողութեանն համեմատ՝ մեծաւ մասամբ զանազան յեղափոխութեանց և տեսակաւոր փոփոխութեանց ենթակայ ըլլալով՝ բնութիւնն ի սկզբաննէ չը կրնար վճիռ մը գրօմել անոր ճակտին վրայ , որուն ի՞նչ ըլլալիքը մարդուս միայն իր ձեռքն է իր աշխատութեամբն ու դատողութեամբը :

Քաղաքացին գիւղացիէ մ' աւելի փոփոխութիւններ ունի իր կենաց շրջանին մէջ , նոյնպէս ալ լուսաւորեալ երկրի կամ քաղքի

բնակիչ մը առաւելագոյն փոփոխութեանց  
ենթակայ է քան զ'ուրիշ քաղաքացի մը :  
Սովորաբար քաղաքացիք գիւղացոցմէ աւելի  
հարուստ և նշանաւոր կըլլան , և խիստ քիչ  
կըլլայ որ սոսկ գիւղացի մը կարենայ հարըս-  
տութեան և փառաց տէր ըլլուլ : Միթէ  
պիտի կընա՞նք ըսել թէ բնութիւնը գիւղա-  
ցոց համար զատ՝ քաղաքացոց համար զատ՝  
և լուսաւորեալ քաղաքացոց համար ալ դար-  
ձեալ զատ ճակատագիշներ դրօշմած է ՚ի  
սկզբան անսնց ծննդեան կազմակերպու-  
թեան . բնա՛ւ :

Միտքն անմշակ անձի մ' իր մարդակաղ-  
մութենէն , իր տգիտութիւնն ապշութիւնը  
կամ մասաց տկարութիւնը կը հասկցուի իր  
աչքերէն որոնք արմատ ու կեդրոն են բո-  
լոր մարդկային կարօղութեանց արենական  
ելէքտրականութեան չնորհիս . սակայն երբ  
մի և նոյն անձին միտքը մշակի և որ և է  
փոփոխութիւն կրէ . աչաց նշանակետներու  
շարժումներն ալ կը փոխուին ըսել կուզեմք  
թէ ինչպէս որ մարդիկ իրենց կենաց շրջանին  
մէջ փոփոխութիւններ կը կրեն . նոյնպէս  
ալ մարդուս ներքին զօրութեանց և կարօ-  
ղութեանց հայելի կեդրւնը սեպուած աչքը  
նոյնպէս փոփոխութիւններ կը կրէ մէկտեղ .  
այսինքն մարդկային զօրութեանց վիճակն

ազդարարող : Առով կը հաստատուի թէ մար-  
դուս վիճակի միշտ փոփոխականէ , և աղէկի  
մարդ մը 10 անդամ գէշ և գէշ մարդ մը 10  
անդամ աղէկի , կամ մեկը 10 անդամ աղքատ  
կամ հարուստ կրնալ ըլլալով՝ մարդս ճակա-  
տագրի գերութենէ բոլորովին ազատ է :

ԳԼՈՒԽ Դ.

ՄԱՐԴԱԿԱՑՄՈՒԹԻՒՆ

Որովհետեւ մարդուս աչքը իր մարմնոյն  
ներքին կարօղութեանց կեդրոնն ու հայելին  
է ըսինք . ուստի՝ կ'սկսինք նախ աչքէն և ա-  
նոր յատկութեանցն ու հանդամանացը վրայ  
խիսիլ , որով պիտի հասկնամք մարդկային  
սեռին զանազան բնաւորութեանց ենթակայ  
ըլլալուն նշանները :

ԱԶԲ

Մարդուս ամեն վիճակին մէջ թէ յա-  
ռողջութեան թէ ՚ի շփօթութեան և թէ ՚ի  
հանդարտութեանն իր աչաց շարժմամբը նա-  
խազդուած նշանները ճիշդ են և երբէք ջղա-  
յին տկարութենէ յառաջ եկած ցնցումներ  
չեն : Եւ մարդուս աջ կողմի ակը կամ աչք  
ձախողութեան նեղութեան և արտմութեան,

և ձախինը յաջողութեան և ուրախութեան համար նշաններ կը նախազգէ իր ուժով կամ թեթեւ ցնցումներովն որոնց պատճառը ժամանակին և ուրիշ մարդկանց կամ կենդանեաց կամ ժամանակակից պատահարաց և արկածից հետ ունեցած մաքնիսական յարաբերութեանց արդիւնքն է արեան ելէքդրականութենէն առումամբ . ուստի՝ եթէ մարդուս աջ աշխն վարի կոպն ուժով և միօրինակ խաղայ նշան է ձախորդութեան . եթէ թեթեւ խաղայ նշան է սակաւ վնասու և անյաջողութեան դործոց . եթէ մեկը որ միւս մէկուն պիտի ներկայանայ խնդրոյ մը լսելի ըլլալու համար , դեռ չը՛ներկայացած կրնայ ի ճանապարհին փորձել , ուշադրութիւն ընելով երկու աչաց շարժմանց վրայ : Եթէ դդայ թէ աջ աշխն վարի կոպը կը խաղայ ըսելէ անլսելի պիտ' ըլլայ , իսկ եթէ ձախ աշխն վարի կապն խաղայ անշուշտ լսելի պիտ' ըլլայ , և այն ատեն կրնայ ամենայն համարձակութեամբ և զուարթ զօրութեամբ ներկայանալ :

Նոյնպէս է մեկ օրէն միւս օրն ըլլալու դործողութեան մը համար :

Զորօրինակ վաղուան համար այսիրիկունէ դործի մը ձեւնարկելու մօտեցար . նոյն միջին ուշադրութիւն ըրէ ամենայն ուշադ-

բութեամբ աչացդ շարժմանցը վրայ եթէ կ'զգաս որ աջ աչիդ վարի կոպը կը խաղայ խացիր թէ զէն և վնաս կը դործես . իսկ եթէ ձախ աչիդ վարի կոպն կը խաղայ գիտցիր որ ՚ի շահ կը դործես . և ասոնց շարժում կամ ցնցումներն որչափ ուժով և ստէպ ըլլան , զէնն ու շահն ալ համեմատաբար այն շափ շատ կամ նուազ կըլլայ , և եթէ ո՛չ մին և ո՛չ միւսը խաղայ գիտցիր որ դործութեանդ մէջ ո՛չ շահ կայ և ո՛չ զէն :

ԿՈՒԴԻ

Եթէ ՚ի ճանապարհին յանկարծ աջ աշխն վարի կոպն խաղայ , նշան է շար և որտնեղուկ պատահարի մը համագիպելուն : իսկ եթէ երկիւղալի ճամրէ մ'անցած ատեն ձախ աշխն վարի կոպն խաղայ , նշան է որ նոյն երկիւղալի կարծուած ճամրէն անվտանդ պիտի անցնուի :

Եթէ նախ՝ աջ աշխն վարի կոպն ուժով ցնցի և անմիջապէս ձախ աշխն աղբիւրակին համապատասխանելով դարձեալ մի և նոյն միջոցին աջ աչի վերի կոպն և վարի կոպն հետզհետէ անընդհատ և միօրինակ խաղան ՚ի մօտակայս իսխատ մեծ կորուսի և վնասու նշան է , բայց եթէ շարունակ ձախ աշխն վարի և վերի կոպերն հետզհետէ և անընդհատ խաղան , ՚ի մօտակայս մեծ յաջողութեան շահու և զուարթութեանց նշան են ,

Դակ աչքէն զատ՝ մարդուս մարմնոյն բու-  
լըր զգայարանաց և անդամոց վրայ պատա-  
հած բոլոր ցնցումներն ու շարժումներն ու-  
րիշ բան չեն, բայց եթէ ջղային տկարութենէ  
յառաջ եկած. նոյնպէս անիմաստ է նաեւ  
ընչաց շարժումը, և ականչաց ձայնիը : Աչքը  
դարձեալ հայելի ըլլալով մարդուս մարմնոյն  
բոլոր ներքին գործարանաց, ինչպէս լեզուն  
ստամնքսի, կարող է յայնաել մարդուս ա-  
ռողջութիւնն ու ամենափոքր տկարութիւնն  
անդամ: Եւ որովհետեւ աչքը՝ մարդուս բր-  
նաւորութիւնը կամ բնակուն և ստացական  
բոլոր յատկութիւններն ու հանդամանքը կը  
յայտնէ, ուստի՝ կարեւ որ կը նկատեմք այս  
ձիւղին վրայ ալ խօսիլ և ապա անցնիլ վի-  
ճակահանութեան խնդրոյն :

Սեւ ու դուրս ինկած մեծ և յստակ ա-  
չաց տէր եղող մը, ադահ և անհաւատ կը-  
լայ, և որ և է խօսքի մը դժուարաւ հա-  
սատք կընծայէ: Դարձեալ գոռող հպարտ  
և ձեռքը ծանր ինքնահաւան ինքնասէր իր  
փառացն ու շահուն համար ուրիշին տունն  
աւրող և այսպիսի անձի մ' իր ընտանեաց  
վրայ ունեցած սէրն ալ կասկածելի կըլլայ:

Աչքերը չափաւոր, բայց իրարմէ շատ հե-  
ռու եղած ատեն, այն անձն ապուշ և տիմար  
և դիւրահաւատ կըլլայ, աչքերը մանր ու-

դէպ ՚ի ներս, վախկոտ գող և քսու կըլլայ:  
Ճերմակներուն վրայ միշտ կարմրութիւն ու-  
նեցող չափաւոր մեծ և խիստ սեւ աչք ու-  
նեցողներն աւարառու յափշտակիչ, գիսեմոլ,  
բարկասիրտ, կուռասէր, վայրահաչ, որո-  
վայինամող, մատնիչ ու խարեբայ կըլլան:  
Դարձեալ սոյն դիրքով առանց ճերմակներուն  
վրայ կարմրութիւն ունենալու իրարու մօտ  
սեւ աչք ունեցողները, խարդախ տնաւէր,  
դաղսնի բանսարկու, լիրբ, անամօթ և ու-  
րիշին իրաւունքն յափշտակող կըլլան: Թէ և  
կարճ ու նեղ ճակատը տգիսութեան և փը-  
թամտութեան, և լայն ու երկայնը ուշիմու-  
թեան և իմաստութեան նշան է, սակայն այս  
փորձն աւելի աչաց վրայ կրնայ փորձուիլ,  
քանզի աչաց դոյնն ու շարժումն ըստ ստա-  
ցական բնաւորութեան մարդոյն՝ կը փոխուի,  
բայց ճակտի դիրքը չը փոխուիր: տգէտ ու  
տիմար մեկը կրմութեամբ իմաստուն և հան-  
ճարեղ կրնայ ըլլալ թէ և ո՛չ այնչափ որչափ  
որ բնութիւնը կը չնորհէ: որով չեմք կրնար  
անոր ճակտին դիրքին ապաւիններով ըսելթէ  
այն անձը դարձեալ տգէտ ու տիմար է:  
Յաւերժ ինդուն սեւ ու բոլորանեւ չափաւոր  
մեծութեամբ աչքունեցողն անխորհրդապահ,  
բամբասասէր, զրաբան և ստախօս կըլլայ: և  
այսովհասոյն բարոյականն ալ յոյժ կատկածելի:

Գարձեալ այսպիսին կոյր հաւատացեալ և  
տղէտ կըլլայ և ուրիշին խօսքին շուտով կը  
հաւտայ . ՚ի վերայ այսր ամենայնի տղահ  
ըլլալով այս մասին ինքը զինքը կընայ պաշտ-  
պանել և իր շահուն համար զդուելի շողո-  
քորթութիւններ ալ կընէ :

Աչքերը միջակ բայց մէջը չոր եղողը քա-  
րասիրտ և մոլեռանդ կըլլայ իսկ ջրոտ բայց  
ո՛չ ՚ի հիւանդութենէ եղողը փափկասիրտ և  
մարդասէր կըլլայ . եթէ այր է՝ կնասէր . և  
եթէ կին է՝ առնասէր կըլլայ :

Սովորական չափէն քիչ մ'ալ մեծ աչք  
ունեցող մը ի՞նչ գոյնով ալ որ ունենայ խար-  
դախ և անդութ կըլլայ , ուստի լաւ իսկ է  
այսպիսեաց հետ յարակերութիւն չունենալը  
մանաւանդ անոնց հետ որք բարոյական կըր-  
թութենէ ալ զուրկ մնացած են . այսպիսիք  
նաեւ գաղանաբարոյ , խիստ փառասէր և վեր-  
ջին ծայր ստախօս ըլլալով միշտ կը վախցուի  
ասոնց երեսէն : Եթէ պատահի մեկն այսպի-  
սոյն դիպուտածով մը դործի մը համար , պէտք  
է զգուշանայ անոր աչաց մէջն ստէպ նայելի ,  
քանզի այսպիսոյն բաղխիչ հանեւնէր խիստ ու-  
ժով է , և անյարմար , որպէս զի չը վտանգի :

Հագանակագոյն բարեձեւ , և միջակ մե-  
ծութեամբ աչք ունեցողը խիստ բարեսէր  
ինտանեսէր , մարդասէր բայց աշխարհասէր

կըլլայ այսինքն զուարձասէր . միշտ ցնծու-  
թիւն և զբօսանք կը սիրէ . այսպիսին կըլլ-  
այ նաեւ հանճարեղ և ուշիմ : Մի և նոյն  
գիրքով ու կերպով աշքն եթէ ջրոտ ըլլայ  
հեշտասէր և փափիշասէր կըլլայ , կը սիրէ իր  
հակառեռից խմբին մէջ զուարձանալը , այս-  
պիսին շատակեր ալ կըլլայ բայց ո՛չ որկրամոլ :

Դեղնագոյն և ջրոտ աչք ունեցողը , իրք  
որկրամոլ , անքարոյական և զեղիս կըլլայ ,  
ուր որ երթայ , այն տունը կապականէ և  
կ'աղքատացնէ :

Դեղնագոյն բայց չոր և քիչ մ'ալ իրարմէ  
հեռի աչք ունեցողը չարասիրտ , իրք , բար-  
կասիրտ և չարարոյ կըլլայ :

Աչաց մէջը վառվունը , գիւրիմաց գոր-  
ծունեայ , աշխատասէր և արթուն կըլլայ :  
Եթէ մէկը խօսած տաեն աշաց բիբերն ան-  
ընդհատ երկու կողմի խաղյնէ այսպիսին  
կասկածու միանդամայն փառասէր կըլլայ :

Միջակ մեծութեամբ բայց դէպ յ'երկիր  
նայելու տրամադիր աչք ունեցողը շատ խոր-  
հուն և հնարադէտ կըլլայ : Քիչ մը մեծ բայց  
ընդհանրապէս կըրաձեւ ու դէպ յ'երկիր նա-  
յելու տրամադիր աչք ունեցողը խիստ կեղ-  
ծաւոր բայց վախկոտ քաղաքագէտ կըլլայ .  
այսպիսիք սովորաբար սակաւակեր կըլլան  
իրենց ստամաքսին տկարութենէն : Եւ եթէ

զդուշանան նաեւ սակաւակեաց : կապտագոյն կամ լու եւս է մոխրաղոյն աչք ունեցողն անհրիփւղ բայց չարասիրտ կըլլայ . և այսպիսիք մուրալու անպատկառ . նոյնպէս է աղտոտ գեղնադոյն և կլորաձեւ աչք ունեցողը . բայց կապոյտ դոյն բայց ճերմակը մաքուր և ձեւաւոր, կամ նշաձեւ աչք ունեցողները խիստ գթոստ բարեսիրտ առատաձեռն հեղահամբոյր բայց կարի հեշտասէր թեթեւահաւատ և ընդ իւր հակասեռս զուարձամէր կըլլայ :

Ընդ հանրապէս խնդուն աչքը ստախօսութեան խարէութեան ու անրարեալտութեան նշան է : Բարեսիրտ ճշմարտախօս և հանճարեղ մարդուն աչքը կըլլայ սակաւաշարժուն և պազած դժուուք :

Մարդկային աչաց այս նշաններն աւելի ՚ի ծննդենէ բնականէն բլալով մարդս կրթութեամբ կամ սովորութեամբ իր բնաւորութիւնը չարէն ՚ի բարի կամ ՚ի բարւոյն ՚ի չարն փոփոխութիւն կրած ատեն՝ բբերուն մէջի ծակափիք ու թէլանման նշաններու փոփոխութեամբն աւելի կը հասկցուի :

Եւ որովհետեւ աչքը չորս տեսակ փոփոխութիւն կը կրէ, որոց մին ներքին և բազմատեսակ է, որուն փրայ երկարօրէն պիտի խօսինք, իսկ միւս երեքէն մին պազածու-

թիւնն ու փայլունութիւնը, և երրորդը ջրուտութիւնն ու չորութիւնը, ու վերջինն աղտոտութիւնն ու մաքրութիւնը կամ պարզութիւնն է : իսկ աչաց բնական դոյներուն դալով անոնց փոփոխութիւն անդգ ալիի պէս է . և ամեն անձ չը կրնար նշմարել :

Աչաց ներքին ծակտիք կամ թելանման նշանները մարդուս մարմնոյն վրայէն անցածն ու մօտաւոր անցնին երեւելի դէպքերը կրնան իմացնել . զրօրինակ :

Եթէ աչաց բբերուն չուրջն եղած սպունքաձեւ ծակտիք նշաններու ձեւերը քառակուսի են՝ այն անձին վրայ մօտաւոր վտանգ կայ . եթէ քառակուսի նշանները դէպլյաղբիւրակ աչաց վար իջած են սնանկութեան և վերջին աղքատութեան նշան է, եթէ քառակուսի դիմն երկուքէն աւելի չէ՝ միայն սրտնեղութեան և կորուսի նշան է . եթէ մի միայն մէկ հատ տեսնուի, երկիւղի նշան է :

Եթէ յիշեալ նշանները նշաձեւ ըլլան դարձեալ վերէն դէպլյաղբիւրակ աչաց, ասի մօտաւոր ու մեծ հարստութեան նշան է, և եթէ դէպլյաղպերակ իջած չըլլայ այլ միայն վրայի կողմերը, սակաւ հարստութեան նշան է : Նոյն ձեւով երէք հատը միայն մօտաւոր աւետեաց և խնդութեան և կենաց առողջութեան նշան է : Եթէ երկու տեսնուի :

երջանիկ ամուսնութեան, եթէ մի նշանեւ ու  
անոր քով կցուած քառակուսի մը տեսնուի,  
ապերջանիկ ամուսնութեան նշան է, (և զա-  
տին, ը լաւ զննելու համար մեծ խոչորացոյց  
ապակիի մը օգնութիւնն ամենակարեւոր է):

Բիբերն անընդհատ շարժման մէջ և ա-  
նոր շուրջը շատ մը կլորաձեւ նշաններով աչք  
ունեցող մեխն իր կենացը մէջ գրէթէ տասն  
անդամ կ'աղքատանայ և տասն անդամ կը  
հարստանայ: Եւ այսպիսոյն մօտաւոր աղքա-  
տութիւնն ու մօտաւոր հարստութիւնը նոյն  
կլորաձեւ նշաններուն դիրքէն կրնայ հաս-  
կցուիլ. զորօրինակ:

Եօթը հատ բոլորաձեւ նշաններէ հինգ  
հատը շղթայի ձեւով իրարու կից բո-  
լորաձեւ նշաններուն երկու գլուխը մեկ մեկ  
նշանեւ գիծեր տեսնուին, մօտաւոր մեծ հա-  
րստութեան կամ մեծ փառաց արժանանա-  
լու նշան է: Եթէ նոյն երէք իրարու կից կլո-  
րաձեւներաւն երկու ծայրերը մեկ մեկ քա-  
ռակուսի դժեր տեսնուին, սոսկալի աղքա-  
տութեան և ցաւոց և անպատւութեան և  
նախատանաց նշան է: Եթէ վերի մեկ ծայրը  
միայն նոյն քառակուսի գիծը տեսնուի, մի-  
այն անպատւութեան և նախատանաց նշան

է: իսկ բիբերուն շուրջը շրջանակածեւ պա-  
տած իրարու կից, մեկը կլոր մեկը նշանեւ  
խառն իրարու մէջ շղթայածեւ տեսնուի.  
թէպէտ ասկաւ բայց շարտնակ և անընդհատ  
շահու և անդորր բարեկեցութեան նշան է:  
իսկ եթէ տմեն մեկ կլորներուն շղթայածեւ  
կցուած մեկ մեկ քառակուսի դժեր տես-  
նուի, շարունակ ձախորդութեան և վնասու  
նշան է:

Հոս աչաց նշաններուն վրայ միայն այս-  
շափ կը խօսինք, աւելի ընդարձակն երրորդ  
և վերջն հատորներուն մէջ խօսելու համար,  
և կանցնինք, մարդուս յաջողութեան և ձա-  
խորդութեան պատճառներուն և անոնց դար-  
մանին վրայ խօսելու:

ԳԼՈՒԽ Ե.

Մարդուս ձախորդութիւնն ու յաջողու-  
թիւնը իր երակաց մէջի արեան յատկութե-  
նէն և անոր արագ կամ ծանր ընթացքէն կը  
դոյանայ կամ անկէ կախում կունենայ:

Յաջողութեան մէջ եղող անձի մարիսնը  
եթէ զննուի, բայց նախ աչաց նշաններէն  
անոր վիճակն հասկցուելով պիտի տեսնուի  
թէ նոյն անձին բոլոր երակաց մէջ ունեցած

արիւնը բարեխառն է, և մանր երակաց մէջ արագ և մեծերու մէջ շափաւոր և կանոնաւոր յրջան կընէ : Իսկ ձախորդութեան մէջ եղող անձի մ' ընդհակառակն մանր երակաց մէջ արիւնը խիստ ծանր և մեծերուն մէջ տկար շրջան կամ ընթացք ունի : Ասի արեան ելէ քդրականութեան և տաեենչէնի զօրութիւնն է որ եթէ տկարանայ, ամենայն ինչ կը տկարանայ, և այն անձը մեկու մը հետ խօսած ատեն իր արիւնը դիմացինին հետ շը հաղորդակցիր այլ կը հակառակի, և անոր գէմքին ու աշացը վրայ շփոթութիւն կը նշմարուի, և ստեղ ստեղ իր դիտաւորութիւնը կը փոխէ . իր վատահացած ու իրեւ հաստատուն հիմն բռնած նպատակէն կը շեղի, կը տարակուսի և ալ հետ զհետէ ամեն բան սեւ ու անկարելի կը նկատուին իր աշացը մինչեւ իսկ կը յօւսահատի : Իսկ եթէ արեան մաքնիսականութեան ու ելէ քդրականութեան այս զօրութիւնն եթէ աւելնայ, մարդո 'ի տկարութենէ յաշխուժութիւն կը փոխուի, և ամեն անկարելիութիւնք դիւրին և հնարաւոր կըլլան, և ինչ որ դործէ կը յաջողի, և իրեն այնպէս կը թուի թէ ինքը դործոց բաւոք տնօրինութեան և կարգադրութեան մեկ հեղինակն է : Զի՞ այսպիսի անձին արիւնը կը մաքնիսէ որ և է 'ի դործութիւնն է անձի հետ և յարաբերութիւնները զօրաւոր կըլլան :

յաջող անձի հետ և յարաբերութիւնները զօրաւոր կըլլան :

Յաջողութեանց մէջ եղող անձ մը, առանց պատճառի անկարելի բան է որ 'ի ձախորդութեան դառնայ, մինչեւ որ արիւնը շապականի կամ իր յատկութիւնը չը կորունցնէ, և ասի ալ ուրիշ բանով չըլլար բայց եթէ հիւանդութեամբ կամ այնպիսի մեծերիւղի պատահարով, որով արիւնը կը յեղագոսիի :

Յաջողութեան մէջ եղող անձ մը պէտք է զգուշանայ զիստորաբար 'ի ցրտոյ և 'ի տօթոյ կամ օդին խոնաւութենէն ու տաքութենէն, ստամոքսը զսնազան խառն ուտելիքով բեռնաւորելն : Քանզի եթէ պատճառով մը վրան հիւանդութիւն գայ կամ արիւնը յեղափոխի յաջողութիւնը կը դադրինաեւ ակրայի ստամիկ ցաւէ որ ջղերն ուժով կը ցնցէ և արիւնը կը տկարացնէ . ուստի՝ պէտք է ակրայի ցաւն սկսածին պէս՝ անմիջապէս ակրան հանել տալ, առանց սպասելու, ապա թէ ո՛չ յաջողութիւնը կը դադրի : Ասոր նմանն է նաեւ՝ 'ի ձախորդութեան եղող անձ մը, երբ պատճառաւ մը բաւական ուժով կամ ծանրապէս հիւանդանայ և ապա առողջանայ, ձախորդութիւնն անմիջապէս յաջողութեան կը փոխուի : Եւ առանց

պատճառի ձախորդ մեկը չը՝ կրնար յաջողութիւն գտնել թէ և քան տարի միօրինաւ կութեան մէջ մնայ առանց գլխաւոր փոփութիւն մը կրելու իր աբեան յեղափոխութեան մասին :

Ինչպէս որ երկրիս զանազան մասերն երկրաշարի և ջուրց յեղեղան և այն յեղափոխութեամբ կաւերի վասն վերանորոգման կամ վերակենդանութեան, նոյնպէս ալ թըմբ րած կամ արիւնն անշարժ, այսինքն ձախորդութեան մէջ մնացած անձ մը չը՝ կրնար վերանորոգուիլ կամ վերակենդանանալ մինչեւ որ իր բոլոր երակաց մէջ գտնուած արիւնը դլասաւոր յեղափոխութիւն մը կամ մեծ փոփոխութիւն մը չը՝ կը :

Ինական փորձերով կը հաստատուի թէ ձախորդութեան մէջ եղող անձի մը ձեռքը կամ ոտքը կամ որ և է մեկ տեղը դիպուածով մը հարաւածի և 200 տրամի չափ արիւն հոսի և վերքը բժշկուի, ձախորդութիւնն անմիջապէս յաջողութեան կը գառնայ, քանզի արեան ըրջանը կը յեղափոխի, թանձը ու ծանրաշարժ արիւնը կերթայ և անոր տեղ կը յաջորդէ նոր բարեխառն և ընթացիկ արիւն, եթէ նորէն անձը պաղեցնելու կամ մեցնելու և կամ ստամփը բեռնաւորելով արիւնը ըլխանդարելու պատճառ մը չը՝ տայ:

Եւ որովհետեւ այսպիսի եղելութիւն մը պատահական կամ դիպուածական է, ուստի՝ ձախորդութեան մէջ ընկճուած մեկն առանց այսպիսի վտանգաւոր դիպուածի մը ժամանման տարիներով սպասելու, պէտք է նաև բաղնիք երթայ և չորս ժամ շարունակ քըրտընցնէ իր մարմինը, այնպէս որ մարմնոյն մորթը լաւ մը կալզանայ, և 24 ժամ ինքը զինքը պաղէն կատարելապէս զդուշացնելով հետեւեալ օրը նորէն երթայ ՚ի բազանիս և դարձեալ երկու ժամու չափ միայն քրանի, և այսուհետեւ բոլոր մեծ երակները կակուզ ձեթով ամբողջ երկու ժամու չափ շիել տայ, և այս շիման կանոնաւոր դործողութենէն անմիջապէս ետքը, իր ալ կամ ձախ թեւէն արիւն հանել այ իր մարմնոյն բնական կազմուածքի ներածին համեմատ՝ այսինքն, եթէ անձը բնականէն տկար է 80 տրամ, եթէ քիչ մուժով 120. իսկ եթէ աւելի ուժով, 200 տրամի չափ։ Եւ երէք օր հանգիստ ընէ պատապարեալ սենեկի մը մէջ մսի ջրով և հացով միայն մնանելով, և միշտ պաղէն ուստամոքսը բեռնաւորելէ զդուշանալով։ Հարկ չէ ըսել որ չորս օր յառաջ ՚ի ձախորդութեան ընկճեալ անձն անմիջապէս ՚ի յաջողութեան կը գառնայ. և ինչ որ ալ գործէ միշտ կը յաջողի առանց տարակուաելու։

Սակայն պէտք է զգուշանալ նաեւ երակաց շփման եղանակէն և մեծ ուշադրութիւն ընել հարկ է որ սոյն գործողութիւնը ոչ այնչափ ուժավ ըլլայ ո՛չ ալ այնչափ թոյլ, այլ բաւական զգալի :

Յաջողութեան մէջ եղող անձի մ'ալ պէտք է որ ստէպ 'ի բաղանիս երթալէ խորշի, կամ լաւ եւս է առանց երկար կենալու միայն մարմինը կատարելապէս ու անմիջապէս մաքրէ ու բաղնիքէն դուրս ելլայ, իրա՛ւ, մաքրութեան համար բաղնիքը կարեւորագոյն է, իսկ թէ որ քիչ մը երկար կենայ, և նեղանայ կամ աւելի քրանուի, արեան ընթացքն 'ի խանգարումն և 'ի փոփոխութիւն կը դիմէ, և անոր դարմանն ալ անմիջապէս չը՝ կրնար ըլլալ մինչեւ որ լաւ մը չը՝ փոխուի և արիւնը չը թանձրանայ կամ շրջանը չը՝ ծանրանայ :

Դարձեալ ձախորդութեան մէջ եղող անձին արիւնը թէեւ ծանրաշարժ բայց շատ ջոտ կըլլայ, և այս առաւել ջրոտութիւնն արեան մաքնիականութեան և ելք-քղ-բականութեան անդօրութենէն յառաջ կուգայ ուստի՝ արիւնը յեղափոխութեան և վերանորոգման միշտ կը կարօտի : Մարդուս արիւնը երբ յեղափոխութիւն կրելու սկսի կամ որ և է մեծ փոփոխութիւն մը կրէ, նախ մարդուս սիրու կ'ակսի բարափիլ, թէ ջրո-

տելու կամ թանձրանալու այսինքն ծանրունալու, և կամ բարութելու կամ բարեխառնուելու միառմ յայտնէ :

Եթէ մեկը նոր գործի մը միջամտիլ ուզէ լաւ կընէ եթէ նախ՝ իր անձին վիճակը քննէ, ո՞վ որ առողջ աշխոյժ և գլուխը թէեթեւ վիճակի մէջ գործի մը կը միջամտէ, (սակայն մեծ ուշադրութիւն ընելով աջ և ահեակ աչաց ստորին կոպերուն կանխազդական ցընցումներուն) այնպիսին երբէք չը՝ սիալիր իր բոլոր գործառնութեանց մէջ թէ փոքր ըլլայ գործողութիւնը թէ մեծ :

Իսկ առանց ասոնց ուշադրութիւն ընող անձ մը եթէ յաջողի իր գործառնութեանց մէջ նա արդէն 'ի յաջողութեան ըլլալով ըստ գիպաց կրնայ համարուիլ իր գործողութեանց յաջողուածքը, և ո՛չ գիտութեամբ :

Աշխարհիս վրայ շահն ու զէնը, յաջողութիւնն ու ձախորդութիւնը, երջանկութիւնն ու ապերջանկութիւնը մարդուս համար մութ և գիպուածական կամ պատահական չը՝ կըրնար ըլլալ, եթէ արեան կանխազդական օրինաց մեծ ուշադրութիւն ընելով ըստ այնմ վարուի աշխարհիս բոլոր պարագաներուն մէջ:

Եւ որովհետեւ մարդս աղատ աշխարհիկ մ'է և ինքն է միայն անոր կառավարիչն ու դեկավարը, կրնայ ըստ բնութեան չնորհած

օրինաց զինքը կառավարել իր բոլոր կենաց շրջանին մէջ առանց երբէք թշուառանալու և ուրիշին օգնութեանը կարօտելու : Արինն իր սքանչելի զօրութեամբն անընդհատ կը վարդապետէ և կը նախազդէ մարդուս բոլոր այն պատահարներուն և իր օրինաւոր կամ ատօրինաւոր ընթացքին :

Ուստի՝ մենք բնութեան այս գերազանց չնորհը ճանչելով պէտք է իբրեւ աղաս մարդու երջանիկ ապրիմք, և ոչ թէ այս մեր ճակատագիրն է ըսելով իբրեւ գերի կեանք վարեմք :

Մեր մարմնոյն կենսատուն և երջանկարան արիւնն է միայն, ուստի զանի չը վրդովելու և չը խանդարելու համար իր բարեխառն և կանոնաւոր շրջանին մէջ պէտք է ամենամեծ զգուշութիւնն անոր համար ընենք որպէս զի՞ անոր չնորհքը միօրինակ վայելեմք :

Եթէ մէկը կ'ուզէ ամեն ատեն իր բարուց ու վարուց փոփնխութիւն կրած ըլլալը նշմարել, կրնայ պարզ ու մաքուր հայելիի մը մէջէն իր աչքերը քննել կամ լաւ եւս լուսիր խոշորացոցի միջոցաւ ուրիշին դիտել տալ եթէ ինքը չը կրնար հայելցն մէջ զերը բաւ նշմարել :

Արինը մաղերուն մէջն ալ իր շրջանը կա-

ապարելով ի՞նչ որ կրնէ նուրբ երակաց մէջ նոյն փոփնխութիւնները կրնէ նաեւ հերաց մէջ . և որովհետեւ մարդուս մազերը մեկ մեկ նուրբ խոզովակներ են լի արեամբ, եթէ գլխու տկարութեամբ կամ հիւանդութեամբ արիւնը ցամքի կամ պակսի, մազերը կը ճերմին և երբ գլուխն ուժովնայ ալ գժուալը կըլլայ վերսախն արիւն լենալը : Մարդուս միտքը երբ ճանրազբաղ ըլլայ առանց գլխուհիւանդութիւն ունենալու, ըղեղաց կողման ջղերը կը տկարանան որոնք յարաբերութիւն ունին արեան մեծ երակաց թելերուն չետ . ուստի՝ նախ ըղեղաց վրայի մազերը կ'սկսի ճերմինալ նոյնպէս կըլլայ գլխու ծանր հիւանդութիւն կրող անձի մը :

Մեկէն ՚ի մեկ ճախորդութեան տագնապէ մէջ պաշարւող անձի մը ըղեղաց վրայի մազերը կրնայ ըլլալ որ 24 ժամուն մէջ ամբողջապէս ճերմին, նոյնպէս գլխուն վրայի զանազան տեղերու մազերը : Որովհետեւ արիւնը մեկէն իր շրջանէն կը խանդարի, չափազանց կը ջրոտի կամ ցամքելու միտում կաւնինայ, բայց մինչեւ մեկ ամիս նորին կ'սկսի իր առջի գոյնն ստանալ նորին արիւն լեցուելով, եթէ գործն ՚ի յաջողութիւն դառնայ : Մարդուս մազերուն բնական գոյնը մարդուս աչքերուն գոյնին համեմատ կըլ-

լայ քանդի արեանն ունեցած յատկութեանը  
պիտի համաձայնի , իսկ կապոյտ աչք ունե-  
ցողինը խիստ գեղին կըլլայ . որովհետեւ կա-  
պոյտ աչքը շատ սեւին և շատ գեղին մի-  
ջանկեալ գոյնը համարուելով արիւնն իր բնա-  
կան յատկութեան պատկերն աշացը կուտայ  
և մեկ տեսակը միայն մազերուն :

Աչքը , ֆօսֆօրական զօրութիւն ալ ունի  
իր ելէքդրականութեամբը , և այս զօրու-  
թիւնն աւելի կենդանեաց վրայ կը տեսնուի  
գիշեր ատեն . գարձեալ արեան ելէքդրական  
ֆօսֆօրականութիւնը սահուն ստեւաւոր կեն-  
դանեաց մարմնոյն վրայ կը տեսնուի , երբ  
գիշեր ատեն անոնց ստեւը շիելու ըլլաս  
թւատի՝ ֆօսֆօրական զօրութիւնն ուժով ե-  
ղող աչքը միշտ յաղթող է ամենայն մասամբ  
տկարագոյնին , և 'ի յաջողութեան եղող անձի  
մը համար շատ վտանգաւոր է ֆօսֆօրական  
զօրութիւն առաւել ունեցող անձի մը կամ  
կենդանիի մը շատ նայելը , քանդի երեք  
վայրկեան միօրինակ ակն ընդ ական հայեց-  
ուածով արիւնը կրնայ անմիջապէս յեղափո-  
խութիւն կըել իր ելէքդրականութեամբը .

կըառուի թէ՝ աչքը կամ հայեցուածքը այ-  
սինքն նաշար կրնայ զանազան գէշութիւններ  
գործել : Իրաւ է որ աչաց մեկ հայեցուած-  
քով մարմարիոն քար մ' առանց ակներեւ

այատճառի կը բեկանի , բայց ասոր պէս ալ  
աչքը կամ աչաց հայեցուածքը զանազան բա-  
րիք ալ կը գործէ որ անտեսանելի ըլլալով  
այս ետքինին վրայ ընաւ չը՝ կասուիր : Հա-  
յեցուածք կամ նարաը ուրիշ բան չէ եթէ ո՛չ  
աչաց ելէքդրականութեան զօրաւորագոյն  
հանէնիւնը , որով մեկ քանի վայրկեան շարու-  
նակ մեկ անձի մը , իրի մը կամ նիւթի մը  
վրայ սոյն հայեցուածքը միօրինակ ուղելով  
յարաբերութիւն կը հաստատէ , և անմիջա-  
պէս կը ներգործէ , այս գործողութիւնը կա-  
տարողն աչքը չէ այլ արիւնն է , քանզի աչքը  
գործիք պատկերն է արեան , և երբ արիւնն  
իր շրջանին մէջ մեկ ամենակարճ միջոց ժա-  
մանակի մը կանկ առնու՝ մի և նոյն վայրկե-  
նին ալ կը ներգործէ իր ազդեցութիւնը :

Զորօրինակ : Աչաց ելէքդրականութիւնն  
ուժով եղող մեկը երբ նիւթի մը , իրի մը  
կամ անձի մը վրայ հիացմամբ միօրինակ գիտէ  
և անոր գեղեցկութեանը կամ վայելու-  
թեանը վրայ յ'ո՛չ կամաց այսինքն չը քաշե-  
լով զարմանայ , երբ իր աչքին զարնուածն  
առաջին և նմանները գեռ տեսնուած չէ ,  
անոր այս հիացումն առանց հայեցուածքն  
անոր վրային հեռացնելու , արիւնը իր շրջա-  
նէն վայրիկ մը կը դադրեցնէ , որուն կսուի  
աչքը պաղիլ , այսինքն աչաց բիբն ա՛լ չը

խաղար, ասի նշան է, որ արեան շրջանին վայրկենական դադարման տիպը կը զարնէ աչաց . և աչքէն ալ այն իրին, անձին կամ նիւթին վրայ անմիջապէս կը ներգործէ :

Շատ անդամ ելէքտրականութեան մէջ երկու զօրաւոր աչք ունեցող անձինք կամ մին անաստոն միւսը մարդ, եթէ մէկ քամի վայրկեան միօրինակ ակն ընդ ական իրաբու աչաց մէջ հային, ասոնցմէ տկարն անմիջապէս յ'երկիր կը տապալի :

Եթէ երկու անձինք որոց միայն կամեցողութիւնը բարի, միւսինը չար ըլլայ, կամ միոյն սիրուը չը քաշող կամ չը տանող, իսկ միւսինը քաշող կամ տանող ըլլայ և այս երկու անձինք ալ իրենց աչքը ուղղեն միօրինակ մէկ իրի մը, նիւթի մը կամ անձի մը վրայ մէկ քանի վայրկեան և այս երկուքին աչաց ելէքտրականութեան զօրութիւնը հաւասար ըլլայ՝ այն անձը, իրը, կամ նիւթը ամենեւին փոփոխութիւն մը չը կրէր, քանզի անոր աղդեցութիւնը միւսը կը դիմուրէ, և աններդործելի կը համարուի: Այսպէս է նաեւ շատ մը մարդ կանց նազուը կամ աչաց նայեցուածքը, եթէ զօրութեամբ հաւասար ըլլայ աղդեցութեան մէջ :

Ահա՝ այս է որ հասարակաց կարծիք ըստածը խիստ մեծ աղդեցութիւն ունի առ

մեն թանի մէջ, քանդի հասարակաց կամ ծիք ըստածն հասարակաց կամքն է և այս կամքն ալ նոյն իսկ մարդուս սրտին արեան ներգործութիւնն է որ ելէքտրականութեան ուժով, իր զօրաւոր աղդեցութեանը կ'ենթարկէ անձ մը, իր մը նիւթ մը կ'ըն: Ասկէ է նաեւ՝ որ 'ի խորոց սրտէ անեծքն ու բանադրանքն անմիջապէս կաղղէ անձի մը վերայ, երբ այն անձն ՚ի խորոց սրտէ օրհնող մը չունի: Մէկ անձ մը տասը զօրաւոր օրհնող և հինգ ալ զօրաւոր անիծող կամ բանադրալ ունենայ իր վրայ, օրհնութիւնները միշտ կը ներդործեն և անեծքն ամենեւին աղդեցութիւն չունենար :

Հասարակաց կարծիքով պաշտօնի մը վերայ բարձրացող մեկն հասարակաց կարծիքով դարձեալ կրնոյ անմիջապէս ընկնիլ, այսպէս ամեն բան միշտ աննեթիզմի զօրութեամբ: Քաղքի մը մէջ անպետ մէկը որ սխալմամբ պիտանի կարծուելով խել մը մարդոց սիրար դրուած և պաշտօնի մը բարձրացած է, այս անձը թշնամիներ, կամ մաս մը չուզողներ ունենայ, ասոնք՝ չեն կրնար իրենց անենիչ աղդեցութիւնը անոր վրայ բանեցնելով զանի պաշտօնէ ձգել երբ իրել մը մարդիք ալ անոր վրայ բարի կամք ունին: Ուստի՝ այս անձն ընդհակառակն ա-

Եւի եւս կը բարձրանայ . Աղդեցութիւնն ,  
հասարակաց կարծեաց ընդհանրանալուն  
կամ հանէնէնդ զօրանալուն վրայ կը կայանայ :

Այսպէս է նաեւ՝ երբ մեկն անկիրթ քաղ-  
քի մը մէջ , ընտիր գեղեցիկ բայց նշանաւոր  
բան մը կը գործէ , զորօրինակ գեղեցիկ և  
պիտանի չէնք մը կը կառուցանէ , կամ հա-  
սարակաց բարւոքման կամ կը թութեանն  
համար ձեռնարկութիւններ կընէ : Սակայն  
նոյն քաղքին ու գիւղին բնակչաց մեծա-  
դոյն մասը զանի չը տանելուն համար այն  
անձին վրայ ընդ ակամի կը նային որով ի-  
րենց սրտի և աչաց հանէնէնդ աղդեցութիւնը  
բանեցնելով անոր վրայ , կը տապալեն և ա-  
նոր գործը կը խանդարեն , կամ նոյն անձին  
տունը կը մարեն : — Իսկ եթէ ընդհակա-  
ռակին անոր վրայ լաւ աչք ունեցողները  
շատ ըլլան՝ նոյն անձին գործերն աւելի եւս  
կը բարւոքի և լաւ աղդեցութիւն կը կըէ :

Ասոր համար ամենայն ոք պէտք է զդու-  
շանայ չըտես ու անկիրթ քաղքի մը կամ  
գիւղի մը մէջ նշանաւոր բան մը ընելէ , ա-  
պա թէ ոչ անմիջապէս կը կործանի կամ կը  
վտանդի : Իսկ ընդհակառակին կիրթ քաղքի  
մը կամ գիւղի մը՝ ուր բնակչաց մեծադոյն  
մասն աղնիւ և բարի սիրտ կը կըէ , հոն եթէ  
մէկը նշանաւոր գործի մը ձեռնարկէ շուտով

և անմիջապէս կը բարւոքի և կ'երջանկանայ:  
Ասոնց բարոն ալ սրտէ յաչս եղած հանէնէնդ  
զօրութեան արդիւնքն են :

Եթէ մէկը խիստ գեղեցիկ կամ ճարտա-  
բախօս է և հարկն այնպէս կը պահանջէ որ  
չը տես տեղ մ'երթայ , լաւ կընէ եթէ իր  
գէմքին մէկ քովը քիչ մը մելան կամ մուր  
քսէ , որպէս զի չը տես աչաց ուշադրու-  
թիւնն այդ մելանին կամ մուրին վրայ գառ-  
նայ և այն անձը չար աղդեցութիւնէ վրկուի:

Արտառոց բան չէ՝ կապոյտ որուննութը որ  
կը գործածեն նորաշէն բայց գեղեցիկ տան  
մը վրայ , կամ գեղեցիկադէմ մանկան մը  
գլխուն վրայ , թէպէտ և խնդիրը որուննութէն  
վրայ չէ՝ բայց կապոյտ գոյնն աչաց հանէնէնդը  
մասամբ իւիք արգելող է : Նոյնպէս է խիստ  
կապոյտ գոյն ունեցող աչաց հանէնէնդը որ շատ  
զօրաւոր է և խիստ քիչ միջոցի մէջ անմիջա-  
կան աղդեցութիւն կընէ :

Աշխարհիս այս կիսակրթեալ վիճակին մէջ,  
մարդիկ չար աղդեցութիւնէ վրկուելու հա-  
մար , զանազան անձանց հետ յարաբերու-  
թիւննին ընդարձակելու կը պարտաւորին .  
և ասկէ զատ ուրիշ զօրաւոր միջոց չը կրնար  
բլլալ , հըւայը որունն վէտ ուամկօրէն կարծիքը  
բոլորսկին թիւր և սխալ է :

Դարձեալ արեան յատկութեանց և հան-

գամանացը վրայ դառնալով՝ կարեռ կը համարիմք ուրիշ մէկ քանի դիտողութիւններ ընել արեան զօրանալու կամ տկարանալուն մասին :

Ի բնութենէ զօրաւոր արիւն մ' առանց պատճառի չը կրնար տկարանալ և այս պատճառն անոր տուողը նոյն խոկ արեան տէրն է կամ արիւնը կրող անձն է : Ամենայն ոք կամ անսասուն իր անձը զանազան եղանակաւ վարժեցոցած է, և եթէ միջոց մ'իր այս միօրինակ սովորութենէն շեղի, զորօրինակ եթէ մէկն իր անունը կամ զինքը պատող հագուստը փոխէ, և կամ իրեն անյարմար կլիմացի մը ներքեւ փոխադրուի, իր արիւնն անմիջաւ պէս փոփոխութիւն կը կրէ և կ'սկսի ջրոտիլ եթէ տակաւ առ տակաւ ազդէ, և բորբոքիլ եթէ խառիւ ազդէ, և ահա այսպիսի տկարութենէ յառաջ կուդան պլշկող հիւանդութիւնները : Պլշկող տեսակ հիւանդութիւններէն ոչ ոք կը պլշկի, մինչև որ արիւնը տկար, ջրոտ կամ բորբոքեալ չըլլայ, որով հիւանդին արեանը կը հակամիսի : Կառի թէ առողջ մէկն անմիջապէս հիւանդութիւն կրնայ առնուլ ախտացեալ կամ հիւանդացեալ մեկուն մերձենալովը, ասի ծուռ և սխալէ, քանզի անկարելի է որ արեան չըլլանը կանոնաւորութեան մէջ ունեցող անձ

մ' այս տեսակ հիւանդաց մատչելով պլշկի : Առողջ մեկ մը մինչև որ չը գախնայ կամ չը քանի, որով արիւնը չը յեղափոխի բնաւ չը պլշկիր : Խակ երբ մեկուն երկիւղէն կամ քանելէն կամ սաստիկ գինովութենէն և կամ աւելի մաելէն արեան շրջանը խանդարի՝ տաւրակոյս չը կայ որ պիտի պլշկի : Ծանր ու գէշ հոտ ունեցող հիւանդի կամ հիւանդաց քով առողջ մեկն երթայ ու չը քանի կամչը վախնայ, բնաւ բան մը չըլլար քանզի արիւնն իր շրջանին մէջ չը խանդարիր :

Երբեմն երկիւղալի լուրերն ալ մարդուս արիւնը կը յեղափոխեն որով մարդա զանազան տեսակ հիւանդութեանց ենթակոյ ըլլալէն զատ մինչև իսկ գերեզմանն ալ կը մնայ, մւստի՝ վախնալը, գարշիլը, մարդկային աղատութեան և անվեներութեան դէմ ակարութիւն ըլլալով՝ ոյսպիսիք պարտիս իրենց աղատութիւնն ու անվեներութիւնը ճանշել և փոփոխի տկարութեան դերութենէն և անոր վնասակար հետեւանքերէն :

Մանկամարդոյ մը կամ երիտասարդի մը : Ճերացեալ անձի մը հետ բավէք քով պատկելլ կամ մեկ բանի ժամեր ննջելը, նոյն մանկամարդոյն կամ երիտասարդին արիւնը կը տկարացնէ և ընդ հակառակն ծերացեալը կը զօրացնէ, քանզի ելկու մարմաց ներմութիւն

Նը կը չափաւորի և երկուքին արեանց զօրութիւնը կը հաւասարի: Ձերմութենէ կը պատճառի ելէքդրականութիւնը և այսպիսով երիտասարդին արեան զօրութիւնը մաքնիսական օրինօք ծերացելոյն կ'անցնի, մինչև որ երկուքին ալ արեանց զօրութիւնն հաւասարաչափի:

Այսպէս է նաև առանց ախտի նոր վախճանեալ ծեր մը վայրկենական միջոցի համար վերակենդանացնելու եղանակը:

Երբ մեռեալ ծերն 'ի հիւանդութենէ կամ յ'ախտէ մը մեռած չէ՝ այլ բնութեան վերջ տալով՝ այսինքն արեան պակսելէն կեանքը գագրած է, տակաւին երակները բոլորովին չը՝ առած, 18—20 տարեկան ըստ սեռին երիտասարդի մ'արիւնն յ'աջ կամ յ'ահեակ թեւերէն յ'երակէ յ'երակ առանց դրսէն օդ տալու արեան, երիտասարդէն 100 տրամի չափ արիւն՝ մեռելցին երակաց մէջ անցնել տալով մեռեալը կիսակենդան կըլլայ, և կտկոի խօսելինչ որ պիտի խօսեր կամ կուղեր խօսիլ մեռած ատենը և մոքին եկածն հաղորդել և իրեն եղած հարցմանց գոհացուցիչ պատասխաններ տալ:

Թէպէտեւ այս կիսակենդանութիւնը վայրկենական է քանզի նոր զգեցած արիւնը քիչ ըլլալէն զատ բնականէն ունեցած արեան

պէս չը՝ իրնար շրջաններ ընել կիսակենդանոյն երակացը մէջ:

Վերն ըսինք թէ երիտասարդ մը կամ մանկամարդ մը ծերացեալ անձի մը հետ նընջելով կը տկարանայ և անոր պատճառն ալ ցցուցինք, Ասիոյ մէջ մեծ հայրերն այսինքն հաւերը կամ մեծ մայրերն այսինքն մամիկներն որք ծերացեալ են և իրենց թոռները շատ կը սիրեն, առվորութիւն ըրած են մեծաւ մասամբ իրենց փոքրիկ թոռներնին իրենց անկողինն ընդունելու ՚ի նշան սիրոյ, Եւ առվ որք աւելի արեան չերմութեան կամ ելեքդրականութեան զօրութեան կը կարօտին կը շահին, քանզի այս եղանակաւ թէպէտ և կեանքերնին քիչ մ'ալ կերկարի, բայց տղեկը տկար՝ բնականաբար ալ վատառողջ կը մնանի: Ուստի՝ տղոց հայրերն ու մայրերը պէտք է զգուշանան, որպէս զի տղայքը և երիտասարդք զատ զատ անկողինց մէջ ննջեն, և մնասակար հետեւանքներ յառաջ չը գայ:

Շատ տեղեր դայեակ կամ բար ըսուածներն ալ այս յոռի սովորութիւնն ունին որով մնուցած տղաքնին տկար և վատառողջ կընեն պատճառն իրենք ալ չը՝ գիտնալով:

Այս ճիւղէն կը համարուի նաև սորնառաց համար եղած անուշադրութեան հե-

տեւանքը, երբ աղջիկ զաւակ ծնող սմնտու  
մը մանչ զաւկի մը կաթ կը չամբէ և իր աղ-  
ջիկային կաթովը կը մնուցանէ, նոյնպէս ալ  
մանչ զաւակ ծնող սմնտու մը, աղջիկ զաւկի  
մը կաթ կը չամբէ և իր մանչային կաթովը  
զանի կը գիեցնէ:

Ասոնք բնութեան մէջ հակասութիւններ  
են որ պէտք է ուշադրութիւն ընել, և ման-  
չային կաթը և անչուն և աղջկային կաթն աղ-  
ջկան տալ:

Ապա թէ ո՛չ սնուածոց բնութիւնն ու ա-  
րիւնը կը պատուաստի, և երբ պատուաստի,  
՚ի բնութենէ ստանալի ուժն այլայլած կըլլայ  
և այնպիսի տղայ մը եթէ մեծնայ երկոտ և  
թանձրամիտ կըլլայ, որովհետեւ երկուռ  
բնութենէ պատուաստեալ է. ինչպէս են հա-  
կասառ պատուաստեալ բուսոց կամ ծառոց  
զօրութիւնն ու տկարութիւնը:



### ԳԼՈՒԽ Զ.

Արեան ելէքդ բականութեան կամ մաքնի-  
սականութեան գործող առարկան կամ կան-  
խազդեցեալ գործիքը թէ կըետ մարդուս աշ-  
քըն է միայն, սակայն բնութիւնը՝ մարդուս  
կազմակերպութեանն այնպիսի դիրք մը շը-

նորհած է որ մարդու իր կրած անշփոթ արեան  
շնորհիւը թէ յարթնութեան և թէ ի քնոյ  
կրնայ իր ներկայ և մօտաւոր ապագայ վիճակն  
իմանալ, յարթնութեանն իր աշաց կանխազ-  
դած ցնցումներովը կամ նշաններովն ինչպէս  
որ վերը բացատրած եմք, և ի քնոյ իր մոտց  
մաքնիսականութեան կամ երեւակայական  
պատկերին շնորհիւ : Քանզի մարդուս միտքն  
ալ ելեքդրական կամ մաքնիսական կարո-  
ղութիւն ունի առեալ յարենէ, բայց երբ  
աչքը պաշտօն կը վարէ, իր այս պաշտօնը  
կը պակսի, և միմիայն յիշողականութեան  
պաշտօնը կընայ վարել, այսինքն մարդուս  
բածը կամ տեսածը միայն կրնայ յիշեցնել  
և անկէ անդին չը կրնար անցնիլ, և այն ալ  
երբեմն տկար եղանակաւ, ահա՛ ասոր համար  
է որ մարդիկ իր մը կամ եղելութիւն մը, կամ  
պատմութիւն մը իրենց յիշողութեան հրա-  
ւիրելու համար կամ աչքերնին անուշադիր  
տեղի մը փրայ կուղըն և կամ բոլորովին կը  
դոցեն որպէս զի աչքն իր ելեքդրականու-  
թեան զօրութեամբը կարենայ նոյն միջոցին  
մոտց օդնել, և մարդկային յիշողութիւնն  
ուժովցնել : — Խոկ ՚ի գիշերի այսինքն ՚ի  
քնոյ մարդուս, որովհետեւ աչքն ա՛լ պաշտօն  
մը չունենար, ուստի միտքն այն ատեն մար-  
դուս արեան ելեքդրականութեան և մաք-

Նիսականութեան բոլոր զօրութիւնն իրեն կը դրաւէ և երեւակայական պատկերաց միջոցաւ, մարդուս կ'երեւացնէ կամ կը ներկայացնէ, ինչ որ մօտաւոր միջոցի մէջ պիտի գոյ կամ պիտի պատահի, և ահա՝ ասոր համար, մեր այս դերքը երկու ճիւղի բաժնած եմք, այսինքն աշաց միջոցաւ կանխազդածոց համար վիճակահանի, և մտաց երեւակայական միջոցաւ կանխազդածոց համար երազահանի: Ուստի՝ կ'ակսիմք նախ վիճակահանութեան վրայ, որուն պատճառն արդէն բացադրած եմք:

### ՎԻՃԱԿՍՀԱՆՈՒԹԻՒՆ

Մարդու իր վիճակին կամըստ հին փիլիսոփայից բազգին ներկան և ապագան կառնույար' նենէն յա՛ս, և աչքէն ալ իր յայտնած նըշաններէն, ինչպէս որ խօսուած է, ուստի քանի՛ որ մարդուս աչքը մաքնիսական զօրութիւնն ունի, կրնայ նոյն մաքնիսական զօրութիւնն աչքէն դէպ՚ի ուրիշ նիւթի մը վրայ երկնցնել և աշաց կամ մտաց կանխազդելիք զօրութեան մասն այն նիւթին, իրին, կամ մէկ նշանագրին տալ, որոց աչքը կամ մարդուս նայեցուածքը միօրինակ ուղղեալ է, և այս կերպով նոյն մաքնիսացեալ իրը, կամ նիւթը, և կամ նշանագրիը, ո՛չ թէ աշաց

և մտաց պէս կատարեալ, այլ անոնց հարիւրին վաթսունիչափ զօրութիւն կրնայ յայտնել: Աշխարհիս բոլոր պարագաների վիճակները կը ցցնենք մենք՝ ի դիւրութիւն վիճակահանից և կը դնեմք 196 վիճակախօս հատուածներ որուն 98ը արու սեռի և 98ն ալ էգ սեռի կը պատկանի, և պէտք է որ մին միւսին հետ ըը շիմթի:

Եւ որովհետեւ ոսկորն աչքին զօրութիւնը և մարդուս չիղերը ըը տկարացնելով մաքնիսական զօրութիւն ընդունող նիւթ մ'է, ուստի կառնումք լաւ յարդուած և ողորկած ըլլայ, փոքր ոսկորի կտոր մը, ինչ ձեւով որ ըլլայ, և վայրկեան մ'աչքերնիս շարունակ անոր վրայ ուղղած, աջ ցուցամատնիս անոր վրայ ուժով մը կը քսեմք, և ապա աչքերնիս գոցելով նոյն մատերնիս անմիջապէս հետեւեալ պատկերին վրայ կը պտտցնեմք դարձեալ վայրկեան և ապա պտտցնելը կը դադրեցնեմք. կը բանամք յայնժամ աչքերնիս, և կը կարդամք այն թուանշանին համար յատկացեալ հատուածը որուն այսինքն նոյն թուանշանին վրայ ցուցամատերնիս կեցած է, այն է ահա՝ նոյն անձին վիճակը:

Ներկոյ վիճակացոյց աղիւսակն ամենայն ոք մի միայն ենք, և իրեն համար կրնայ

դործածել իր ցուցամատին միջոցաւ, և ու  
բիշի համար, կամ ներկայ չեղող մեկուն  
նպատակին համար դործածելէն՝ շփոթու-  
թենէն ուրիշ արդիւնք մը յառաջ ը՞ դար:  
Եւ ո՛վ ար վերսնշանակեալ եղանակաւ իր  
մինակին իմանաւ կուզէ, պէտք է ՚ի սկզբան  
դործողութեան իր բոլոր ուշադրութիւնն ու  
նպատակին իր վիճակին զբայ դարձնէ :

---

1	2	5	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	50	31	32	33	34	35
36	37	38	39	40	41	42
43	44	45	46	47	48	49
50	51	52	53	54	55	56
57	58	59	60	61	62	63
64	65	66	67	68	69	70
71	72	73	74	75	76	77
78	79	80	81	82	83	84
85	86	87	88	89	90	91
92	93	94	95	96	97	98

Ժամանակէ մ՛ ՚ի վէր քու սրտիդ մէջ նեցութիւն և անհանգստութիւն կայ , և ի՞նչ բան որ ընես քեզի ձանձրոյթ կը պատճառէ , սիրտդ կը նեղանայ , բան մը կընես և ետքը կը զղջաս անմիջապէս , քուն քնանալ կը սիրես բայց կանոնաւոր քուն չունիս , քու արինդ քիչ մը ջրոտած է , զանի նորոգելու կարօտութիւն ունիս , այնպէս կը կարծես որ շատերը քու վրադ ընդ անկամք կը նային բայց այդ շատ կարծածդ խիստ քիչ է , դու դինքդ աներկիւղ կը ցցնես բայց բաւական երկու ես , և ձայն մը լսածիդ պէս սիրտ թունդ կենէ , մէկ քանի անձանց քու չորիքդ հասած է , թէ և քիչորի ալ բարիքդ , ատեն ատեն կուրծքիդ քով փոքրիկ ցաւ մը կ'զգաս , քու կենացդ մէջ 6 երջանկութիւն և 5 ապերջանկութիւն ունիս , այսինքն յաջողութիւն և անյաջողութիւն , և երջանկութիւն վրայէդ անցեր է առանց անոնց յարդը ճանչելու , և 3 ալ ապերջանկութիւն այսինքն ձախողութիւն անցուցած ունիս քու կենացդ մէջ , երկու անձերէ վիշտ և երկիւղ կըեր ես , հեռացի՛ր ոսկորներն հաստ և սեւաշեաց

անձանց հետ ստեղ յարաբերութիւն ունենալէ , քանզի քու արիւնդ այնպիսեաց հետ ըլ . յարմարիր .

---

2

Քու ծնունդ-դ լու է , և 12 բաղդ կամ յաջողութիւն և 1 ալ վտանդ կամ ձախորդութիւն ունիս քու կենացդ մէջ , սակայն ցաւալի է որ քու կենացդ յարգը չես դիմար , բազդիր կամ յաջողութեանդ ութը զլրեք անցեր են , որոնց երկուքը խիստ մեծ և երջանկաւէտ , բայց դուն զանոնք մերժեր ես , չըս ալ ձախորդութիւն կամ վտանդ անցուցեր ես որոնց սկզբնապատճառն արդէն դուն եղած ես : Ի մօտակայս ունիս մէկ յաջողութիւն մը և այնու հետեւ յաջորդող երէքն առջնէն աւելի մեծ են , այս առաջին յաջողութիւնը սեւաչեայ և սեւ մաղերով անձի մը միշոցաւ պիտի մօտենայ քեզ , ճանչցի՞ր անոր յարդը , քու ապագայ շ վտանդներդ թեթեւ են , և երկու թշնամիներդ աւելի բան մը չեն կրնար ընել քեզ , խոհեմութիւնը ըրէ քու բոլոր դործոցդ մէջ և քիչ մը հեռացիր ունայնասիրութենէ , քանզի քու ու-

նայնասիրութեամբդ , քեզի ներկայացած բազդ-երդ ունակով ըրէր , քանզի դուն նշանաւոր պիտ՝ ըլլոցիր , մէկ մ'ունիս որուն հետ յաճախ կը աւեսնուիս , այս անձէն քեզի օդուատ մը չը կայ , և դուն՝ պէտք է անոր դործերէն նշմարես քու բարիքդ կամ չարիքդ :

---

3

Դու բաւական դժուարութեամբ մեծ ցած ես և ՚ի ժամանակիդ մանկութեան չորս մեծամեծ վտանդներ անցուցած ունիս , դուն ամեն ատեն անու շաղիր ես քու բոլը դործոցդ և ընթացքիդ մէջ , և ներկայէն զատրան մը չես խորհիր , սակայն ան ալ չաւ չես խորհիր : Սովորութիւնը ըրէ նախ լաւ խորհելու , և այնպէս խորհածդ ներկային վրայ մի կեդրոնացներ այլ գէտ յառագան դնայ : Քու ընթացքդ և քու դործդ շուտութիւնը վերցներ , այլ պէտք է քիչ մը ծանր ընթանաս դործոց մէջ , և ամեն որոշմունք մէկէն ՚ի մէկ չընես , քանզի քու բնութեանդ լաւ չը դար : Դուն ասկէց Յ ամիս առաջ բազդ , մը փախուցիր , որ քեզի խիստ մօտեցէր եր , թէ և ուրիշ մ'ալ պատճառ եղաւ

այն փախուստին, սակայն գլխաւոր պատճառը դուն կը համարուիս որ չը՝ կը ցար լաւ խորհիլ անոր վրայ : Երկու բաղդ կամ յաջողուած ալ ունիս գալու բայց նայէ՛ որ անոր առջեւէն գալու թշնամի առաջնորդները խոհմաբար վանես և այն բաղդերը ձեռք ձբքս : Գու բնութեանդ. մէջ ոչնչօշունէն կայ և ահա՛ այս պատճառաւաւն է որ ուրիշի հետ լաւ յարաբերութիւն չես ունենար, դուն խիստ քիչ բարեկամ ունիս, և չատերը քու զբաղ համարում չունին, ասոր ճարն ալ քու ձեռքդ է : Բնութիւնդ. փոխէ կեանքդ ու վարքդ ընկերական ըրէ՛ որ բազտաւորուիս ապա թէ՛ ո՛չ աշխարհին գեղեցկութիւնը տակաւին չես կրնար հասկնալ և վայելել ինչպէս որ ց'արդ չես հասկցած :



## + 4

Հաստ ինքնահաւան և հպարտ մեկն ես, և ինքը զինքդ խելացիի տեղ դրած ես, ընդհակառակն անպիտան մ'ես խելացի անձանց քով, ըրածիդ դուն կը հաւնիս սակայն ուրիշները չեն հաւնիր, քու այդ ինքնահաւանութեանդ. պատճառաւ շատերուն ատելի

Երեցած ես, քեզի համար մօտաւոր ձախորդ դութիւն մը կը տեսնուի, որուն պատճառը քու ինքնահաւանութիւնդ է : Ատեն ատեն Աբիստոտել կը ձեւանաս բայց չխտակն ըսելու համար կատարեալ իմաստակ մ'ես և այն աստիճան ամբարտաւան որ իմաստուն անձանց խօսքերուն կամաւ խոնարհիլ չես ուղեր : Դուն երկու շողոքորթ ունիս որոնց մէկը միւսէն առելի յաջողակ և ճարտար է, դուն միայն անոնց հետ կախորժիս առաւել բարեկամութիւն ընելու, քանդի անոնց շողոքորթութիւնը թէ և կլլուելու բան չէ՛ սակայն քու երակներդ կը զալացնէ և դուն կը փառաւորուիս : Անմի՛տ, չես գիտէր որ անոնք դուրս ելածնո՞ւն պէս զքեզ չարաշար կը ծաղրեն և զքեզ իշու տեղ կը դնեն : Փոխէ՛ այդ բարքդ ու վարքդ որ ուրիշն առջեւ նախատելի չըլլաս, քանզի քու վերջդ թշուառ կը տեսնուի : մեկուն փոքր բարիք մ'ընես քու փառքիդ համար կընես և կը փափաքիս որ բարերար ճտնցցուիս և աղեկ զուրցուիս, և ընդհակառակն մատի ծայր կը բախտուիս :



Քու բնաւորութիւնդ շատ լաւ ու գովելի է , գիտեմ որ բաւական պիշտ կրած և քու բարի բնաւորութեամբդ համբերած ես , խիստ մօտ է քու բաղդդ և 'ի մօտ ժամանակի շատ ուրախ և երջանիկ պիտ' ըլլաս , սակայն՝ բնաւորութեանդ համեղութեանը և կակզութեանը պատճառաւ մեկ քանի չարաբարց անձինք զքեզ կամին որսալ , և վերջապէս դուն չը՝ պիտի որսացուիս : Քու բաղդդ այնչափ մեծ է որ եթէ բնաւորութիւնդ քիչ մը խիստ բլար , նշանաւոր հարուստ մը պիտ' ըլլայիր , բայց փոյթ չէ , խիստ շատ հարուստ մի՛ ըլլար , այլ բաւական հարստութեամբ երջանիկ անձ մը պիտ' ըլլաս , և շատերն ալ քեզի հետ ուրտիս և խնդակից պիտ' ըլլան , դուն շատ գթուու և աղքատասէր ես , սակայն կը սիրես նաեւ քու հակասեռիդ ընկերութիւնը , և անոնց հետ զուարճանալ կը փափաքիս , առ ալ յոռի չէ , քաղաքակրթութեան մէկ մեծ առաջոյն է , և այսպիսի անձինք քեզի պէս ընտանեսէր կը լան , մի՛ փոխէց ուրեմն բնաւորութիւնդ քանզի բարութիւնը քեզի հետ է , բայց չափդ մի՛ կորանցներ և ըստ չափուդ ձեռնոտու եղի՞ր ուրիշն , որ քեզմէ կ'ակնկալէ : Քու ընտանիքդ մեծ երջանկու-


թիւն պիտի վայելէ , և ալ բնաւ վիշտ և ներզութիւն չը պիտի ունենաս :

Ատեն ատեն պաղյաներ և կարճ միջոցով օդափոխութիւնները քեզի համար օգտատակար են , քանզի կուրծքիդ մէկ քովը փոքրիկ ցաւ մ' ունիս որ բաղմազբաղ ժամանակիդ քեզ կ'զգացնէ , ասի անզբազութեամբ և օդափոխութեամբ միայն կը փարատի :

Երկու ծածուկ թշնամի ունիս որ քեզի ընդ ակամիք կը հային և որք քու բարութիւնդ ալ վայելած են , լաւ կընես եթէ շողոքորդաց ընթացիցն ու շադրութիւն ընես , քանզի դուն արդէն շողօքորդներէ բնաւ չես ախորդիր : Բարի է և շատ լաւ քու ճամբագ , ամենեւելին մի՛ վհատիր :


Շատ յամառ և պինդ զլուխ մեկն ես , և ահա՛ քու այս յամառ բնաւորութեամբդ բաւական կորուստներ ըրիր , հիմայ ալ նորէն ուրիշ բան մը ձեռնարկել կը խորհիս թէ և ուրիշին բան չես ըսեր , սակայն արդ ձեռնարկութիւնդ ալ չար է և անօդուտ , փորձառու և խելացի անձանց խորհուրդին բնաւ

շես անսար, այդ ի՞նչ որ միտքդ դրած ես նոյնն  
ընել կուզես, եկու տե՛ս որ բաւական բաղ-  
դաւոր ես, եթէ չըլլայիր՝ կամ խիստ քիչ  
բաղդ ունենայիր, շիտակն ըսեմ՝ աւուր հացի  
կարօտ մէկը պիտ' ըլլայիր: Քու ընտանիքդ  
քու այդ բնաւորութեանդ համար քեզմէ  
դոհ չէ՛, ինչպէս որ շատերն ալ: Տանդ մէջ  
տաղտկալի կեանք մ'ունիս, և եթէ կուզես  
որ շիտակն ըսեմ՝ քու ընտանիքդ իբրեւ քու  
գերիդ կը նկատես: Քու վերջդ շատ լաւ չէ՛,  
մինչեւ որ քու այդ բնաւորութեանդ լաւ ա-  
դոյն դարման մը չը՛ մատուցանես: Ասկէց  
զա՛տ դուն աղտոտ և գարշելի ձեռնարկու-  
թեան մէջ ալ կը դտնուիս, կարծելով թէ ու-  
րիշներուն անծանօթ կը մնայ, սակայն մարդ-  
կային ընկերութեան մէջ քու զդուելի վար-  
մունքդ նկարագրուած է, այսպէս գիտցի՛ք  
և ասոր ճարը նայէ:



Քեղի պէս շարասիրտ մարդ շատ քիշ կը  
դտնուի, քու նախանձութիւնդ այն աստի-  
ճան մեծ է, որ ուրիշին վրայ տեսնուած փոք-  
րիկ բարիք մ'աղեկութիւն մը բնաւ շես տա-  
նիր, կուզես որ ամեն ոք կործանի և թըշ-

նւառանայ ու դուն միայն աղէկ ըլլան ։  
Փառք տո՛ւր որ բաղդը քեզի օգներ է, բայց  
մի յուսար որ հանդիստ պիտ' ընես, այլ  
շատ թշուառ և ողորմելի պիտ' ըլլաս: Դուն  
արդէն կիսով չափ հեշտութեանդ զոհ դա-  
ցած ես, և եթէ չես նեղանար, քու բնա-  
ւորութեանդ մէջ սրիկայութիւն ալ կայ,  
աղքատի վրայ դութ և ինամք չունիս, եր-  
բեմն ՚ի փառս մարդկան ցոյցեր կընես, բայց  
հանրութեան մեծագոյն մասին քու վրադ-  
ունեցած գէշ գաղափարը քեզի շուտով պիտի  
հալեցնէ՛, ինչպէս որ դուն քու ինչքդ ՚ի  
սրիկայութեան կը հալեցնես, և կը կարծես  
որ անհատնում է: Դուն լքեալ ես մարդ-  
կային ընկերութենէ, և մէկ քանի գաղափա-  
րակիցներէղ ՚ի զատ բնաւ բարեկամ և վրադ-  
լաւ խօսող չունիս: Բաւ վարքդ և ընթացքդ  
ուրիշներու չար օրինակ չըլլալու համար լաւ  
իսկ կընես եթէ՛ յաշխարհէս փոխիս: Եթէ չե՛ս  
ուզեր կամ չը՛ պիտի կընաս վարքդ ՚ի բա-  
րին ուզեր:



Մօտակայ բարութեան նշան մը կը տես-  
նեմ քու վրադ և դու ամենեւին վիշտ տա-

ռապանք և նեղութիւն չունիս, մի միայն քու գրոշումներդ հաստատուն չեն, այլ շատ անդամ կը տարակնաւիս, իրաւ է որ փոփոխամիտ չես, սակայն պէտք եղածին չափ ալ հաստատամիտ չես :

Ըստանիքդ և բարեկամներդ քու երեսէդ պիտի խնդան, փորձութիւն և ձախորդութիւն քեզմէ հեռացած է : Քու կենացդ մէջ վեց անդամ նեղութիւն և վտանդ հասած է վրադ, ա՛լ մի երկնչիր . վտանդից և նեղութեանց վերաբերեալ բան մը չունիս : Հիմակու հիմայ փոքրիկ արտմութիւն մ' ունիս ան ալ յ'ուրախութիւն պիտի փոխուի քիչ ժամանակի մէջ. և այսուհետեւ քու դորձերդ միօրինակ յաջող պիտ' ընթանան :

Ըստանեացդ վրայէն կարեւոր եղած խրնամքդ մի պակսեցնէր . բարութիւնը միշտ քեզի հետ է, մարդկութիւնն առաջնորդ անեցի՛ր և մարդկային ընկերական պարտառզութիւններդ կատարէ' . քու վրադ փառակրութիւն մը պիտի գայ, նայէ որ զանի վռնտես և անոր դերի ըըլլաս, որպէս զի ապագայ յաջողուածոյդ արդելք մը չըլլայ և չը վնասուիս :

Շատ ծանծաղամիտ և ապուշ մէկն ես, անիմաստ և անողէտ խօսքեր կընես, շատ խօսիլը կը սիրես, քանզի՞ դատարկախօս ես : Շատերը վրադ կը խնդան և դուն քու ծանծաղամութեանդ և դատարկախօսութեանդ ճարը չես նայիր . քեզի վերաբերեալ չեղած բաներուն միջամտութիւն կընես, և ողողիկ կիյնաս : Դուն դորձի մարդ չես, եթէ շետակը կ'ուզես իմանալ դուն աշխարհիս վրայ բեռ. մը կընաս սեղուիլ : Բազդին չնորհօքն ապրող մեկն ես : Հանճար չունիս որ անով յառաջանաս . ուստի՝ լաւ կընես եթէ ըսածներէս կարմրելով կատարելութեանդ դարմանը մատուցանելու ջանաս : Հինդ վտանդ և կորուստ ունեցեր ես մինչեւ ցարդ և եօթն ալ բազդ, որոնց մեծագոյն մասը քեզմէ հեռացեր է քու դատարկախօսութեամիտ և ծանծաղամութեամիտ : Երէք բազդ կամ յաջողուած ալ ունիս յապագայս, բայց շատ կը վախնամ որ այս գայիք բազդ երեն ալ պիտի մերժես : Կը սիրես նաեւ բամբառանքը, թէպէտ դուն չես զգար, քանզի վարժուած ես . բայց գիտոյի՛ր որ բամբառաղն ինք ալ կը բամբառուի և աւելի շարաշար, կոյր ներ-

մեռանդութիւն կամ մոլեռանդութիւն ալ  
ունիս և աս ալ քու ծանծաղամտութեանդ  
մեծ մեծ ապացոյցն է :



Շատ բաղդաւոր անձ մ'եռ և քու առաջ  
դայդ շատ գեղեցիկ և երջանիկ է, սակայն  
բնաւորութիւնդ քիչ մը շտապողական է, ու  
բով և համբերութիւնդ ալ քիչ. կուզես որ  
ամեն բան շուտով գործադրի, բայց այդ  
շուտ գործադրութիւնն ամեն բանի համար  
չէ, և առանց լաւ մը խորհելու բան մը չու-  
րոշուիր, ապա թէ ո՛չ ըստ ինքեան եղած  
կըլլայ, եթէ գուն քու մեծ բաղդաւորու-  
թեանդ հետ համբերութիւն ալ ունենայիր  
խիստ նշանաւոր մեկը կրնայիր ց'արդ ըլլալ,  
բայց և այնպէս փառք տուր որ բնութիւնը  
զքեղ շատ բաղդաւոր ըրած է: Քիչ ժամա-  
նակի մէջ երկու անձերէ մեծ բարիք պիտի  
ստանաս, որոնք զքեղ շատ կը սիրեն, աս  
օրերս ամենափոքր նեղութիւն մ' ունիս որ  
շուտ պիտ' անցնի, և ալ բոլորովին վտանգէ  
և 'ի նեղութեանց աղատ ես: Դուն ընտա-  
նեաց արժանաւոր հայր պիտ' ըլլաս, և քու

ընտանիքդ ալ քու բաղդակից պիտի  
ըլլան. մի՛ վախնար, յաշողութիւնը քեզի  
համար է, ամեն արդելքներու շուառվ պիտի  
յաղթես. բաւական է որ քիչ մ'ալ միր ըլ-  
լաս ու չը՛ ձանձրանաս որ և է գործէ,



Շատ կասկածոտ բնաւորութեան տէր  
մէկն ես, ամեն բանի վրայ կը կասկածիս  
նաեւ անձիդ վրայ ալ, սրտիդ մէջ երկիւդ  
ալ կայ և սյսպիսով չես կրնար յառաջ եր-  
թալ, քու բնաւորութենէդ ընտանիքդ բնաւ-  
քեզմէ գոհ չէ, շատ անդամ գործի մը ձեռք  
զարնել ուղած ատենդ կը շուարիս կը մնաս,  
եթէ չես նեղանար թուլամորթութիւն ալ  
ունիս, կասկածանացդ հետ կը տնտենաս ալ  
ատիկայ ընկերական կեսմնք չէ, շատերը  
ձանձրացած են քու բնաւորութենէդ. դուն  
կուզես որ ամենուն ըրածն ու խօսացն իմա-  
նաս և ուրիշը քու ըրածդ բնաւ չ'իմանայ,  
ատեն պտեն ընտանեացդ. նեղութիւն կու-  
տաս և կը վշտայնես, ատի՝ մարդկութեան  
գէմ մեծ յանցանք մ'է, և այդ յունի բնա-  
ւորութիւնդ պէտք է որ 'ի բարին փոխես  
անմիջապէս: Յառաջակայս երկու վտանգ ու

նիս անցունելու և այնուհետեւ Յշաջողութիւն և բազդ պիտի գայ քեզի, բայց քու կասկածութ բնաւորութեամբդ անոնց երկուքին յարգը չը՝ պիտի կրնաս գիտնալ, և պիտի հեռացնես քեզմէ: Մէկը կայ որ քեզի լաւ բան մը կառաջարկէ և դուն կասկածներ ըներով այդ առաջարկութիւնը թէ և չես մերժեր բայց կերկարածես: Գիշերները շատ հանդիստ նինջ չունիս կասկածը քեզի միշտ կը նեղէ: Ասոր համար քու ծերութիւնդ շատ երջանիկ չը՝ պիտի ըլլոյ, մինչեւ որ այդ փուճ կասկածները չը՝ վանեա քեզմէ:

12

Շատ կեզծաւոր ու շողոքորթ մէկն ես, շահուդ համար անարժան անձանց քով զանազան շողոքորթութեամբ կը խոնարհիս և այնպէս կը կարծես որ աշխարհի մէջ ապրելու կամ ստակ շահելու միակ միջոցը շողոքորթութիւնն է. բայց այդ գրութիւնը որխալ է, կեզծաւորութիւնը թէ և տեսակ մը քաղաքակրթութիւն կամ քաղաքավարութութիւն է սակայն ան ալ չափ ունի, չափն անցուցածիդ պէս դէմինդ կը կասկածի և

կը զարհուրի, գուն ահա՛ մարդիկ զարհութեցնելու կամ կասկածեցնելու չափ շողոքորթութիւն կընես, ժամանակի մը սեւին ճերմակ և ետքը ճերմակին ալ սեւ կըսես: Անշան բնաւորութիւն մ'ալ ունիս որ մարդու բնաւ չես հաւնիր: Մարդու պատիւ արատաւորելն ալ կը օփերես, քանզի շողոքորթութեան մէկ ճիւղն ալ ասէ: Միշտ փառասէք և բարձրահայեաց անձանց հետ յարաբերութիւն ընել կ'ուղես, և անոնք ալ քու շողոքորթութիւններդ իբրեւ ծեփողողականութիւն միայն մտիկ կընեն, այս պատճառաւ բարեկամ չունենալէդ 'ի զատ՝ բաւական թշնամի ալ ունիս: Գիտեմ ապագայ պատրաստել կուղես բայց այս եղանակաւ չը՝ պիտի կարենաս ընել, քանզի ժամանակը փոխուածէ և մարդիկ շողոքորթներէ հեռի կը փախչին, դիտցի՛ր և բնաւորութիւնդ փսխէ՛ որ կարենաս ապագայ պատրաստել:

13

Դուն աշխարհի օրինաց հետեւող մէկն ես, այսինքն ո՛չ մէկուն դէշութիւն կընես ո՛չ ալ աղեկութիւն, ուստի՝ մարդկութեան

օրինաց պարտազանց կը դանուին , ագահուաթիւնդ ալ բաւական ճանբայ առած է , և օր ըստ օրէ աւելնալու վրայ , սակայն մօտերս կորուստ ընկեց կը նշմարեմ քեզի համար , զդոյշ եղի՛ր երկու շատախօս անձինք ներէ որոնց հետ կը տեսնուիս և որոնց միւ ջոցաւ գուրը պիտ' ընկնիս : Ընտանեայդ զրկողութիւն կընես որուն հետեւանքը դէշ է , դուն յոռի և զզուելի դործ մ'ալ ունիս հեռի ՚ի մարդկային ընկերութենէ , ատի քեզի ախտ մ'եղած է , որմէ սրբուիլդ քու փրկութեանդ մեծ օգուտ ունի , ընտանեացդ վրայ ունեցած սէրդ նուազէ : Քու վախճանդ ընտանեաց ցաւ չը պատճառելէն ՚ի զատ՝ անոնց ապագայն պիտ' անդորրէ : Եւ այսուհետեւ քու կենացդ մէջ դուն դրէթէ բաղդ չունիս , քանի որ այդ բնութիւնը քու վրադ է , քանզի բաղդը պիտի դայ ու քեզմէ փախչի : Քուն աւելի կը սիրես միայնութեանց լուռ ժամանակ անցնելը քան թէ ընտանեաց մէջ զուարճանալ և ընկերութեան մէջ մտնելը որովհետեւ քու բնութիւնդ մերամղոս է , ուսմունք և կրթութիւն քեզի համար չեն , քու կեցութիւնդ կը նմանի անոր որ առանց բան մը դործելու շարունակի իր մահուանը կ'սպասէ : Քուն աշխարհը ապականողներուն և չորցնողներուն կարդէն

Ըլուղովդ , լաւ կընես եթէ յաշխարհէս վու խիս , որպէս զի՞ քու սեղդ պիտանիները գան և աշխարհն յառաջ երթայ :



## 14

Բարի և բարեսուեր մարդ մ'ես , բայց քիչ մը մոլեռանդ , եթէ այդ մոլեռանդութիւնը մեկդի թողուս խիստ շուտով և շատ յառաջ կ'երթաս , քանզի դլուխդ հաստ չէ և կըրթութեան միտում ունեցողներէն ես . զիստեմ կը սիրես քու ընտանիքդ բայց լու չես խնամեր ինչպէս որ անկ է . քիչ մ'ալ նախապաշարում ունիս , որն որ քու յառաջադիմութեանդ մեծ արդ ելք եղած է : Ծածուկ խոսքերէ շատ կ'ախորժիս , բայց զիտցի՛ր որ աշխարհիս վրայ ամեն բան յայտնի դործելը գովելի է . քու բնաւորութիւնդ որովհետեւ բարի է , մի՛ վհատիր . միայն վանէ վայէդ նախապաշարումը և յայտնապէս դործէ այն բարենպատակ դործերը , որ դաղսնի կուզես դործել : Ուրախ եղի՛ր բայց շարունակ աշխատէ՛ քու ապաց սոյդ խիստ բարի է , և քիչ ժամանակի մէջ զանազան բարիքներ պիտ-

տի վայելես : Յ'արդ եօմը վտանդ անցուցած ես , և ալ չունիս , քու առջեւդ հետղիետէ Յ յաջողութիւն կամ բաղդ կայ , որոնց մեծագոյն մասին պիտ' արժանանաս : Նայէ՛ որ ընտանիքդ լսւ խնամես , և բնաւ չը վշտացնես , քանզի քու և ընտանեացդ բաղդը միացած է : մօտ օրերս աղեկ լուր մը պիտ' ընդունիս : Առողջական վիճակիդ մէջ պահառութիւն կայ բայց հոդ ընելու բան մը չէ կրնաս կատարելապէս բժշկուկլ մի միայն օդափոխութեամբ և ո՛չ ուրիշ բանով :

15 \*

Դաղանային բնաւորութեան տէր մեկն ես , նախ՝ թէ անբարոյական ես ՚ի ծածուկ և ինքըինքդ բարոյականի տէր անձ մը ծախել կուղես . Երկրորդ՝ թէ որկրամոլ ես : Կարճ խօսքով հեշտասիրութեանդ զոհ եղող մէկը . դուն մարդկային բոլոր ընկերութեանց վտանդաւոր մէկը կը համարուիս , անոր համար ընտանեկան և մանկական ընկերութեանց ցանկին մեջէն քու անունդ որբուած պէտք է ըլլայ : Քու անդ թութիւնդ և անձ

նասիրութիւնդ վերջին ծայրն հասած կրնայ ըսութիւն : Ծնտանիքդ քեզի խիստ պաղ աչօք կը նային , քանզի քու գաղանային բնաւորութիւնդ լաւ նշմարած են : Ծնտանեացդ պիտոյիցն համար կարի ագահ և մարմնոյդ հեշտութիւնն յադեցնելու համար շատ շույլ ես , քու կեանքդ թէկ երկարատեւ չը պիտի ըլլայ , ինչպէս որ այդպիսի բնաւորութեանց տէր եղողներունը , սակայն լաւագոյն չը կրնար ըլլալ որ շուտով բնաւորութիւնդ փոխես և աղատիս այդ գաղանային ընթացքէն որպէս զի՝ կեանքդ երկարի և ընտանիքդ ազ երջանկանայ , ի մօտակայս վտանդ մը կամ փորձանք մ' ունիս անյնելիք , այն է ընչից կորատեան հետ խայտառակութեան փոշանք մը , և այդ փորձանքը քեզի հիւանդութիւն պատճառելով՝ մեծամեծ ծախուց և վասառուց գուներ պիտի բանայ , շուտ ըրէ՛ այս և ասոր նման վտանդաւոր արկածից առաջքն առնելու համտը , բնաւորեալ ախտիցդ բժշկութեան ճարը մտածէ՛ և աղատէ յամենայն տառապանաց :

Մեղք որ բաւական բաղդեր ալ անցեր են քու վրայէդ , և տակաւին դալիք մէկ բաղդ մ'ալ ունիս բայց այդ բնաւորութեամբով տարակուսեիլի է անոր արժանանարէ :

ԵՇԵ քիչ մ'ալ աւելի ուսում է քաղաքակովթութիւն ունենայիր մարդկային ընկերութեան մէջ նշանաւ որ մէկը պիտ' ըլլայիր, բայց դարձեալ տրախ եղի՛ր որ քու քաղցր բնաւորութեամբդ. պիտի յառաջանաս, քանզի բնութիւնը քեզի հանճարաւոր ըրած է աշխատէ՛ որշափ որ կրնաս, շւտ և դիւրաւ օդուտներ կը քաղես. ընտանիքդ քու երեսէդ պիտի խնդայ և երջանկանաց : Քու վրայէդ երէք բաղդ անցած է բայց հինգ ալ ուրիշ բաղդեր կամ յաջողութիւններ ունիս ապագային մէջ, և անսնց և ո՛չ մեկէն պիտի զըրկուիս : Քու բարեկամներդ խիստ շատ են, քու անունգ միայն լող և քեզի հետ յարաբերութիւն չունեցողներն անդամ քեզի բարի կը կամենան : Ո իսյն երէք թշնամի ունիս որ զքեզ չեն տանիիր, բայց դուն համերերով զդոյշ կեցիր միայն անոնց կողմէն փշուած հովերուն և երբէք մի՛ վախնար, ընտանիք մը կայ որ անընդհատ քու վրադ կը խօսի, բարի նազատակի մը համար, այս ընտանիքին հետ յարաբերութիւն լնելը քու պատոյդ ու ապագայիդ մեծ օդուտներ կը բերէ :

Քու բնաւորութեանդ մէջ քիչ մ' առանձ,

նակեցութիւն կայ, որ մարդկային ընկերան կան օրէնքէն կը հեռանայ, իրա՛ւ է, որ առանձնա՛եցութիւնն ալ ի՛սօդ տակարութիւնն անի, քանզի մարդու իր հանդարատ ու միայնիկ ատենին մէջ լաւ կրնայ մատածել, սակայն խիստ քիչ միջոց մը միայն բաւական է, իսկ անկէ աւելին մարդու տակաւ առ տակաւ ՚ի մերամազնառութիւն կը տանի : Աս օրերս ուրախառիթ լուր մը պիտի հաղորդուի քեզ, և առ ժամեայ ունեցած վոքրիկ արամնաթիւնդ շուտով պիտի վարաւախ :

Բնութեանդ մէջ արդեցութեան մեծ յօժաքութիւն և սէր կայ, այն աստիճան, որ կարծես թէ բագոսի սերունդէն սերացած մէկն ես, բնաւորութիւնդ շատ խիստ է, քանզի՛ գառն ես և ընտանեացդ համար անտանելի : Ծատ իս մարդ ըսուելու արարած մը չե՛ս, քսնդի նախ թէ՛ զգ այսում չունիս, երկրորդ, թէ՛ կրթութեան հոսն անդամ չես առած . երրորդ, թէ՛ ընտանիք մ' ինչ ըսել էն տակաւին չես գիտեր. քանզի ընտանեկան կենաց վրայ գաղափար մ' անդամ

չունիս : Ի վերայ այսր ամենայնի ցաւալին  
առ է որ կրթուելու և ըստկարելցն մարդկու-  
թեան լցո ընդունելու դիտաւորութիւն և  
կամք ալ չունիս , և մի միայն քու ընթացքիդ-  
հաւներ ես . կը փափաքիմ որ քեզիպէսները  
շուտավ հեռանան յաշխարհէս , որովհետեւ  
քեզի պէս զգացում չունեցող մէկը կրթեն  
անտանելի ծառայութիւն մ'է . կը ցաւիմ որ  
աչք ունիս , ու չես տեսներ , ականչ ունիս  
ու չես լսեր , բերան ունիս . բայց բեր-  
նէդ ելածը մարդու մը բերնէ ելած չ'են  
սեպուիր . կուզես ասոր ճարը դանել , ե-  
թէ երկար ու մարդու պէս անլրիլ կուզես ,  
նախ՝ հերքէ՛ բադոսին նախահայրութիւնը ,  
և ցած ու քիչ խօսելու վարժեցուր ինքնա-  
քըդ , և այնուհետեւ կ'սկսին միաքդ և աչ-  
քերդ բացուիլ , և կիմանաս ու կը տեսնես  
թէ մարդ ըսուելու արժանի մարդիկ ի՞նչ  
կընեն ի՞նչպէս կը վարուին աշխարհիս մէջ ,  
գուն ալ անոնց կը հետեւիս , և այս եղանա-  
կաւ կընաս ըլլալ միայն աշխարհիս վրայ եր-  
կարակեաց ու մարդկանց կարգ էն մարդ մը:  
Ապա թէ ո՛չ քու վախճանդ մօտ և թշուառ  
կըլլայ :



Սիրտդ շատ փափուկ և զգայուն է , բայց  
երկշոտութիւնդ ալ գրէ թէ վերջին աստիճան  
քու մարդասիրութեանդ նմանող քիչեր կը  
գտնուին , քու բնաւորութիւնդ տկար է ,  
քունդ թեթեւ է և քիչ , օդափոխութիւնը  
քեզի մեծապէս պիտի նպաստէ , և երկշո-  
տութիւնդ ալ պիտի չափաւորէ , քու ապա-  
գայիդ մէջ շատ բազգեր կամյաջողուածներ  
ունիս , որոնց մեծագոյն մասը պիտի վայե-  
լես . սրախդ մէջ թեթեւ բարախում մը կայ  
որ ատեն ատեն քեզի կ'զգայն է , և ատոր  
ալ բուն խակ պատճառը քու երկշոտութիւնդ  
է , այս ալ մի միայն օդափոխութեամբ՝ մի-  
անդամայն և չ'ը վախճալու վարժութեամբ կը  
փարատի . քու ընտանիքդ քեզմէ շատ գոհ  
է , և դուն ալ մեծ սէր ունիս անոր վրայ .  
Դուն պաաճառ պիտ' ըլլաս քու ընտանեացդ  
երջանկութեանը : Բու այդ փափուկ և  
զգայուն բնաւորութիւնդ պէտք է չափա-  
ւորել քանզի առեւտրական աշխարհին մէջ ,  
(գլխաւորաբար ՚ի տաճկաստան) այդչափ  
շատ փափուկ և զգայուն բնաւորութիւնը  
օդատակար չ'ը կրնար ըլլալ : Կը վախ-  
ցուի թէ չարասիրտ և վարպետորդի ան-

ձինք իրենց վիճակը ցաւողի և ձեռնտուութեան արժանի ներկայացնելով զքեղ պատուց հանդիպցնեն , ուստի՝ պէտք է միշտ զդուշութիւն ընել այսպիսեաց չը զհուելու համար . քննել նախ անոնց ծշրիփ վիճակը , և ապա արժանաւորաց ձեռնտու ըլլալ ըստ կարսղութեան :



Հպարտութիւն մը կը հշմարեմ քու վրադ , թէեւ գուն այնպէս կարծեցնել կուզես թէ քնու հպարտութիւն չունիս . կուզես որ ամեն բանի մէջ քու կամքդ . և քու կարծիքդ յարդուի . ասկէց զատ ինքինքդ խելացի կարծելով բանի մը աեզ դրեր ես , և ծեփողական շոշուքորթութենէն ալ բաւական կախորդիս . կ'ախորդիս նաեւ՝ ուրիշ մը պակտութիւնը ճական անոր վրայ , որպէս թէ գուն պակտութիւն մը չե՞ս գործեր , և անսխալ ես . երբեմն ասոր անոր ըրած բարերարութիւնդ և ձեռնտուութիւնդ ամենեւին արժէք մը չունի , քանզի նպատակդ մարդապիրական չէ՝ այլ խօսուելու և փառաւորուելու համար , իրաւէ որ

նըրիշին զէն մը չունիս , սակայն յանա՛ որ արք ժանաւորաց ընելու ձեռնտուութիւնդ և բարերարութիւնդ ՚ի վերոց տանեաց չը՝ քարոզուի , որպէս զի քեզմէ բարութիւն ընդունողն ալ չը՝ վշտանայ , և քու գործդ մարդկութեան առջեւ ընդունելի ըլլայ երկու վտանդ ալ ունիս գալու տուանց յիշելու անցեալ վէցն՝ որոնք բաւական զգացուցին քեզ , սակայն այս ապագաները թեթեւ են մի՛ վախնար : Հպարտութիւնդ շափառքէ՛ ապա թէ ո՛չ քու վրադ գալու չորս մօտակայ բաղդերը կամ յաջուածները շուտով կը հեռանան քեզմէ : Մէկ մ'ունիս շուզոքորթ որյածախ անոր հետ կը տեսնուիս , ասի քու հպարտութիւնդ առաւել եւս կը զօրացնէ իր անձնական շահուն հտմար : Այս անձէն քեզի զէն կայ և ո՛չ օդուտ , ուշադրութիւն ըրէ՛ և հեռացնէր զանի քովէդ և բոլոր ուշադրութիւնդ ընտանեացդ վրայ գարձուր , քանզի պորկեշուութեան ճանրէն խոտորեցնող առաջնորդ ու կը մօտենայ . ըզ գոյշ կեցի՛ր և ասոր գարմանը շուտով մատո՛



Արտաքին երեւոյթդ սրտիդ չը՝ համապատասխաներ , քանզի շատ խարերայ և

խարդախ մէկն ես , ինքը զինքդ բարեգործ  
և ճշմարտախօս կլլեցնել կուղես , բայց 'ի  
մօտակայս մեծաւ խայտառակութեամբ պիտի  
խայտառակուխս , եթէ այդ ընթացքդ շա-  
րունակես : վարպետորդի մը կայ , որ քու-  
խարէութիւններդ և խարդախութիւններդ  
չաւ գիտնալով՝ քու այդ տեսակ մէկ դոր-  
ծիդ կ'սպասէ մէկ ամոէ մ' ի վէր և դքեղ  
հուշակաւորապէս խայտառակելու պատրաս-  
տութիւններն ալ արդէն հովացած է , քու  
բարիքդ ու չարիքդ քու ձեռքդ է , կուղես  
նէ խայտառակուէ . քու վրայէդ տասն ան-  
գամ վասնդ այսինքն ձախորդութիւններ ան-  
ցան և գու չզգաստանալով որ ըստ օրէ կար-  
ծես աւելցուցիր քու խարդախս և խարէական  
ընթացքդ . վեց անգամ ալ բաղդ կամ յա-  
ջողութիւններ անցած են վրայէդ բայց բնաւ-  
անոնց յարդը չե՛ս դիտցած . կը վախնամ  
գարձեալ որ ասպագայիդ մէջ գալու չորս  
բազդերան կամ յաջողուածոց չը՛ պիտի կըր-  
նաս արժանանաւ : Ընտանեացդ քով երբէք  
համարում չունիս , անոնք ալ քու այս բնաւ-  
որութիւնդ լաւ հանչերով քեզմէ զզուած  
են . քու կեանքդ յուսահատական է չանա՛  
դքեղ ուղղել ժամ յառաջ :

Շատ ապուշ մարդ ես , և ամենեւին արթ-  
ութիւն ըստած բանը չունիս , կը ցաւիմ  
քու վրադ , քանզի քու այդ ապուշ և ան-  
միտ բնաւորութիւնդ զքեղ ընտանեկան փա-  
փաքելի կեանքէն զրկած է , բայց լաւ գի-  
տեմ որ գուն այնչափ չես զգար , և անփոյթ  
ալ ես : Քիչ մը ականչ տո՛ւր , տե՛ս , գուրսը  
քեզի համար ինչե՞ր կըսեն , այս ի՞նչ անպի-  
տան ապուշ մարդ է որ չը՛ կընար իր . . . .  
կառավարել : Գու ապրուսադ քու հանձա-  
րովդ չէ , քանի հանձար չունիս , այլ մի մի-  
այն բաղդին բերմաւնքն է որ շուտով կը մեր-  
կացնէ զքեղ , և կը թշուառացնէ , խելքդ  
դլուխդ ժողմէ՛ քու տունդ կործանման վի-  
ճակին մէջ մանել սկսած է , արթնցի՛ր և շու-  
տով առաջքն ա՛ռ այս կործանմանը : Ճախքդ  
չափաւորէ՛ , նաեւ հիւրընկալութիւնդ , և  
եթէ գժուար կը թուի ի՞մի հարուած կա-  
տարել որ պարա է , փոխագրէ ընտանիքդ  
ուրիշ տեղ մը , քանզի այդ անստհման ծախ-  
քը , և հիւրընկալութիւնը քու պատւոյդ և  
ընչիցդ արատ պիտի բերէ , և քու կործա-  
նումդ ալ անկանդնելի պիտ' ըլլայ :

կը գիտամ քու վրադ : որ ժամանակէ մը  
՚ի վէր ընտանեացդ գրէթէ գերին եղած ես,  
իր առ է որ գուն գէշ մարդ չե՛ս, ուսկայն այլ  
մարդ չե՛ս : այլ շատ ժէ ու բնաւորամբիւն ու-  
նիս, հետեւաբար զործելու մէջ ալ թէ շատ  
աշխատող, բայց անկարող . քանզի այսպէս  
վարժուած ես . շատ անդամ՝ կը փափաքիս  
ճարպիկ անձանդ պէս ըլլալ, բայց չես կա-  
րէր, և կուզես զիւրին և շուտ եղանակաւ  
շահիլ, և ընտանեացդ գերիաբար ծառայել:  
նիւթական վիճակի ալ լաւ չէ, և գրէթէ  
միշտ մատանշութեան և հեծեծանաց մէջ.  
մինչեւ անդամ գիշերները հանգիստ քուն  
չունիս . բայց ո՛վ ինչ ը՞է, յանշանքը միշտ  
քուկդ է որ զքեզ ճոխ ցցուցած ես ընտա-  
նեացդ, և ապա գերի ըլլալու պարաւորերւ :

Բաղդը կամ յաջողութիւնը միշտ քեզմէ  
հեռի կը պաբար, թէ և ապադայիդ մէջ մնձ  
վատանդ մը շունիս, բայց կեանքդ ցաւալի է .  
եթէ քիչ մը ինքը զինքդ չ'սմափիս, և գե-  
րութենէն աղասելու ճարը չը՛ նայիս : Քու  
պարիդ մէկ քովն եղած ցաւն ալ որ երբեմն  
զքեզ կը նեղէ՝ քու այդ ողորմելի վիճակիդ  
արդիւնքն է որ պիսի զրանայ օր ըստ օրէ  
եթէ տակաւին շարունակես :

կը տեսնեմ որ գուն վերջին ասախճանի  
ծոյլ և դանդաղ մէկն ես և զիւրին գոյ ծեր  
• կը վնառես շահերու համար, և միորինակ  
զէն կընես, որովհետեւ զիւրին դործերն  
անգամ գանդաղութիւն և ծուլութիւն չեն  
վերցներ . շատ անդամ հաշիւներաւդ մէջ կը  
սխալիս, և անչափ գանդաղ ես, որ հա-  
շիւդ ուղղելու աշխատութեանդ համար վրադ  
սրտնեղութիւն և թուլութիւն կուգայ, ժա-  
մանակէ մ'ի վեր է միտքդ միայն անդա-  
գար կը հոգնի, և զիւրին միջոցաւ շահե-  
լուդ եղանակին վրայ մասնաւոր օրէնքներ  
և եղանակիներ կը բնաւես, բայց տակաւին  
չե՛ս գտած : Երբեմն միտքդ օդտակապ և  
շահաւետ բաներ և գործոց եղանակիներ կը  
ծնանի, բայց մէկ մէկ պատճառաւ չես կըր-  
նար անհնցմէ օդուատ քաղել . և դանդաղա-  
ցեալ մէջքդ շակել : Երեք բարիք կամ բաղդ  
ունին ՚ի մոտակոյս, բայց այս բաղդերուն  
կամ յաջողուածոց արժանանալու համար  
ժրութիւն, զդուշութիւն և արթնութիւն  
կ'ուզէ, ապա թէ ո՛չ անոնց հակառակին  
կ'արժանանաւ . և բողորովին կը յուսահատիս

Բաղդին ամենամեծ մէկ յաջողուածը մօտենալու վրայ է քեզի , չըլլայ թէ անդգուշութեամբ անոր յարգը չը' ճանչես , սեւ մազերով մէկը պիտի ներկայանայ քեզի կարի շատախօս , ամենենին յարաբերութիւն մի՛ ըներ անոր հետ , քանզի ասի քու բաղդիդ թշնամին է . քու շահաւորուելու եղանակի քեզի համար շատ աղէկ է , չըլլայ որ գաղափարդ փոխես , ապա թէ ո՛չ մեծ կորուստ կընես : Քու բնաւորութիւնդ աղէկ է բայց քիչ մը հեշտութիւն կը սիրես . այնչափն ալ փոյթ չէ՝ մարդու քաղաքակիրթ և ընկերական ըլլալու համար առաջին և միակ միջոցն է , սակայն մեծ դդուշութիւն և խոհեմութիւն պէտք է չափը չանցնելու . քու ապագայդ շատ երջանիկ է , և ինչպէս դուն ընտանեացդ վրայ , մեծ սէր կը յայտնես , նոյնպէս ալ ընտանիքդ քու վրադ չափազանց սէր ունի : Բնութեանդ մէջ շատ մտածել չունիս , բայց գործոյդ եղանակին վրայ բռնի մտածել կուզես , և ինքը զինքդ մտածելու վարժեցնել . սակայն քու մտածմունքդ վայրկենական է և բնաւ տեւողական չը' կընար ըլլալ , հետեւաբար շտա մաածելու ալ պէտք մը չունիս :

Ի՞նչ ամբարտաւան մարդ ես , չես գիտէր որ ամբարտաւանից կորուստը մօտ կըլլայ . քանզի մարդկութեան թշնամի կըլլաս , և մարդոց կարծիքն դքեզ կը տապալին կը կործանեն : Երէք մեծ վտանդ անցուցի՛ր ու չը կըմուեցար , բայց չորսորդ մը կայ որ պիտի գայ , և անոր գալուստն ահեղ է քեզի համար : Եօթը բաղդ կամ յաջողութիւն ունեցար բայց անոնց կեանքը սակաւատեւ եղաւ քու այդ ամբարտաւանութեանդ համար . շտա մարդիկ քեզմէ կը խորշին , բաց ՚ի մէկ քանի լուացողներէ ուրոնք իրենց շահուն համար կը քծնին , բայց ծազը կընեն : Քու սիրոդ վերջին ծայր գէշ է , և արդէն երեսէդ ալ կը յայտնուի ինչ յոռի բնաւորութեան տէր ըլլալդ : կան ամբարտաւաններ որոնք ուրիշին գէշութիւն չեն ըներ , բայց գուն մինչեւ անդամ մարդու տուն քակելը խղճիդ չը' դոչիր , քանզի խիղճ չունիս , շտաերուն անէծքը կայ վրադ և շուտով տակնուվրայ պիտ' ըլլաս , և այն աստիճան խեղճ ողորմելի պիտ' ըլլաս որ դքեզ ճանչցողներն ուշ պիտի ցաւին քու վրադ : Քու բարոյականդ ալ խանդարուած է , աղէկ կընես եթէ շուտով յաշխարհէ :

փոխիս , քան թէ կեանք վարելով մէկ քանի  
տուն աւելի քոյքոյես : Խոնարհէ՛ և զղա-  
ցի՛ր մարդկութեան առջեւ , որ մարդկու-  
թիւնն ալ զիջանի և ներողամիտ ըլլայ քեղի ,  
ապա թէ ո՛չ շուտով կորար . նախ ՚ի թշուա-  
ռութիւն և ապա ՚ի մահ :



Ի՞նքը զի՞նքդ հանճարեղ և գործունեայ  
կը ծախես , սակայն պարապ մարդ ես .  
Փեղի պէս մարդիկն ստակ չեն արժէր աշ-  
խարհի առջեւ , արդէն ինչ ըլլարդ գործքե-  
րէդ ալ յայտնի է . Եթէ քննուի , ի՞նչ փուն  
մարդ ըլլարդ գուն ալ կը հասկնաս , Սակայն  
զարմանալին սա է որ բնաւ ուրիշին խելքին  
չես հաւնիր , և զիմայինդ տղու և անխելքի  
տեղ կը գնես : Անխոհեմաբար չորս գործի  
ձեռնարկեցիր և չը՛ յաջողեցար , հիմայ հին-  
գերբորդի մը ձեռնարկել կը խորհիս . բայց  
՚ի զուր , քանզի պէտք է որ նախ խոնարհիս  
միտքդ որես , յիշ մը լցու ունենաս և ապա  
գործոց ձեռնարկես որպէս զի կարենաս յա-  
ջողիլ . զուն , զիտեմ , ժամանակ մը յուսա-  
հատեցար , և քու յուսահատութիւնդ ուրիշի

չը՛ յայտներու նպատակաւ , անոր անոր զա-  
նաղան գանդաաներ կընէիր , ի՞նչ հարկ , այդ-  
գանդատուր քեզի քու անձիդ ըրէ՛ , որ բաղեր-  
կուգայ քանի՛ քանի՛ անդամ գուռդ ափ  
կառնէ և դուն քու անհանճարութեամբդ-  
ու անդործունէութեամբդ գուռ չը՛ բանա-  
լէն զատ՝ բաց գուռդ ալ բաղդին դէմ կը  
դոցես . ահա՛ երկու բաղդ կամ յաջողուած  
ալ ունիս դալու բայց տեսմեմք որ անոնց  
դէմ ալ անմտաբար չը՛ վարուիս :



Դու նշանաւոր մէկը պիտ ըլլաս ընկերա-  
կան աշխարհին մէջ , ջանա՛ որչափ հնար է  
ուսմանց և զիտութեանց պարապելու , քան-  
զի քու ապադադ ուսմամբ և զիտութեամբ  
միայն պիտի բարուքի , և ո՛չ ուրիշ կերպով .  
շատերը մեծ յոյս ունին քու զրագ և զքեզ  
շատ կը սիրեն , և իրաւ ալ սիրուելու ար-  
ժանի մէկն ես , կը սիրես բարութիւնը և  
կասես չարութիւնը , կը սիրես նաև հա-  
կասես ընկերութեանց մէջ զուարծանալը ,  
բայց չըլլայ որ չափն անցնես , այդ ընթաց-  
քըզ չափառը է , կը սիրես նաև աշխատիլ

լաւ զգենուլ և պատուաւոր կեանք վարել ;  
 բայց աշխատութեանդ մէջ քիչ մը պակա-  
 սութիւնն կը նշմարեմ , եթէ արդ պակա-  
 թիւնն ալ լրացնես բոլոր բարիք դրէթէ քե-  
 զի համար են , քանզի բաղդդ շատ զօրա-  
 ւոր է և ո՛չ այնչափ հեռի , այն առեն քո-  
 ամեն ձեռնարկութիւններդ դիւրին և յա-  
 ջող պիտի ըլլան . ընտանեացդ մեծ հոգ և  
 ինամք աար որչափ որ կրնաս , քանզի ա-  
 նոնք մեծ սէր ունին քու վրադ , և քու ա-  
 պագայ բարութեանդ մեծագոյն մասն ալ  
 անոնցմովէ : Մի՛ վախնար , բնաւ վտանդ  
 կամ կորուստ մը չունիս ապագայիդ մէջ ,  
 սակայն խոհեմութիւնը միշտ քեզի առաջ-  
 նորդ ունեցիր որ բնաւ չսխալիս :



Դուն մարդու երես ենելու բան չե՞ն .  
 նախ և առաջ մարդ չե՞ս , եթէ մէկը սիրտդ-  
 քննէ՝ քեզի համար մարդ է չըսէր այլ գա-  
 զան մը , դուն ինքզինքդ չերմեռանդ ծա-  
 խելով ամեն ապուրը կուտես առանց խղճի ,  
 քու ինչ տեսակ ըլլալդ քիչ քիչ երեւան ել-  
 նել սկսած է , դուն զզուելի և գարշելի բը-

նաւորութիւն կամ ախտ մ'ալ ունիս որ 'ի  
 ծածուկ կը գործես , և կը կարծես որ մարդ  
 չը դիտէր , ասոր համար քու գաղանային  
 հեշտութիւնդ կամ ցանկութիւնդ շուտով  
 ճակտիդ վրայ պիտի դրոշմուի , և պիտի  
 խայտառակիս և մարդոց առջեւ երես չը  
 պիտ' ունենաս և քու չերմեռանդութեանդ  
 դարշելի պտուղը պիտի տեսնուի : Կորիր  
 ընկերական աշխարհին առջեւէն : Մեղք որ  
 բաղդը ժամանակաւ քեզի նորաստած է :  
 Լաւ իսկ է որ կորնչիս շուտով քան թէ  
 մարդկային ընկերութեանն ապականիչն ըլ-  
 լաս : Քու կորուստդ խիստ մօտ է և գուն  
 չարաչար պիտի մեռնիս 'ի մէջ թշուառու-  
 թեանց , և յանտանելի խղճութեանց : Եթէ  
 ըլ փութաս այդ սոսկալի ախտը նախ վրայէդ-  
 քառնալ սիրտդ մաքրել գաղանային բնաւո-  
 րութիւնդ . 'ի մարդկային բնաւորութեան  
 փոխել : Քանզի լաւ զիտցիր՝ որ այսպիսի  
 սոսկալի բնաւորութեան դերի եղողներն  
 ընդհանրապէս չերմեռանդ երկիւղած և մո-  
 լեռանդ կըլլան :



Շատ սիրուն և ընտիր անձ մ'ես , բայց  
անխոհեմ ես և շտապիչ ՚ի գործս , երբեմն  
առանց մտածելու և առանց գործին խողը  
թափանձելու մեկէն ՚ի մէկ որոշումներ և  
ձեռնարկութիւններ կընես , և առով երբեմն  
կը վնասիս , քու բաղդդ շատ աղէկ է , և  
քանի որ բաղդդ քեզի կը յաջողէ և պիտի  
յաջողէ ։ գժուարութիւններ մի՛ յարուցա-  
ներ անոր դէմ , և խոնչեմարար և քիչ մ'ալ  
մտածելով գործէ ինչ որ պիտի գործես , որ-  
պէս զի չը վնասիս բնաւ , քանզի դուն աշ-  
խարհիս վրայ խիստ կարեւոր մեկն ես , և  
մարդկայինն ընկերութիւնը քեզի պէս ան-  
ձանց մեծ պէտք ունի , դուն նաեւ ընտան-  
եացդ ապաշտայ երջանկութեանը պատճառ  
պիտի ըլլառ , քանզի սիրուած ես յաշխար-  
հէս , բարեկամէ և թշնամիդ իրարմէ որոշե-  
լու համար մեծ զդուշութիւն ըրէ , և ասան-  
կով քու առնեւդ յաջորդաբար ներկայանա-  
լու բաղդերդ կամ յաջողութիւններդ արժա-  
նավայել տեղ կը դանէ քու քովդ : Բնաւ  
մ' վախնար այն ամենափոքր վասնգէդ որ  
պիտ' անցնի քու վրայէդ և խիստ քիչ վնաս  
պիտ' ունենաս : Ժիր և արթուն կեցիր , աշ-

իսարհիս բոլոր պարագաներուն մէջ , մար-  
դասիրութիւնն ու քաղաքակրթութիւնը քե-  
զի միշտ առաջնորդ ունեցիր ինչպէս որ ու-  
նեցած ես :

Դ ի մօտակայս մեծ բարիք մը պատրաստ-  
ուած է լիեզի համար , քեզի ծանօթագոյն  
անձի մը միջոցաւ , սակայն բնաւորութեանդ-  
մէջ քիչ մը նախանձութիւն կայ , որ խիստ  
դէշ բան է , և զքեզ ալ կը հալեցնէ , մեկդի  
գի՞ր այդ նախանձութիւնը որ գալիք բաշ-  
րութիւնը կարենաս վայելել : Երկու անձանց  
վրայ էւելուք կը նախանձիս , անոնք աւելի  
աղէկ պիտ' ըլլան և յառաջնան քանզի՝ ա-  
նոնց վրայ լաւ աչք կայ , որ քու չար նա-  
խանձու աչացդ դէմ կուտայ և կը վանէ մի-  
անդամայն , քու պակասութիւնդ միայն  
այդ նախանձութիւնն է . ուրիշ շարութիւն  
մը չունիս . աշխատասէր ես և բաւական յա-  
ջողակ ՚ի գործս , ալ ի՞նչ կը վախնաս . ըն-  
տանիքդ քու բարւոյդ կ'սպասէ , նայէ՝ որ  
զանոնք ժամ յառաջ երջանկացնես , քու  
ծերութեանդ ժամանակներուն մօտ բաղդ

մ'ալ ունիս որ քեզի մեծ ծառայութիւններ  
պիտի մատուցանէ : ապադայինդ մէջ երէք  
վատանդ ունիս բայց թեթեւ բաներ են, ա-  
մենեւին մի՛ կամկածիր . այլ նայէ՛ որ նա-  
խանձու բնութիւնդ փոխես :



Ա՛ռ քեզի բարեպաշտ կարծեցնել ուզող  
մէկն ալ, շիտակը ես քեզնէ կը վախճանմ,  
քանդի երկիւզած կերպարանք մ'ունիս բայց  
սիրտ շատ խառնաշփոթ և աղտոտէ, բեր-  
նէդ երածը միայն կոկորդէդէ և ոչ սրտէդ,  
դիշերը չար հնարքներ կը մտածես, և հե-  
տեւեալ օրը բարեբազդաբար առ ու ան խա-  
բելու և քու որոգայթներուդ մէջ ձգելու  
կաշխատիս, ալ բաւական է, քանդի բաւա-  
կան մարդ համոզելով խարեցի՛ր, թէեւ այս  
պատճառառ դուն ալ բան մը չը շահեցար :  
քու համոզումդ այնպէս է, որ մարդիկ ե-  
րար խարելով միայն կրնան ապրիլ այս աշ-  
խարհիս մէջ, ատի իրաւ է, քաղաքաց՝ նա-  
մանաւանդ քաղաքակրթեալ քաղաքաց մէջ  
սակայն այդպիսի աղտոտ և զջուելի եղա-  
նակաւ չէ այլ ամեն օրինաւոր խարէու-

թեան որնոր քաղաքակրթութեան ցանկնն  
մէջ ընդարձակ տեղ մ'ունի, ունի նաև ի-  
րեն համար կանոն մը : Ուստի՝ ատի աւելի  
մուրացկանութիւն է և մուրացկանութեան  
դարշելի տեսակը քան թէ՛ շահեցողութեան  
պատուառոր եղանակը : Դուն երէք մեծ  
քաղդեր կորանցուցեր ես, և չորս անդամ  
ալ վտանգներ անցուցեր ես : փոխէ՛ այդ  
համոզումդ և ունիս ապադայինդ մէջ երկու  
քաղդի յաջողուածներ որնոք բաւական պա-  
րարտ են դքեզ կշտապինդ յադեցներու հա-  
մար, սակայն բարեպաշտական վերաբերուդ  
ալ պէտք է որ վրայէդ նետես, քանզի քու  
այդ վերաբերուդ զմարդիկ կը խռավեցնէ :



Դէմքդ նայողը քիչ մը շոշտթութիւն  
ունի կըսէ քեզի համար . բայց այդ շոշու-  
թութիւն կարծուածը, քու շտապդ է, քու  
քովդ ամենեւին խոհեմութիւն չըկայ ,  
խորհելու եղանակը բնաւ չես զիտեր, և  
աշխարհիս մէջ մեքենաբար կընթանաս, ա-  
ռանց անոր ինչ ըլլալն իմանալու : Դուն  
շատ հոգնած անձ մ'ես, և քու հոգնու-

թեանդ վտանդը ետքէն պիտ' զգաս, դուն  
այնպէս կը կարծես, որ աշխարհս քեզի հա-  
մար բան մը չէ, և անոր զուարճութիւնն  
ամենեւին չես դիտեր, քու շահի ու ար-  
դիւնքդ աշխատութեանդ կիսուն անդամ  
չը պատասխանէր, քանզի ոչինչ բաներու  
ալ շատ կը հոգնիս, բաւական բաղդաւոր  
ես, և լաւ յաջողմուն.քներ դէմդ ելան,  
բայց անոնց յարդը չը կրցիր ըստ արժան-  
ոյն դիտնալ, ամեն բանի մէջ շուտով նետ-  
ուի ուզելուդ պատճառաւ : Ընտանիքդ  
քեզմէ շատ գոհ է : Դուն երկու թեթեւ  
վտանդներ ունիս անցնելու բայց մի՛ վախ-  
նար, այլ խոհեմութիւն ըրէ՛ քու բոլոր  
գործոցդ մէջ, և զանազան տեսակ բաներու  
մեկէն 'ի մէկ մի՛ ձեռնարկեր որպէս զի՛ չը  
շփոթիս : ի մօտակայս մեծկակ բաղդ մ'ու-  
նիս ընտանեացդ բաղդին հետ միացած,  
ջանա՛ որ անոր յարդը գիտնաս :



Ծնորհալի անձ մ'ես դու, և քու երե-  
սէդ շատ մարդիկ պիտ' ուրախանան, բայց  
բնաւորութիւնդ քիչ մը թոյլ ըլլալով՝ բա-  
ւական զէն ըրած ես մէկ քանի չարակամ

անձանեց երեսէն, մեծ սէր ունիս ընտան-  
եացդ վրայ, և ընտանիքդ ալ մեծապէս գոհ  
պիտ' ըլլայ քեզմէ, եթէ՛ առեւտրական  
գործոցդ մէջ քիչ մը խստութիւն ունենան  
քու բաղդերդ կամ յաջողմունքդ շատ են,  
և քեզի պէս բաղդ ունեցողներ հազուա-  
դիւտ են : ի մօտակայս երէ՛ք բաղդ ունիս  
յաջորդաբար իրարու ետեւէ գալու . սեւ  
մաղերով անձի մը միջոցաւ վտանդ մը պիտի  
գայ քեզ թէեւ, թեթեւ բայց այդ անձէն  
դդոյշ պէտք է կենալ և չը խաբութիլ անոր  
խօսքերուն, երկու անձանց հետ ց'արդ յա-  
րաբերութիւն ունիս, որոնցմէ օգտակարու-  
թիւն մը չը կայ քեզի, աւելի լաւ կընես  
եթէ՛ այս երկու անձանց հետ ունեցած առ-  
եւտրական յարաբերութիւնդ կերպիւ իւիք  
գաղքեցնես : Ատեն ատեն թեթեւ տրա-  
մութիւն մը կուգայ վրադ, բայց հոգ մի՛  
ընէր, կարճ միջոցի համար օդափոխութիւն  
մ'ըրէ՛ և այդ տրտմութիւնը շուտով կը փա-  
րափ քեզմէ :



Շիտակը շատ ագահ մարդ ես, և գիշեր  
ցորեկ շահելու վրայ անդադար կը խորհիս

կրնամը ըսել որ անձնական հանդատութիւնոյ բոլորովին կորանցուցեր ես, տանեղ մէջ անգամ գրեթե վայրկեան մը հանդիսատ չունիս: Ընտանիքդ քու այդ վիճակիդ պատճառաւ կը մտատանջի, երեսդ բնաւ չը խընդար, և անհընդհատ կը խորհիս: Կարծես թէ աշխարհիս բոլոր հարստութիւնը դուն պիտի կը լիս - Ընտանիքդ լու չես խնամեր, և զանի շատ անդամ կը զրկես ՚ի զուարձութենէ աշխարհիս, և ատեն ատեն անողնեց դութիւն կը պատճառես: Մեծ կորուսս մը կը նշմարեմ քեզի համար, քանդի քիչ դեպին մտղերով մեկը պիտի ներկայանայ քեզի և քու ագահութիւնդ լու դիտնալով պիտի համոզէ զրեկ, գործի մը ձեռնարկերու, մեծամեծ շահեր ընելու ակնկալութեամբ, դուն այս մեծ շահուն յափշտակուելով պիտի կապուխ և շատ դէշ պիտի ընես, զգոյշ կեցիք, և ագահութիւնդ շափաւորելով ընտանեացդ կարեւոր եղած խնամքը բնաւ մի՛ խնայեր, որպէս զի ապագադ ք՝ վասնդի, և աշխարհիս մէջ կարմնաս հանդիսատ կեանք վարել և ընտանիքդ երջանկացնել:

Ամեն ատեն կը տրտնջաս և բնաւ գո՞չ չե՞ս քու վիճակիդ վրայ, քու բնաւորութիւնը մելամաղձոտ է, և եթէ վոքրիկ նեղութիւն մը տեսնես, կամ ամենափոքր արգելք մը քու գործոցդ մէջ, բոլորովին կը յուսահատիս, և աշխարհը քեզի սեռու մութեկեւնայ: Դուն ընտանիքդ լու չես խնամեր, շիտակն ըսելով ընտանիքդ երջանիկ վիճակի մէջ չ' և քու այդ վիճակիդ վրայ շատ արտում է:

Երկըստութիւն ալ ունիս, և ամեն բանէ կը վախնաս, երկինից որոտնան ձայնը որ բնութեան մէջ մարդուս զուարձափք մ'է, դուն անոր ձայնէն ալ կը վախնաս: Կենացդ մէջ շատ բաղդեր ունիս անցած և անցնելիք, բայց անցածներուն յարդը բնաւ չե՞ս դիսցէր, և քու այդ տատանօղական և յուսահատական բնաւորութեամբ եկած բաղդերը վաներ ես:

Զարմանալին սա է որ դուն ամենեւին վտանգ մը և ձախորդութիւն մը չունենալով քու ծննդեան շրջանիդ մէջ, չե՞ս կրցեր լայնարձակ յառաջ երժալ, քանի որ ուրիշները վտանգ և ձախորդութիւնները ստուակոխ ը-

նելով իրենց սակաւաթիւ քաղղողն յաջողելու  
են յառաջ երթալ :

Թոթափէ՛ քեզմէ այդ մելամաղձոտ և  
յուսահատական վիճակդ և այն ատեն սեւ  
ու մութ տեսած աշխարհդ լուսաւոր և  
զուարճալի պիտի տեսնես , քանզի աշխարհ  
հիս զուարճութեանց պէս քաղցը բան մը  
չը՝ կրնար ըլլալ , և մարդկանց այսչափ աշ-  
խատանաց գլխաւոր պատճառը չէ թէ սոսկ  
ապրելու համար , այլ յաշխարհիս եղած ան-  
համեմատ զուարճութիւնները կշտապինդ  
վայելելու համար է : Ուժ ա՛ռ և վերանորոշ-  
ուէ՛ , բաղդդ յաջողագոյն է և միօրինակ , ա-  
մէն բան կրնաս գործել անկասկած բայց  
լաւագոյն դատողութեամբ :

Եկտակը չատ տաղտկալի մարդ էս , և  
աշխարհ անդամ ձանձրացած է քեզմէ , ան-  
դադար կը տուտուաս և ատեն ատեն ալ կը  
վայրահաշես . հետեւարար զուարթ բնաւո-  
րութիւն չունիս և կարծես երէսէդ թոյն  
կը հեղու : ըսելկուզեմցած կենդանի մ'ես ,  
և ընտանեացդ հետքարբարոսար կը վար-

ուխս , բաղդ մ՛ունիս որ ընտանիքդ լաւ է ,  
և քու այդ տաղտկալի բնաւորութիւնդ թէ  
և չնկ կը լըեր , բայց յակամոյս կը տանին :  
Տանդ մէջ շատ անդամ կուիւ և պրտնեղու-  
թիւն կը յարուցանես :

Չորս նեղութիւն և վասնդ անցուցած  
ես և հինգ ալ բաղդ կամ յաջողուած , ունիս  
գարձեալ երկու վասնդ կամ ձախորդու-  
թիւն , երկուքն ալ սեւ մաղերով ներկայա-  
նալի երկու անձանց միջոցաւ , և երեք ալ  
բաղդ կամ յաջողութիւն և այս երէքն ալ  
քիչ գեղին մաղերով անձանց միջոցաւ :

Բայց մինչեւ որ այդ տաղտկալի վարքդ  
չը վոխես , և քաղցրաբարոց չըլլաս և ըն-  
տանեացդ հետ սիրով չը վարուիս և զա-  
նոնք լաւագոյն կերպով չը խնամես ընդու-  
նայն է , քանզի այս ապագայ երեք բաղ-  
դերն հիրաւի կուդան , բայց հովի պէս ալ  
կանցնին կերթան , առանց քովդ հանգիստ  
մը գտնելու : Գու վրկութիւնդ և երջան-  
կութիւնդ քեզմէ միայն կախում ունի :

Վարպետարդի մարդ մը կ'երեւիս , բայց  
առ աղեկութիւնն ունիս որ բաւական համա-

ճարեղ ես, լու փորձառութիւն ունիս քանզ  
զի քիթդ ու ականջդ, ջարդ մը տեսած է :  
Սշխարհիս գրւարձութիւնը քեզի համար է :  
շատ մարդիկ քու առջեւդ տղու մը պէս են,  
և կը զարմանաս, թէ այնչափ անպէտ և ար-  
զայամիտ անձինք ինչպէս կը գործեն և կը  
յառաջանան ; և դուն որ լու փորձառու-  
թիւն ունիս և անոնց մէկ քանին մէկէն գրւ-  
առանէդ կը հանես, ու անոնց շափ չ'ես յա-  
ջոպիք, ատի անոնց բազդին յաջողուածն է  
և դուն չ'ես կրնար բռնանալ, դուն ալ յա-  
ջողութիւններ ունիս սակայն բնաւ համբե-  
րութիւն չ'ունիս, քու վրայէդ անցած յա-  
ջողութիւնները շատ քիչ են : Քու բաղդեղ-  
կամ յաջողուածոյդ մէծագոյնն ու զօրաւոր  
մասը քու ապագայիդ մէջն է, համբերէ  
քանզի ժամանակը մօտեցու է, ուրախ ե-  
ղիք որ պիտի վայելես առանց որ և է ար-  
դէլքի : Աչքրացութիւն ալ ունիս որմէ  
չ'ես կրնար հեռանալ : այդ ախտդ թէ եւ  
բորբոքին չը՝ կրնար բժշկուիլ զիսեմ, բայց  
պէտք է որ շափառուես որպէս զի յապագա-  
յին անձնական առողջութիւնդ չը մասի,  
և երկայնակեաց ըլլաս :

Բաղդաւորութիւնդ շատ մեծ է, բայց  
բնաւորութիւնդ խառնակ, ժամանակէ մ'ի  
վէր տարակուսանաց և շփոթութեանց մէջ  
կը թաւալիս . լու յարդ և վարի ունէիր  
բազմաց քով, սակայն հիմայ նոյն վարքդ-  
նուազած է, քանզի ՚ի պատուի էիր և ո՛չ  
խացար, և չը՝ կրցիր ըստ արժանոյն վար-  
ուիլ և գործերդ լու տնօրինել : Մէծամեծ  
բաղդեր և յաջողութիւններ անցած են վրա-  
յէդ, սակայն ամեն մէկ յաջողութիւնք մէկի  
մէկ ձախորդութեան յաջորդութեամբը մա-  
րեր գացեր են : Տարակուսանացդ հետ ու-  
նիս նաեւ՝ սրտի տրտմաւթիւն մ'ալ թէեւ  
ո՛չ այնչափ զօրսուոր, բայց մի՛ վախնար,  
քու ապագադ դարձեալ ազէկ է, մի միտին  
անձական վերանորոգումմը կը պահանջես  
և այս ալ անհրաժեշտ է : Քու յաջողութիւնդ  
ժամ յառաջ ժամանամն համար : Փոքրիկ  
վասնդ մը կամ ձախորդութիւն մ' ունիս ՚ի  
մօտակայս բայց թեթեւ և շուտով պիտ  
անցնի և ապա յաջողութիւնը պիտի յաջոր-  
դէ : Ընտանեկան գոհունակութիւնդ կա-  
տարեալ չ' և ատօր դարմանն ալ քիչ մի՛  
դժուար :

նպաստել քու այդ ընտանեկան խնդրոյն բուծմանն ու քարելաւութեանը : Սիրազ-մաքուր բռնէ՛ և ամեն բանէն աւելի մարդասէր եղի՛ր , և ջանայ՝ որ դարձեալ ամենուն սիրելի երեւնաս , դէմքիդ վրայէն ատեն ատեն նշմարուած արտմութիւնը վանէ , և զուարթադէմ եղիր :

39

Դանդաղ , ծանրաշարժ և թուլամութ մէկն ես , եթէ այդ գանդադութեամբ դրագդալ չունենայիր՝ անօթութենէ պիտի կորնչէիր . եօթն անդամ բաղդն իր մեծամեծ յաջողուածովն եկեր ու զքեզ փորձեր է և դու անոր յարդը ք' գիտնալով անոր ներկայացուցած յաջողուածոց փոքրագոյն մասին արժանացեր ես .

Երկու անդամմեծ փորձանք կամ վտանգանցուցած ես , և փա՛ռք որ այդ փորձանքները տեւողութիւն չեն ունեցէր : Մէկ դիզի՛ր գանդաղաթիւնդ և միր եղի՛ր քանզի ի մօտակայս երկու բաղդի յաջողուածներ ունիս քեզի դալու , նայէ՛ որ անսոց բարինդ ունելութիւն ընես . քու և ընտանելուց

բարօրութիւնը խիստ մօտ է , բայց պակսութիւն մ'ալ ունիս որ քու յառաջադիմութեանըդ և հարստութեանդ կերպիւ իւիք արգելք եղած է , այն է կրթութեան մէջ ունեցած պակասութիւնդ , ասի լրացնելու համար մեծ ջանք և ուշադրութիւն պէտք է ընես , բայց տուանդ ուշանալու :

40

Մարդկային ընկերութենէ բնաւ չես ախորժիր , քանզի խորուրած վարժուէր ես , և ասկէց զատ՝ հպարտութիւն ալ ունիս նախանձութեամբ հանդերձ . զի մարդու աղեկութիւն մ'ըլլուլը չես կամենար . խորուրած և մարդկային ընկերութենէ հեռի գտնուելուդ համար սրտիդ մէջ չարութիւն մ'երթալով արմատացեր է , ու հետզիետէ վայրահաշութեանըդ չափն ալ աւելցնելու վրայ ես :

Այս պատճառաւ ահա՛ շատ մը բաղդեր հեռացեր են քեզմէ , և ապագայիդ մէջ միայն երկու բաղդ մնացէր է և կը վախցուի որ զանոնք չ'ը կարենաս վայելել եթէ այդ վայրենական բնաւորութիւնդ չ'ը փոխես :

41

Ծնունդդ շատ բաղդաւոր է . թէ և մինչեւ ց'արդ մէկ քանի մեծ վտանքներ անցուցեր սակայն ապագադ շատ երջանիկ պիտ' ըլլայ : Սիրտ լաւ ու գթուու է , աղքատին և գթութեան արժանիխն օգնել կը կամիս : Թուխսեւ մազերով մարդու հետ յարաբերութիւն մ'ընէր : Երեք անդամ յ'անակնկալս բարութեան լուրեր պիտ' ընդունիս :



42

Բնաւորութիւնդ աղնիւ է բայց կրթութեան մէջ պակասութիւններ ունիս ջանա՛ որ այդ պակասութիւններն ալ լեցնես , և մարդկային ընկերութեան հաճելի մէկն ըլլաս : Երանի՛ թէ կրթութեան հետ ուսմունք ալ սորվէիր որ քու բարօրութեանդ մեծապէս պիտի նպաստէ : Շատախօս մարդու հետ յաճախ տեսնուիլ քեզի անպատճութիւն և վնաս կը բերէ :



43

Ժամանակ մը քու բաղդդ յաջող կ'երթար և ետքերն սկսաւ շփոթել , անցեալ օրերդ միշտ փառաւոր կ'երեւին քեզ , բայց մէ՛ վախնար միայն մէկ քանի օր աեղափոխութիւն և օթափոխութիւն ըրէ՛ , այն ատեն բաղդին յաջողմունքը նորէն պիտի գայ , բայց մեծ զգուշութիւն ըրէ մարդու հետ վարուելու մասին և ըստ կարելցին մեղմախօս և քաղցրախօս եղիր զի այսպէս կը պահանջէ քաղաքական կենաց օրէնքը :



44

Շատ յամառ ու խիստ բնաւորութեան տէր մէկն ես , անկրթութիւնն իբրեւ կրթութիւն ընդուներ ես , մարդու հետ վարուելուն եղանակը բնաւ չես գիտէր . ինքը զինքդ փիլիսոփայի տեղ ես դրեր , բայց ըստ իս էշ մը կամ գաղան մը կը ներկայանաս մարդկային ընկերութեան առջեւ , և ասոր համար բաղդը քեզմէ հեռի կը պատի , ջանա ժամ յառաջ այդ եւային ու գաղանային բարքդ փոխելու , և մարդ ըստելու արժանի վարք սորվելու :



45

Խեղկատակութիւնը քեզի սովորական ե-  
զանէ և կը կարծես որ ըրածդդ հանճարաւոր  
բան մ'է , սակայն գիտցի՞ր որ քու անպատիւ  
մնալուդ պատճառը խեղկատակ բնաւորու-  
թիւնդէ . եթէ դուն կրթութեան և ուսման  
պարապէիր իրա՛ւ կըսեմ որ նշանաւոր մէկը  
պիտ' ըլլայիր : Բայց տակաւին ժամանակ ու-  
նիս կրնաս գարձեալ ուսմունք և կրթութիւն  
ու մնիլ և խեղկատակութենէն աղատուելով՝  
տաղմողաւոր մէկն երեւնալ ընկերութեան  
առջեւ :

46

+

Որչափ որ գուն չես այնչափ զդար , սա-  
կայն ես լաւ գիտեմ որ քու վիճակդ ցաւալի  
է , և ատ ալ մի միայն յոռի բնաւորութենէդ  
յառաջ եկած . քու անհոգութիւնդ , թու-  
րութիւնդ և ծուլութիւնդ զքեզ թշուառա-  
ցուցեր է , և եթէ այդ ընթացքդ շարունակես  
հետզհետէ մելամազձուտ պիտ' ըլլաս : Ուստի՝  
խորհուրդ կուտամ քեզի որ ժամ յառաջ տե-  
ղը վոխես և բազմամարդ տեղ մը քու բնա-

կութիւնդ հաստատես որպէս զի՝ պարկեշտ  
ընկերութեանց յետ յարաբերութիւն ունե-  
նալով՝ այդ ցաւալի և յուսահատական կեան-  
քէդ աղատիս . զի այս է առոր միակ դար-  
մանը :

47

+

Զուարճութեանցդ և զրօսանաց չափն ան-  
ցուցէր ես . և քու այս ընթացքիդ համար  
ծշմարիտ բարեկամներդ ու ընտանիքդ դըժ-  
դոհ են , և եթէ դուն զուարճութեանց համար  
ինքը զինքդ այս աստիճան չը զոհէիր , նշանա-  
ւոր մէկը պիտ' ըլլայիր . զի մեծ բազդաւորու-  
թիւն ունիս քու կենացդ մէջ :

Լաւ ու խելացիութիւն կընես եթէ հեռի  
կենաս այդ տեսակ զրօսանքէն որ զմարդն  
ի կորուստ կը գատապարտէ , և գինովի պէս  
կընէ :

48

Ի մօտակայս մեծ բարութիւն մը պիտի ժա-  
մանի քեզ , և քու վիճակդ խիստ լաւ պիտ'

ըլլայ , քաջութիւն ունեցիր որ յ'անակնկալ գալստեան բարւոյն չը շուարիս : Քու վիճակը քիչ ժամանակի մէջ պիտ' այլափոխի և դուն ընտանեօք հանդերձ խիստ երջանիկ պիտ' ըլլաս :

Իրա՛ւ , եօթն անդամ բաղդը մնանցաւ քեզի և շուտով հեռացաւ , բայց այս անդամուն դաշտուսաը փառաւոր պիտ' ըլլայ և անոր ընկերութիւնը տերողական :

## 49

Ինն անդամ մեծ վտանգէ ու փորձանքէ ազատեր ես , զի անխոհեմութեան մէջ վերջին ծայրն հասած ես , ծնունդդ և սիրտդ բարի է , բայց ի՞նչ օգուտ որ կրթութիւնն ու ուսմունքը կը պակսին քեզնէ : Եթէ տակաւին այդ ոլակասութիւններով մնաս , զանազան վտանգներ ու փորձանքներ անպակաս պիտ' ըլլան քու անխոհեմ վարմունքիդ պատճտուաւ : Ի՞նչ ըսեմ չարն ու բարին քու ձեռքդ է : Կուզես կուզես փրկուէ կուզես կորառէ :

## 50

Այնպիսի բնաւորութիւն մ'ունիս որ ի՞նչ ըլլալը չես գիտեր ու չես զգար : Դուն լաւ կարծեր ես , բայց շատ մարդու ալ հաճելի չը թուիր : Իրաւ ոմանց աղէկութիւն կընես և ըրած բարութիւնդ ալ մարդ չիմանայ կըսես , բայց նախ գու կը հասկցնես ուրիշինքու ըրած բարութիւնդ , և ասով քու ըրած բարութիւնդ ստակ մը չ'արժէր . քանզի դուն փառաւորուելու համար ուրիշին պատիւն արատաւորած կը սեպուիս , զի հրապարակաւ բարութիւն մ'ընելը չարութիւն գործել է :

## 51

Մէկ քանի լուացողներու յարաբերութիւն ունենալուդ համար սիրտդ և բնաւորութիւնդ զղուելի եղած է , գուն այս ընթացքով պիտի թշուառանաս և ցաւալի վիճակի մէջ պիտի մեռնիս եթէ շուտով լուացողներու հետ յարաբերութիւնդ չը գագրեցնես և ընթացքդ ի բարին և ի հաճոյն չը փոխես : Եթէ ծանր կը թուի , տեղդ փոխէ և շուտով կրնաս ընել :

52

Վարքու փափուկ և քաղաքավար չէ՛, և  
ցաւալին սա է որ բարի և հաճելի վարք մ'ու-  
նենալուդ պէտքը չե՛ս զգար և ինքը զինքու-  
կրթեալ անձի մը տեղ դրած ես ։ և եթէ տես-  
նես փափուկ վարքով և քաղաքավար մէկը ,  
չէշնէ է կըսեա : Ասի քու անկրթութեանդ  
մէկ մեծ ապացոյցն է :

Դուն քու այդ կոշտ ու ցուրտ վարքովդ-  
քեզի ժամանած մէկ քանի բաղդի յաջող-  
ուածները ուսնակոխ ըրիր , և ի՞նչ նեղութիւն  
որ կը կրես հիմայ , անի քու անքաղաքավար  
ու կոշտ վարուցդ պտուղն է : Մի՛ անտար  
նայէ՛ որ շուտով աճռուիս ու ըստ արժանոյն  
կրթուիս : Ձեւէշնէր հոդ չէ՛ բաւական է որ  
անդամմը կոշտութիւնը վրայէդ երթայ . և  
այնուհեան զէվզէկութիւնն ալ կուղուի :

53

Ըստ արժանոյն ընտանեսէր ըլլալուդ հա-  
մար կը գովեմ զքեղ , բայց կը խրատեմ մի-  
անդամայն որ քիչ մը ծանրաբարոյ ըլլաս և  
հաստատամիտ քու առեւտրական և ընտանե-  
կան գործոցդ որոշմանցը մէջ : Թէեւ ամէն

բանի մէջ հաստատամտութիւնը մարդկային  
յառաջադիմութեան արդելք է , սակայն որ և  
է որոշումմը հաստատամտութեամբ գործադ-  
րութիւն կը պահանջէ նիւթական վիճակդ գո-  
հացուցիչ չէ՛ և ատոր պատճառն ալ քու այդ  
փոփոխամիտ բնաւորութիւնդ է : լաւ կընես  
եթէ ինքը զինքու ուղղես :

54

Ընտանիքդ քեզնէ բնաւ գոհ չէ՛ զի ցուրտ  
կերպով կը վարուիս կամ լաւ եւս իբրեւ բըռ-  
նաւոր մը կը ներկայանաս տանդ մէջ . այս ալ  
կրթութեան և սւսման պակասութենէն յա-  
ռաջ կուգայ : Տանդ մէջ գրեթէ ամեն օր  
գանգատ և խռովութիւն կը տեսնուի , և գուն  
բնաւ հանգիստ չունիս . անվայել միջոցներ կը  
խորհիս երբեմն որոնք գաղանային և անասնա-  
յին կենաց աւելի կը պատկանին : Քու ընտա-  
նիքդ հետղիետէ քեզնէ պիտի պազի և քու  
կորուստդ անոնց հաճելի պիտ' ըլլայ , եթէ չը  
փութաս անոնց սէրը գրաւելու :

Քու այդ անհաճոյ վարմունքդ և անասնա-  
յին ընթացքդ և անբարոյական գաղտնի գործ-  
քերդ զքեղ շուտով պիտի թշուառացնէ և  
մելամաղձու մէկը պիտ' ըլլաս և ահա՛ յայն-  
ժամ պիտի կորառուիս :

55

Սիրտդ մաքուր է բայց շատ վոփոխամիտ ես , և այդ փոփոխամառութեանդ պատճառաւ վեց անգամ բազդի յաջողուածն եկեր է քեզի և շուտով հեռացեր է : Տակաւին չորս բազդունիս ապագայիդ մէջ որոնք հետզետէ մեծ են , պէտք է ուրեմն հաստատամութիւն ունենաս կարեւոր դործոյ մէջ որպէս զի կարենաս զանոնք վայելել : Գիտեմ , սիրտդ նեղէ և համբերութիւնդ սակաւ , բայց քիչ մը լայն սիրտ ունենալու վարժութիւնն ընելու ես քու ապագայիդ երջանկութեանն համար . Երեք անձանց հասուցած բարիքդ քու ապագայ բարօրութեանդ պատճառ պիտ' ըլլայ :



56

Բնութիւնդ լաւ ու ընտիր է բայց քիչ մը ծուլութիւն ունենալուդ համար շատ բարիքներէ ետ կը մնաս . վասն զի եթէ այդ բարի բնաւորութեամբդ աշխոյժ և ճարպիկ ըլլայիր , իրա՛ւ կըսեմ որ նշանաւոր մէկը ողիտ' ըլլայիր : Շատ պարագաներու մէջ անհոգութիւն կը նես և թոյլ կը կենաս : Շուտ ըրէ՛ առանց տընտընալու ինքը զինքդ թոթուէ և աշխոյժութիւն զգեցիր ամեն պարագայի մէջ զի մեծ

բաղդ մը քեզի պիտի մօտենայ 'ի սակաւ աւուրց և շատ երջանիկ պիտ' ըլլաս :

57

Նեղ սիրտ ես և միանդամայն շատ վախկոտ , և այն բնաւորութիւնդ քու յառաջադիմութեանդ մեծ արգելք եղած է : Բազդի շատ յաջողուածներ եկեր մօտեցեր են քեզի , բայց վախկոտ և նեղ սիրտ բնաւորութեամբդ յարդմը չեն գտեր քու քովդ : Երանի թէ այդ վախկոտութիւնդ շուտով մէկդի նէտէիր և քաջութիւն ձեռք առնէիր . որպէս զի ընտանեօքդ հանդերձ երջանիկ ըլլայիր քիչ ժամանակի մէջ . բայց սա ալ գիտեմ որ եղած տեղդ գժուար պիտ' ըլլայ այդ վախկոտութենէդ ազատին , ասոր համար խորհուրդ կուտամ որ բնակութեանդ տեղը փոխես և գովելի ընկերութեանց հետ յարաբերութիւններ ունենաս , այն ատեն դիւրաւ կը սրտոտիս .



58

Բնաւորութիւնդ հանդարտ է և միշտ կը խորհիս , բայց ի՞նչ օդուտ որ այդ խորհրդածութենէդ արդիւնք մը չը զ յանար . զի մէկ

նիւթի մը վրայ ամենայն զօրութեամբ և կա-  
նոնաւորապէս չես խորհիր, պակսութիւն մ'ալ  
ունիս որ աւելի անցելցն վրայ կը խորհիս քան  
թէ ապագային : Եւ անցելցն վրայ ընդաբձակ  
հաշիւներ կընես և երեւակայութեանդ մէջ  
գործ մը կ'երականացնես : Բոել կուզեմ որ  
անգին ժամանակդ փուճ տեղը կը վատնես ա-  
ռանց արդիւնք մը դոյացնելու . քու խորհըր-  
դածութիւններդ գէջ չ'են, եթէ զանոնք կա-  
նոնաւոր եղանակի վերածես և ներկայիդ ու  
ապագիդ վրայ մտածես և որոշում մը տաս,  
և զինի որոշմանդ ուրիշն խորհրդովն այդ ո-  
րոշումդ չ'ը փոխես, զի բաղդը քեզի պիտի  
յաջողէ չ'ըլլայ որ ուրիշն կարծիքովն ու խոր-  
հըրդովը քու կարծիքդ փոխուի և ունեցած  
բաղդի յաջողուածքէդ զրկուիս :



## 59

Դուն նշանաւոր մէկը պիտ' ըլլաս բայց կըր-  
թութեան և ուսման մէջ պակասութիւն ունիս  
եթէ այդ պակասութիւնները շուտով լրացը-  
նել ջանաս, ընտանեացդ փառացն ու երջան-  
կութեանը պատճառ պիտ' ըլլաս : Լաւ կընես  
եթէ գործդ գիտնաս, այսինքն ծախքդ շա-  
փաւորես բայց չէ թէ տունդ և ընտանիքդ նե-  
ղես, այլ թէ չափէն և օրէնքէն աւելի ծախք

չընես : Գիտեմ շատ ընտանեսէր ես, բայց ըն-  
տանեացդ բարօրութեանն ու կրթութեանն  
համար կարեւոր եղաները պէտք է ՚ի գործ  
դնես : Երկու մեծ բաղդեր պիտի մօտենան  
քեզի քիչ ժամանակի մէջ, պատրաստ կեցի՛ր  
զանոնք արժանաւորապէս հիւրընկալելու :



## 60

Քեզի պէս բաղդաւոր մը հաղիւ թէ քսան  
հաղարէն մէկ մը կընայ ըլլալ, բայց կը զար-  
մանամ թէ ինչո՞ւ համար գործոցդ և աշխա-  
տութեանցդ մէջ կը թանդաղիս և կը ծուլա-  
նաս : Իրա՛ւ կըսեմ որ եթէ քիչ մ'աշխոյժ և  
ճարպիկ ըլլայիր, և ուսման մէջ աշխատէիր  
խիստ հարուստ և երեւելի անձ մը պիտ' ըլլա-  
յիր : Շուտ ըրէ՛ աշխատէ՛ ամենայն արթնու-  
թեամբ և ճարպիկութեամբ և ուսմունք ա՛ռ  
բաղդն հեռի չէ և մեծ է կարծածէդ աւելի :  
Խորհուրդ կուտամ քեզի որ վարքդ աւելի  
եւս փափկացնես և քաղցրաբարոյ և քաղցրա-  
խօս ըլլաս ըստ կարելցն :



## 61

Կրթութենէ քիչ մը հեռի կը տեսնեմ ըլ-  
քեզ, միջոց ալ ունիս աճուռելու և փափուկ

ու հաճելի վարք մ'ունենալու , բայց անփայթ կը կենաս . ջանա' օրերդ պարապը մի՛ անցուաներ և մարդկային ընկերութեանց հետ յաճախ յարաբերութիւն ունեցիր որպէս զի՝ կըթութեան մէջ ունեցած պակսութիւններդ լրացունես , ծուլութիւն ալ ունիս , այն ալ այս եղանակաւ վրայէդ թոթուես , զի մարդկային արարած մ'ըսելը աշխատութիւն ըսելէ :

Ուստինը , կըթութիւնն ու աշխատութիւնը զմարդն ՚ի գերութենէ կը փրկեն և բաղդն ալ կըթեալին և աշխատողին աւելի կը մօտենայ :

Յատախօս ես և միանդամայն դատարկախօս , խօսածներուդ մէջ բնաւ խմաստ մը չըլլալէն զատ՝ հակախօսութեանց մէջ մոլորուած ես : Մէկ խօսքդ միւսին չը յարմարիր :

Այդպիսիք բնականաբար զէվզէկ կըլլան . դուն թէեւ զէվզէկ չես , բայց ինը զինքիդ շատ հաւնած մեծ անձն շարասիրտ մ'ես : Նեւթական նեղութիւնը թէեւ երբեմն զմարդը կը կըթէ և շատ անդամ ալ գթասիրտ և բարեսիրտ կընէ , սակայն քու բնաւորութիւնը ու ընթացքդ ատոր հակառակն է : Ցաւալի է որ քու այդ վիճակիդ մէջ յասպագայս

ունեցած երկու բաղդերդ քեզի չը մօտենան , զի այդ սրտնեղուկ և ձանձրացուցիչ վարմունքովդ չը պիտի կարենաս զանոնք հիւրընկալել . շուտ ըրէ փոխէ վարքդ ու ընթացքդ մեղք ես . կը ցաւիմ քու ընաանեացդ վրայ շատախօսութիւնն ու գատարկախօսութիւնը մէկդի գի՞ր , քեզի չը վերաբերած գործին մէջ մի՛ նետուիր և ուշադիրութիւն ըրէ կըթեալ և ուսեալ անձանց վարուց և խօսից որպէս զի այդ ցաւալի ախտէն բժշկուիս :



## 63

Ծնունդդ շատ բաղդաւոր է , բայց արեան շրջանդ խիստ շատ անգամներ անկանոնութեան մէջ մտնելով բաղդերուդ պտուղը գրեթէ չես կրցէր վայելել : Կարելի եղածին չափ քաղցր ու քաղաքավարօրէն խօսէ ամեն ուրեք , ու ամեն պարագայի մէջ , կուոց և վիճաբանութեանց մէջն անդամ . զի՝ այս եղանակը քու բաղդիդ ճամբաները կը պատրաստէ կը յարդարէ և կը շքեզացնէ :

Ոմենեւին չըլլայ որ բարձրաձայն խօսիս մէկու մը հետ՝ ո՛վ որ ալ կամ ո՛ւր որ ալ ըլլայ . զի բարձրաձայն խօսելը քու բաղդերուդ ճանբաները կը գոցէ կամ կը վտանգէ : Այլ միշտ ցած ու մեղմաբար խօսէ :

Աչքերը մեծ ու բաց մարդոց հետ սերտ  
յարաբերութիւն մի՛ ընէր զի՛ այնպիսի աշք  
ունեցողին արիւնը՝ քու արեանդ հետ բնաւ  
չը համաձայնիր : Երկու անդամ մեծ՝ և հինգ  
անդամ ալ փոքր բաղդերուդ յարդն այս  
պատճառաւ չ'ես գիտցեր և անոնց ապարդիւն  
հեռանալուն պատճառ ես եղէր : Այսուհետեւ  
իրարու ետեւէ յաջորդող երեք բաղդեր ու  
նիս ապագայիդ մէջ . որոնց երկուքը նշանա-  
ւոր են , Նայէ՛ և զգուշացի՛ր որ արիւնդ ա-  
պականեալ վիճակի մէջ չ'ը դանուի , որպէս  
զի զանոնք կատարելապէս վայերես :

64

Վարպետորդի մարդոց խօսքերուն շատ կը  
խարուիս , թէեւ անխելք մարդ չ'ես : Փոքր  
պակասութիւն մ'ունիս որ մէկ բանի մը վրայ  
առանձին և քիչ մ'ալ երկար չ'ես խորհիր :  
Բարեկամաբար խորհուրդ տամ քեզ , թէ որ  
և է որոշում մէկէն 'ի մէկ մ'ընէր , այլ եթէ  
բան մը կուզես ընել կամ մէկու մը առաջար-  
կութեանը պատասխանել , նախ առանձին տեղ  
մը քաշուէ և այն իննդրոյն վրայ մէկ քառորդ-  
միջոցի չափ լաւ մը խորհէ մտածէ՛ և այնուհե-  
տեւ որոշէ՛ . և զինի որոշման ալ չ'ըլլայ թէ ո-

ըոշումկ վոխես որպէս զի չ' պասիս : Քու կե-  
նաց շրջանիդ մէջ առատ բաղդեր ունիս , ե-  
թէ տուած խորհուրդո որ քեզի համար լաւ է ,  
ուշադրութեամբ և կատարելապէս դործադ-  
րելու ըլլաս , դայիք բաղդերէդ շարունակ  
մեծամեծ օդուտներ պիտի քաղես : Զգոյշ կե-  
ցի՛ր ձայնը բարակ կամ սուր անձանց հետ  
ստեպ յարաբերութիւն ընելէ . զի այսպիսեաց  
արիւնը քու արեանդ հետ չ'ը համաձայնիր :

65

Թէեւ դուն չ'ես զդար , բայց ես դիտեմ  
որ՝ քու ներկայ ընթացքդ անվայել և քեզի՝  
ու քու անձիդ ալ վնասակար է : Քու արիւնդ  
շատ ժամանակէ 'ի վեր , ապականեալ վիճակի  
մէջ ըլլալուն համար , զանի շուտով մաքրել  
պէտք է , քանզի 'ի մօտակայս մեծ բաղդ մ'ու-  
նիս որ ճամբայ ելած է առ քեզ մերձենալու  
համար , չ'ըլլայ որ քու արեանդ անմաքրու-  
թեամբը զանի փախցնես :

Դիպուածն այնպէս բերած է որ ժամանա-  
կաւ մէկու մը բարութիւնդ հասած է . ահա՛  
այս պատճառաւ դուն մեծ վտանգէ մը փըր-  
կուեցար . ասկէց զատ՝ մէկ քանի փոքր վր-  
տանգներ ալ անցուցած ես , քու յոսի ըն-  
թացիցդ պատճառաւ : Քու բարութիւնդ ու

թշուառութիւնդ քու ձեռքդէ և եթէ չը մաքրուիս պիտի թշուառանաս : Շուտով դանի ըրէ : աշխատէ՞ որ ընթացքդ հաճելի և գովելի ըլլայ :



Ինքը զինքդ բանիբուն , դործունեայ և հանճարեղ կը կարծես և ուրիշն ալ չ'ես հաւնիր , սակայն մեծապէս կը սխալիս . զի՞ զքեղ աղբիւըլ տանող և ծարաւ ետ դարցնող շատ կան : Քու քովդ մասնաւոր ամբարտաւանութիւն մ'ալ կայ , որ քու կըթութեանդ ու յառաջդիմութեան մեծ արգելք եղած է : Եթէ հանդարտ մտօք ինքը զինքդ լաւ մը կըշուես , լաւ պիտի համոզուիս որ պարապ մարդես :

Ինքը զինքդ ուղղելու և կըթելու համար , նախ որոշէ ու համոզուէ՞ որ գըեթէ՞ բնաւրան մը չ'ես գիտեր , ասանկով ահա՛ ամբարտաւանութիւնդ կը խորտակի , և այնուհետեւ ամենուն խօսածն ուշադրութեամբ մտիկ կընես , և անոնցմէ քեզի դաս մը , օդուտ մը կը քաղես :

Քու այս բնաւորութեան պատճառաւդ երեք մեծամեծ բաղդերէ զրկուեցար : Ունիս

դարձեալ երկու մեծ ու նշանաւոր բաղդեր , բայց զանոնք կատարելապէս ընդունելու համար պէտք է անձգ նախապատրաստես , ապա թէ ոչ՝ վիճակդ ցաւալի կըլլայ :



Բնաւորութիւն մ'ունիս որ ամեն բան գիւտեմ կըսես , և մեծամեծ սխալանաց մէջ կ'ընկնես : Եւ ասոր համար շատ անգամ ուրիշներուն քով յարդ չ'ես ունեցած , և որ առաւելըն է ծիծաղելի ալ եղած ես : Բարկասրութիւնդ օր ըստ օրէ աւելնալու վրայ է : Ասի քու կենացդ մեծ զնաս պիտի պատճառէ և քու բաղդիդ գուները պիտի գոցէ . ուստի՝ առանց ժամանակ անցնելու բնաւորութիւնդ փոխելու և չափաւորելու աշխատէ , զի քու ծնունդդ շատ բաղդաւոր է : Այսինքն՝ քեզի համար մեծ բարութիւններ կան յ'ապագայդ , չ'ըլլայ որ զանոնք չ'ը կարենաս կատարելապէս հիւրընկալել :

Կեղծաւորութիւնը տեսակ մը քաղաքավարութիւն ըլլալով՝ եթէ անոր միջակ ճամբան դործածես , այս եղանակը քեզի համար լաւ է :



Քեզի պէս բաղդաւոր անձ մը 40,000 ին մէջ հաղիւ մէկ մը կը գտնուի . բայց ցաւալին ոտք որ կրթութեան և ուսման մէջ ունեցած պակասութեանցդ պատճառաւ՝ այդ շատ մը բաղդերդ թէե միշտ քու շուրջդ կը պատին բայց չեն կրնար մօտենալ :

Ժամանակէ մ' ի վերէ որ երակներուդ մէջ արեանդ շրջանը ծանրացած է , աս ալ մեծ պատճառ մ'է քու բաղդերուդ քեզմէ հեռի պատճեռն . ուստի՝ նայէ որ ժամ մը յառաջ քու արեանդ շրջանը դիւրացնես և թեթեւ ցընես , և որչափ ալ կարելի է հոգ ու փոյժ տանիս ժամ յառաջ կրթութեանդ ու ուսմանդ : Զանա՛ որ չը թմրիս ու արթուն ըլլաս աշխարհիս դարձուածոց մէջ , և անոնցմէ առջեկութիւն և հմտութիւն ունենաս , որպէս զի շատ մը բաղդերդ աջժանաւորապէս վայելիս .

Ժամանակէ մ' ի վերէ որ գործդ անյաջութեան մէջ ըլլալով՝ զանազան մօտածմունքներով անդ աղար կ' զբաղիս : Գիտեմ ; մէկ քանի տարբեր միջոցներ խորհեցար և գործադ-

ընցիր , բայց անոնք ալ յաջող ելք մը չունեցան : ինչո՞ւ համար զուր տեղը կը մօտաւանչիս , և գեղիցիկ օրերն ու ժամանակը ապարդիւն կանցնես : Չ'ես գիտեր որ քու արիւնդ չափէն աւելի ջրոտեր է : Եւ այն աստիճանին հասեր է , որ ամէն բան քեզի ձանձրոյթ կը պատճառէ : Գրեթէ և ոչ բանէ մը զուարծութիւն կ'զգաս , մէկու մը ներկայանալ հարկ է , ու չ'ես ուզեր երթալ , վրագ թուլութիւն մը տիրած է , ու այս կերպով ինչ ընելուդ մէջ գրեթէ շուարած ես : Քու այս վիճակիդ բարւոքանը համար ամբողջ մէկ ամիս ծովային և ցամաքային ճանբորժութեամբ օգափոխութիւն պէտք է որպէս զի՝ նոր զօրաւոր և աշխոյժ մէկ մ'ըլլաս . որպէս զի՝ դալիք բաղդերը լաւ մը գրկես , զի՝ բաւական թուով բաղդեր ունիս : Ա՛լ մի մնանար , փութացիր :



Քու կենացդ մէջ շատ աղեկ դարձուածքի և բարիքներու հանգիսկեր ես . բայց երկու չարամիտ անձանց գէշ խորհուրդներովը հիմայ գրեթէ զրկուեր ես : Քու խորհածդ ու որոշածներդ շիտակն ըսելու համար գէշ չեն եղեր , աղեկ բաներ ու լաւ կերպեր ու եղա-

Նակներ՝ խորհեր ես : Բայց ի՞նչ օդուտ որ ուշ  
բիշեն խորհրդոցը զոհուեր ես : Ճանբարդ մի՛  
փոխեր , քու խելքդ քեզի բաւական կրնաս  
դուն ինքը զի՞նքդ կառավարել առանց ուրի-  
շն խորհրդոցը կարօտելու : Միայն թէ կըր-  
թական եղանակդ կատարելագործէ , և քաղ-  
ցըր ու կարճ խօսելու կերպը քեզի ընտրէ՛  
այն ատեն բոլորտիքդ թշչառդ բազդերդ քե-  
զի շուտով կը մօտենան : Եւ ամեն մարդ ալ  
պիտի զարմանայ և ուրախանայ քու ասլադայ  
գեղեցիկ վիճակիդ վրայ :



## 71 4

Մարդկային ընկերութեան նախատինք բե-  
րող բնաւորութեան տեղ մէկն ես , և այս պատ-  
ճառաւաւ շատ կը վախնամ որ քու ապագադ  
ցաւալի պիտ' ըլլայ եթէ ինձ մաիկ կընես : Ա-  
ռանձին տեղ մը փակուէ՛ և ուխտ ըրէ՛ որ այդ  
բնաւորութիւնդ աղտոտ շապիկի մը պէս թոթ-  
ուես ու վրայէդ նետես : Քու բազդաւորու-  
թիւնդ գրեթէ շատ մարդու վրայ չ'ը գտնիր-  
ւիր և եթէ այդ յոռի բնաւորութիւնը չունե-  
նայիր , գուն նշանաւոր ու երեւելի մէկը պիտ'  
ըլլայիր . զի բաւական ալ հանձօրեղ ես և  
ինելքդ սուր :

Զուր տեղը զահ եղեր ես քու կըից հաճու-  
յիցդ և ասոր համար քու երջանկութիւնդ ու-  
վայելչութիւնդ կամաւ ուտնակոխ ես ըբեր :  
Մի՛ անտնար խորտակէ կիրքդ որսկէս զի եր-  
ջանկութիւն և վայելչութիւն ստանաս :

---

## 72

Մինչեւ ցարդ Շ փորձանք անցեր են քու  
վրայէդ և ասնց ամենուն ալ համբերեր ես .  
բայց պակասութիւն մ'ունիս որ ժիր ու ճար-  
պիկ չ'ես : Գիտեմ որ ժամանակաւ ժիր ու  
ճարպիկէիր , բայց վհատելով հետզհետէ թուլ-  
ցար , և այս պատճառաւ չ'ը կըցիր վերականգ-  
նել : Քու ապագայիդ մէջ և մեծ բազդեր ու-  
նիս , եթէ չ'ը զօրանաս ու ժրութիւնդ չ'ը վե-  
րադրես գէշ կընես , զի երբ բազդերը քեզի  
մօտենան ու զքեզ թոյլ գտնեն շուտով կը  
փախչին : Լաւ կընես եթէ աջ կամ ձախ թե-  
ւիդ . երակէն 40 տրամի չափ արիւն հանել  
տաս , երեք օր սենեակիդ մէջ փակուիս հան-  
գիստ ընես , և անմիջապէս ետքն ալ փոքրիկ  
ճամբորդութիւններ ընես միայն ծովային :  
Հաստատ դիացի՛ր որ միայն 10 օր կարճ կարճ  
ծովային ճանբորդութեամբ նոր զօրութիւն մը  
պիտ' զգենուս , և նոր ու ճարպիկ մէկ մը պիտ'

ըլլաս , քու բաղդերդ արժանաւորապէս և  
կառարելապէս դրկելու համար : Զգուշացիք  
միայն խիստ դեղին մազերով և կապուտ աշ-  
քերով անձանց հետ յարաբերութիւն ընելէ .  
զի՞ այսպիսեաց արիւնդ քու արեանդ չ'ը հա-  
մապատասխաներ :

73 ✚

Մարդկային սլաշտաւորութիւններդ չ'ը  
ճանչող ու չ'ըյարդող մէկն ես , երկիւղածու-  
թիւն ու պատկառանքն ալ որ կրթութեան  
շրջանին մէջ քող մը կը սեւսուին , անոք ալ հե-  
տրդնեաէ վրայէդ հեռանալ սկսած են , և ա-  
հա՛ այս պատճառաւ . երջանկութեան ճանքէն  
խոտորեր ես : Շատ կը վախնամ՝ որ այս ըն-  
թացքդ եթէ մէկ տարի ալ շարունակի , տա-  
րակոյս չ'կայ որ վիճակդ վատթարագոյն պիտ'  
ըլլայ և անոր առաջքն առնելու դարմանն ալ  
դժուարադոյն : Մէկ քանի սկակասութիւններ  
ալ ունիս որ հոս կ'ամչնամքեզի ըսելու , դուն  
լու գիտես , մտածէ ու այդ սկակասութիւննե-  
րէն զգոյշ կեցիք , փութա՛ կրթական եղա-  
նակդ 'ի բարին վերածելու , զի՞ անքաղդ մէ-  
կը չ'ես , և կրնաս քու բաղդերդ արգիւնքն ամ-  
բողջապէս վրայելել :

74

Կարծես թէ՝ վրադ խիստ ծանր բեռ մը  
կայ , և այդ բեռուն ծանրութիւնն հետպահետէ  
աւելի եւս պիտ' զգաս : Ց'արդ երեք անգամ  
բաղդի գոներ բացուեցան ու շուտով դոցուե-  
ցան . զի՞ արիւնդ վերջին ծայր թանձրացեր  
է : Մէկու մը բան մը պատմած կամ յայտնած  
ժամանակդ գիտացինիդ անախորժ կամ անըմ-  
բըսնելի կը թուի զի՞ արեանդ յարաբերական  
ուժը խիստ տկարացած է : Շատ դէշ կ'ընես  
եթէ տակաւին այդ թուլացեալ ու ծանրաց-  
եալ վիճակիդ մէջ սնանիս : Փութացի՛ր գնա՛  
'ի տաք բաղանիս , և մարմինդ շատ մը կակըղ-  
նալու աստիճան քրանելէդ ետքը երկու օր  
ինքը զինքդ պահպանէ 'ի խոնաւութենէ և 'ի  
ցրաց և երրորդ օրը մարմնոյդ մեծ երակները  
շիել տալով 50 տրամի չափ արիւն հանել տուր  
և երեք օր հանգչէ՛ առանց արիւնաւեր ուտե-  
լիք կամ ըմպելիք գործածելու . այս գործո-  
ղութենէն ետքը 15 աւուր չափ ծովային և  
յամաքային ճանբորդութիւնը ըրէ՛ պիտի տես-  
նես որ շուտով վիճակդ փոխուած է 'ի յաջո-  
ղութիւն և գալիք չորս բաղդերդ այն տաեն  
լաւագոյն կերպով պիտի կրնաս գրկել :

Ատեն ունիս որ զուարդ ես , և ատեն ալ  
ունիս որ կը տիրիս : Փոքր բանէ մը կուրախա-  
նաս , փոքր բանէ մ'ալ կը վշտանաս և կը խո-  
րուրիս : Երբեմն աշխարհս քեզի ոքանչելի կե-  
րեւնայ , և երբեմն ալ կարծես կը մթննայ և  
քեզի այնպէս կը թուի , որ մարդկային ամէն  
ջանք անօգուտ ու ապարդիւն են այս աշխար-  
հիս մէջ : Ասոնք խառնուած քի և արեան ա-  
պականութենէ յառաջ եկած շոշորդներ են :  
Ասի այսպէս թողուլ չըլլար . զի՝ քանի որ հին-  
նայ ու քանի որ հասակաւորիս , այս վիճակը  
կը ծանրնայ քու վրադ : Ասոր համար , խոհե-  
մութիւն և խելացութիւն մը կընես եթէ 15  
օրեայ ծովային օդափախութիւն մը շուտով ՚ի  
գործ դնես , զի՝ բաղդ մ'ունիս ՚ի մօտակայս  
և երկուք ալ յաջորդաբար , բայց այս վեր-  
ջնները մէկ տարի ետքը պիտի մոտենանքել :



Քեզ տեսնողը . կամքու վրադ ուշադրու-  
թիւն ընողն այնպէս կը կարծէ որ շտո կը խոր-  
հիս , և այդ կերպ խորհելով օդափակար ծրա-  
դիրներ կը պատրաստես , բայց այս կարծիքը


սխալ է . զի՝ խորհելու եղանակդ աղաւաղեալ  
է : Ամէն ժամանակ բանի մը խորհիմ կըսես ,  
և խելքդ ասդին անդին կը ցրուի , և խորհուր-  
դըդ կը խափանի , ըսել կուզեմ թէ՝ նոյն մի-  
ջոյին տեսակ մը մշուշ , բաւկէնց կուգայ վրադ  
և մտածմունքդ աստանդելով խորհուրդիդ ծը-  
րադիրը տակնուվրայ կընէ : Ասոր միայն ճար  
մը կայ որ պէտք է գործադրես առանց ուշա-  
ցնելու : Առտու մը կանուխ գնա՛ քիչ մը հե-  
ռու , ականջդ բոլորպին խաղաղ ու օդաւէտ  
տեղ մը քաշուէ՛ , և 10 վարկեանի չափ երեսդ  
ու գլխաւորաբար ճակատգ պաղ ջրով լաւ մը  
թրջէ , ու սրբուէ՛ և նախաճաշիկ մ'ընելէդ  
ետքը առանց աչքդ ասդին անդին պտցնե-  
լու , նոյն նիւթին վրայ կարճորէն խորհէ՛ ու  
անմիջապէս որոշէ՛ և առանց տնտնալու զանի  
անմիջապէս գործադրել փութայ , ահա՛ այն  
ատեն բաղդդ քեզի պիտի մօտենայ :



Ճարպիկ ու գործունեայ անձ մը կ'երեւիս  
բայց փոփոխամիտ բնաւորութեան տէր մէկն  
ըլլալուդ համար , գործերէդ ց'արդ արժա-  
նաւոր օդուտ մը չ'ես կրցեր քաղել , վախսկոտ  
թռչնոց պէս՝ ծառոց մէկ ուստէն միւսին կը

վրայէդ գրեթէ հովի պէս անցած տասնիշափէ շատկես : Այս պատճառաւ ցաւալի է որ քո գեղեցիկ բաղդերդ չ'ես կրցեր դրկել, և անոնց յարդը ճանչել :

Աւստի՛ լաւ կընես եթէ աջ կամ ձախ թե՛ք երակէդ 30 տրամի չափ արիւն հանես և 4-օր հանդչիս , զի այնչափ մը վնասակար արիւն կայ վրադ որ քո երջանկութեանդ առջեւ պատնէշ մ'եղած է : Տարակոյս չ'ը կայ որ ասանկոլ քու փոփոխամիտ բնաւորութիւնդ պիտի փոխուի : Եւ որոշած մէկ գործդ անմիջապէս գործադրելու պիտ ելնես , Եւ ահա այնուհետեւ պիտ սկսիս ասլադայ 6 բաղդերդ վայելել :



Շնչոցի մը մէջ կը տեսնեմ զքեդ , այն աստիճան մեծ , որ ի՞նչ վիճակի մէջ ըլլարդ գուն անդամ լաւ մը չ'ես գիտեր : Գանուած վիճակիդ միշտ աղէկ կողմը կը տեսնես , և զայն տեսնել կուղես : Բնաւ ձախող կողմը չ'ես մըտածեր , քանզի՝ այնպիսի վիճակ մ'ունիս որ այն կողմը մտածել տալու միջոց չ'ը կայ գրեթէ : Ամեն բան չքեղ և լուսաւոր կը տեսնես , և պարագաները քեզի այնպէս կը կարծեցնեն

որ այս լու առուոր շնչոցը տեւողական և յաւ ւիտենական է :

Առ այժմ , երակներուդ մէջ արիւնը լու շրջան կընէ , ուստի՝ պէտք է որ զդուշանաս այս գեղեցիկ շրջանը խանդարող ուտելիք ըմբ պիլք եւայն բաներէ . զի՝ չըլլայ որ շրջանը ծանրանայ , և վիճակի կերպարանավոխուուի : Լաւ կընես , եթէ երկու ժամ միայն առանձնանալով քու ներկայ վիճակդ ու անոր ընթացքն հաշուելշուելով ապագայ օդ տիդ ծըրադիրը ներկայէն հիմակուց պատրաստես :



Քու վիճակդ մինչեւ ց'արդ չորս անգամ կերպարանավոխ եղած է պէտք եղածին չափ խորագէտ ես և կընաս աւելի եւս գործեր ըստ ինքեան տնօրինել , կարդադրել և կառավարել : Քու անձիդ և վիճակիդ երկիւզը միմիայն ցըտէն և խոնաւութենէն է : Պէտք է որ միշտ զդուշանաս ցըտային և խոնաւային պատահարներէ , զի մի՛ վատթար վիճակ մ'ունենաս : Խիստ ուեւ մազերով անձանց հետ յարաբերութիւն մի՛ ընէր . զի՝ այսպիսեաց արիւնը քու արեանդ հետ բնաւ չը համաձայնիր : Երեք րադդ ունիս ապագայիդ մէջ , եթէ կանոնաւ

ւորտակէս վարուիս սփափի կընաս զանոնք ար-  
ժանաւորապէս վայելել :

80

Լուսաւոր աստեղ տակ ծնած մէկն ես .  
բայց նախապաշարմանց մէջ մնեալ ըլլալուդ  
համար , բաղդիդ մեծամեծ առիթները կոր-  
սընցուցեր ես : Քու բաղդերդ գրեթէ անթիւ  
են քեզի համար , բայց մեզք որ այս նախա-  
պաշարմունքներէն աղատուելու և լաւագոյն  
եղանակաւ բաղդաւորուելու համար , պէտք է  
որ դոնէ 3-4 ամիս բաղմամարդ ու մարդկա-  
յին զանազան տեսակ դովիլի ընկերութիւն-  
ներ գանուած աւելիրուն մէջ կեանք վարես և  
ըստ այնմ մեծ ուշադրութեամբ լաւ մը կըր-  
թափ :

81

Ներագ սեւ ու դուքսդ ճերմակ մէկն ես ,  
այսինքն քեզ տեսնողը բարեպաշտ կարծածին  
պէ՞ս դուն ալ զքեզ բարեպաշտ կարծել ու-  
ղելով այնպէս եղեր է որ անբարեպաշտութիւ-  
նըդ քեզի զդալի չէ եղած :

Այսորէս են նաեւ մոլեռանդներն ու ջերօ-  
մեռանդները : Լաւ կընես եթէ առանց ինքը  
զինքդ խաբելու , քու ընթացքիդ վրայ հան-  
դարտօրէն ու երկարօրէն դիտողութիւն մ'ը-  
նելէդ վերջը՝ քու համոզմամբդ քու ներկայ  
ընթացքդ դատապարանու : Զի՞ արինդ երթա-  
լով թանձրանալու վրայ է . և շատ կը վախցը-  
ւի , որ եթէ այդ ընթացքդ չը փոխես , վատ-  
թարութիւն մը պիտի տիրապետէ և պիտի  
բռնանայ քու վրադ , և այնուհետեւ դժուար  
պիտի ըլլայ անկէ փրկուելը : Քու կենացդ շըր-  
ջանին մէջ ունեցած 7 բաղդերէդ և ը անցած  
են և կան 3 ալ յ'ապագայս :

82

Աբաաքոյ կարգի անձ մ'ես , և այնպէս  
կը կարծես որ քեզի պէս հանձարեզ , քեզի  
պէս բանիբուն մարդ չը կայ . բայց ատի ամե-  
բարտաւանութեանդ . և հպարտութեանդ մէկ  
մեծ ապացոյցն է . այդ գէշ սովորութիւնդ  
հենալով քեզի բնութիւն եղած է . և եթէ երս  
կու անգամ բաղդերէդ բաղդաւորուեր ես ,  
սակայն ատենէ մ' ի վեր բաղդն հեռացեր է  
քեզմէ , և կը վախցուի որ հետզհետէ բաղդն  
աւելի եւս հեռանայ քեզմէ : Ուստի լաւ կըս

նես որ ապագայ վիճակդ չը վատէ՞ արացնելու և բարւոքելու համար, մէկ ամիս ծովային և ցամաքային ճանրորդութիւն ընես, բայց զգուշանա միանդամայն ողեղէն ըմպելիքներէ և այնուհետեւ կ'սկսի վարքդ կակսղնալ և հպարտութիւնդ ու ամբարտաւանութիւնդ ջախջախել. այն ատեն ահա՛ Յ բաղդերը շուտով պիտի մերձենան քեզի :

83

Լաւ կընես եթէ սիրտդ և բերանդ մաքուր սրահել ու ՚ի մաքրութեան վարժեցնել ջանաս, զի՝ այս ընթացքովդ շատ մը թշնամիներ յարուցած ես քեզի պէմ : Լաւ իմացիր որ բարեկամ կարծածներդ քեզի բարեկամ չեն ու բնաւ քեզմէ չեն ախորժիք : Արիւնդ կապուած ու բռնուած է և ասոր համար դժուար է որ քու արիւնդ ուրիշն հետ համաձայնի :

Լաւ կընես եթէ շուտով արիւնդ մաքրես և գոնէ 2 ամիս մարդկային ընկերութեանց մէջ ժամանակ անցնես, որպէս զի երեք բաղդերդ արժանաւորապէս դրկել և անոնց յարգը ճանչել :

84

՚ի բարեպաշտութենէ ՚ի ջերմեռանդութիւնն և ՚ի ջերմեռանդութենէ ՚ի մոլեռանդութիւն դիմած ես, և այս պատճառաւ անտանելի մէկըն ես : Ինքը զինքդ ամենակըթեալ մէկը կը կարծես, բայց լաւ դիտցի՛ր որ կրթութենէն շատ հեռի կը դժոնուիս . մարդկութիւն ըսուածքանընաւ քու վրադ չը կայ, վերջապէս ինչ որ մարդկային ընկերութիւնը կը պահանջէ նոյնը վրադ չը կայ : Կը ցաւիմ որ քու այս անտանելի վիճակդ ու ընթացքդ ապագային մէջ զքեզ պիտի վատթարացնէ և քեզի գալիք երկու բաղդերդ հովի պէս վրայէդ պիտի անցնին, եթէ չը փութաս դարման տանիլ և մարդկային ընկերութեան մէջ սնանելով չը կրթուիս ու քու պակսութիւններդ վրայէդ չը թոթուես :



85

Ինքը զինքդ խելացի և գործունեայ մէկը կը կարծես բայց շատ կը սխալիս, որովհետեւ փոփոխամիտ և շատ չարասիրտ ես . փոփոխամութեանդ պատճառաւ թունոց պէս մէկ

ևստէն միւս ոստը կըցատկես գործիդ մէջ .  
յիրաւի շատ բաղդաւոր ես բայց չարասրտու-  
թեամբդ և ծակաչքութեամբդ քու բաղդե-  
րըդ կանոնաւորապէս չ'ես կրնար վայելել : Կը  
խրատեմ գքեղ ո'վ մարդ՝ թէ՛ ծակաչքութիւ-  
նը որ ադահութեան մէկ ճիւղն է . սկսէ աղ-  
դիդ և ընկերիդ աղէկ կամենալ՝ ինչպէս որ  
քեզի կ'ուզես : Լաւ գիտդիր որ՝ թէ որ մարդ-  
կային ընկերականութեան պահանջած կանո-  
նին համեմատ չ'ը վարուիս քու վերջդ շատ  
դէշ պիտ' ըլլայ , որովհետեւ մարդուս առա-  
ջին պարտքն է նախ ընկերը սիրել և ձեռքէն  
եկածին չափ անոր օդնել ըստ արժանոյն : թէ  
որ բներանդ հայուսնքէ մաքրելով՝ սիրտդ ու-  
րերանդ չ'ը միացընես անպատճառ . քու վեր-  
ջդ գեշանալով պիտի կորնջիս :

## 86

ինքը զինքդ այնպէս վարժեցուցած ես որ  
խօսքերուդ մէջ մինչեւ որ սուտ չ'ը գտնուին  
սիրտդ հանգիստ չ'ըլլար , և կամ ինքը զին-  
քըդ իբրեւ ճարտարօքէն խօսող մը . չ'ես հա-  
մարիր : իրաւ որ ծնունդդ բաղդաւոր է , սա-  
կայն շաւալին այն է որ մարդկային ընկերու-  
թեան մէջ ստախօս մը ճանցուած ես : Շատ

լաւ կ'ընես եթէ այս բազմամեայ բնաւորեալ  
ախտը վրայէդ պրես , բայց աս ալ բաւական  
դժուար գործողութիւն մ'է : Ասի դիւրացնե-  
լու միակ միջոցն ուրիշ բան չ'է , եթէ ո'չ ըստ  
կարելոյն քիչ խօսիլ և շատ մտիկ ընելն է :  
Քանզի բնական է որ շատախօս մը կամ անի-  
մաստ պիտի խօսի կամ իր խօսքերը սուտե-  
րով պիտի զարդարէ : Ահա՝ այս սակաւախօ-  
սութեան եղանակաւը ստախօսութիւնդ բնա-  
կանաբար կը նուազի հետզհետէ և կ'անհետա-  
նայ , և այն ատեն գալիք և բաղդերդ կրնաս  
ըստ արժանոյն 'ի քեղ ընդունիլ :

## 87

Ժամանակաւ զուարթադէմ և զուարթա-  
սիրտ մէկն էիր բայց պարագաներն այնպէս  
բերին որ քիչ միջոցի մէջ զուարթութիւննե-  
րըդ տրտմութեանց փոխուեցան , վիշտ ու ցա-  
ւերդ շատցան գրեթէ բոլոր ձեռնարկութեան-  
ցըդ . մէջ թէ ընտանեկան և թէ առեւտրա-  
կան : Սեւամազ անձէ մը խաբուած և անոր ո-  
րոգայթին մէջ ընկած ես , թէեւ երկու ան-  
դամ փրկուեցար այդ որոգայթէն բայց բո-  
լորովին ազատած չ'ես , քու հինգ բաղդե-  
րըդ առ ոչինչ սլացած են : Լաւ կընես եթէ  
20 օրի չափ տեղէդ հեռանալով խիստ բաղ-

մամարդ քաղքի մը մէջ ժամանակ անցնելէդ  
գերջը նորէն տեղդ դառնալով դործես , զի  
այս օդոց և կինաց եղանակի փոփոխութենէն  
ետքը քեզ հասնելիք երկու նշանաւոր բաղ-  
գերուդ արժէքը ոիտի կրնաս դիտնալ , ապա  
թէ ոչ ապագայ վիճակդ ցաւալի կ'ըլլայ :

88

'ի մօտակայս մեծ բաղդ մ'ունիս որ զքեդ  
կատարելապէս պիտի գրկէ մի՛ անտնար , դը-  
նա՛ շուտով մաքրուէ՛ և երեք աւուր մէջ տա-  
սը քսան անդամ երեսդ ու ճակատդ պադ  
ջրով լոււա՛ և զգուշացի՛ր ցրտէ և միանդամայն  
առաւել տաքէ , որպէս զի՝ արիւնդ չ'ապա-  
կանի և միշտ արթուն և ուժով դտնուիս քո-  
բարօրութեանդ միջոցին :

Հաւատա՛ , որ շատ մը բաղդեր ունիս հե-  
տրդհետէ յաջորդելու , և 'ի քեզ հանդչելու :  
Բայց զգոյշ կեցի՛ր նաեւ մաղերը դեղնադոյն  
և աշաց դոյնը բաց եղող անձանյ հետ որ և է  
յարաբերութիւն ընելէ , զի՝ այսպիսեաց ար-  
իւնը քու արեանդ հետ բնաւ չ'ը համաձայ-  
նիր : Զանա որ միշտ արթուն ըլլաս և խոհե-  
մութիւնն ու դարցուածոց հաշուեկշիռը ձեռ-  
քէդ բնաւ չ'ը թողուո . զի՝ մի՛ դուցէ արիւնդ  
խանդարի և մոլորիս :

89

Աչքդ լոյս , ուրախութեան ժամերն հա-  
սած են քեզի և խիստ քիչ աւուրց մէջ ուրա-  
խառիթ աւետիմներ պիտ' ընդունիս և ներկայ  
վիճակդ քու կարծածէդ ու փափաքածէդ ա-  
ւելի պիտի բարւոքի : Շատ չ'եմ ըսեր , բայց  
բաւական նեղութիւն կրեցիր ալ նէ՝ նոյն տե-  
սակաւոր նեղութիւններէն ալբաւական օդուտ  
քաղեցիր . զի՝ փորձառութիւն ունեցար , որ  
քեզի մեծապէս պիտի նպաստէ ապագայ գոր-  
ծոցդ մէջ : Չ'եմ խաբուիր եթէ ըսեմ թէ՝  
այսուհետեւ մէկու մը աչքերը դիտած ա-  
տենդ այն անձին ինչպէս ըլլալը , դէշու-  
թիւնը կամ աղեկութիւնը հարիւրին եօթա-  
նասնի չափ կրնաս ճանչել և հասկնալ մանա-  
ւանդ այնուհետեւ եւս առաւել : Դուն ըն-  
տանեացդ և շատ մ'անձանց ուրախութեանը  
բարեկեցութեանը և երջանկութեանը պատ-  
ճառ պիտ' ըլլաս և զքեզ բոլոր ճանշցողներուն  
ալ սիրելի : Ասկէց աւելին ալ ի՞նչ կողես :

90



Քեզի համար , անկրթութիւնը կրթութեան  
տեղ անցած է , զի՝ դուն այնպէս կր կարծեա

որ վերջին աստիճան կրթեալ ես, բայց ընդհակառակն վերջին աստիճան էշ ես։ Անկըրթութիւնն ու կոշտութիւնը լաւագոյն կերպով արմատացուցած է և շատ դժուար ու գուցէ անկարելի է քու արմատացեալ անկիրթբնաւորութիւնդ կրթականի փոխել, ուստի՝ լաւ կընես եթէ ժամմը յառաջ՝ յաշխարհէս փոխիս, որպէս զի՝ ուրիշներուն կրթական ընթացքն ու եղանակը չը խանդարես։ իսկ եթէ յաշխարհէս փոխիլը քեզի ծանր կ'երեւի, գոնէ այնպիսի երկիր մը փոխադրուիս որ քու անկրթութիւնդ ու իշային կոշտութիւնդ՚ի հիմանց ջախջախուի։

94


Բարեսիրտ և քաղցրաբարոյ մէկն ես, բայց փորձառութիւնդ նուազ ըլլալուն պատճառաւ՝ շատ անդամ գործոցդ մէջ կը սխալիս։ Ըսել կուզեմ թէ՝ դուն չես սխալիր, բայց կը սըխալցնեն զքեզ։ Զի կը շողոքորթեն և կը ծեփծիեն։ Լաւ կընես եթէ զգուշանաս աշաց բիբերն ստես խաղցնող և բարձրախօս անձերէ, զի՝ ասոնց արիւնը բնաւ չը յարմարիր քու արեանդ։ Վեց բաղդ ունիս գալու, որոնց երկու քրեթէ խիստ մօտ են։ Քեզի համար

միօրինակ կեանքը օդտակարագոյն պիտ' ըլլայ։ Գնհատութիւնն ու անժամանակ քնանալը կամ նուազ կամ առաւել ննջելը կամ խառնաբնթոր ճաշելը, քու կենացդ ու գործոցդ ընթացիցը մեծ արդելը կ'ըլլայ։ Լաւ կընես նաեւ, եթէ ստես ստես բաղմամարդ տեղեր գտնուիս և մարդկային ծանր ընկերութեանց մէջ ժամանակ անցնես։

92

Անձնական պատիւդ անձնական շահուող զոհող մէկն ես։ Ջքեղ ասոր անոր ճշմարտախօս և աղատախօս կը քարողես, սակայն զըուարձաբանական եղանակաւ կեցնարութիւնըդ առատ է։ Անկէց ՚ի զատ՝ շատ երկշոտ մէկն ես, և գրեթէ ամէն բանէ կը վախնաս, և այս երկիւղալից բնաւորութեանդ պատճառաւը շատ մը բաղդեր ոտնակոխ ըրած ես։ Փա՛ռք տո՛ւր որ դէմդ շագանակագոյն մաղերով մէկն ելաւ ժամանակաւ՝ որուն արիւնը քու արեանդ հետ համաձայնելով բաւական միջոց, գործերդ յաջողութեան մէջ ընթացան։ Եթէ այն անձը չըլլար թշուառ և յոռի վիճակ մը պիտ'ունենայիր։ Զանա՛ փոխել այդ կեղծաւորական և երկիւղալից բնաւորութիւ-

Նըդ , երակէդ 40 տրամի չափ արիւն հանելով՝ զի արիւնդ թանձրացած ըլլալով՝ կը վախոցուի թէ օրըստօրէ 'ի ձախողութիւն կը դիմես :



## 93

Բարքդ ու վարքդ կանոնաւոր է և մարդկային ընկերութեան մէջ դովելի , սակայն՝ յանձանք մ'ունիս որ ստեղ ստեղ կը հեշտանաս , զի՝ աւելի բնութեան օրէնքը գործադրելու հակամիտ ես քան թէ անոր չափաւորութեան պէտքն զգալու : Իրաւ որ ատի մեծ յանձանք մը չ'է , բայց մարդկային ընկերութեան պահանջածին ճիշդ համեմատն ալ չ'է , և այս պատճառաւ շատ ժամանակներ եղած են , որ անձիդ վրայ տիրապետած հեշտութենէն յաջորդող թուլութիւնը քու կենսական և առեւտրական ընթացքիդ , թէեւ թեթեւ բայց զնամներ հասուցած է : Դուն շատ բաղդաւոր անձ մ'ես , եթէ ընթացքդ ալ կանոնաւորես և չափաւորես , տարակոյս չ'ը կայ որ հսկայաքայլ յ'առաջ պիտի երթառ քիչ ժամանակի մէջ . Զի՝ արեան ըրջանդ խիստ կանոնաւոր է :



## 94

Ուրիշին համար չար կամեցող մէկն ես : Բնութիւնդ խիստ է և գոռողութիւնդ ալ առատ : Ասոնցմէ զատ՝ բարոյականութիւնդ ալ խանդարուած է և մեծ դարմանի կը կարօտի . Ընտանեաց վրայ պահանջուած սէրը չ'ունիս , և եթէ դուն այս յոռի սովորութեանց գերի չ'ըլլայիր , տարակոյս չ'ը կար որ նշանաւոր մէկը պիտի փայլէիր մարդկային ընկերութեան մէջ զի՝ ծնունդիդ մէջ շատ բաղդաւոր ես : 12 Բաղդ անցեր են վրայէդ և կրնամ ըսել որ անոնց խիստ քիչէն կրցեր ես օգուտ քաղել : 7 Բաղդ ալ ունիս ապագայիդ մէջ : Սակայն մինչեւ որ մարդկային գեղեցիկ ընկերութեանց մէջ գոնէ վեց ամիս կերանք ու ժամանակ չ'անցնես , չ'ը պիտի կարենաս զանոնք վայելել : Ալ ինչպէս կուղեսայնպէս ըրէ :



## 95

Ահա՝ կը տեսնեմ մէկը , որ կը թութեան չափազանց փափաք ու միտում ունի :

Ուրախ եղի՛ր դուն շուտով յառաջ պիտի գաս և 'ի կարգս նշանաւոր անձանց պիտի դասին , զի՝ ուշադիր և հետաքրքիր ես ամէն

բաներու : Ասոր համար ալ , խիստ քիչ ժամանակի մէջ խիստ շատ բան պիտի ուսանիս : Բաղդդ քնզի միշտ օգնական կ'երթայ զի՝ արեւնդ մաքուր է և դարմանի բնաւ կարօտութիւն չ'ունիս : Այլ քիչ մը ծովային օդափոխութեան պէտք ունիս որպէս զի՝ ժրութիւն և քաջութիւնն աւելնայ վրադ , ասոնք ամենակարեւոր կը համարուին քու բաղդերուդ օդտին համար : Զանա' մի՛ տնտնար , ժամ մը յառաջ օդափոխութեան այս խնդիրը լուծէ որ 10 օրեայ գործադրութիւն մ'է : Խիստ մութ սեւ մազերով և ակռաները մեծ անձանց հետ յարաբերութիւն մի՛ ըներ : Չըլլայ նաեւ որ ննջման եղանակդ խանդարես : Ուշադրութիւն և սովորութիւն ըրէ՛ միշտ կէս գիշերէն մէկ ժամ յառաջ յ'անկողնի կամ լաւ պատսպարեալ ծածկոցով քնանալու , զի՝ մի՛ արեան զրջանդ խանդարի :

96

Հիւրասեր մէկն ես , բայց ընկերութեանց մէջ ատեն ատեն կը թացիկնաս , ասիկայ քու հեշտասեր բնաւորութեանդ մէկ արդիւնքն է , բայց կրթական օրէնքին մէջ պակասութիւն մը : Մակայն աս ըսելով չ'եմ ուզեր ըսել թէ՛

թացիկութիւնն ի հիմանց թողուս և կոշտութիւնն անոր տեղ յաջորդեցնես , զի՝ լուագոյն է թացիկ ու զէվզէկ ըլլալ քան թէ՛ կոշտու էշ : Ուստի՝ ջանա' որ առանց կոշտութեան դիմելու թացիկութիւն չափաւորես կամ առանց զայն ամբողջապէս փախցնելու բարեկրթութեան ու բարեձեւութեան վոխսն ընթացք : Մէկն համոզելու համար բաւական վարպետ ու ճարպիկ ես : Հարկ եղածին չափալ բաղդաւոր ես և պիտի կրնաս երջանկութեամբ կեանք անցնել յ'այսմ աշխարհիս :

97

Շատ անդամ քու գործոցդ մէջ կը շփոթիս և կը բարկանաս ու կ'սկսիս դէշ կարդալ , ասոր պատճառը քու արեանդ խանդարեալ ըլլալն է : Շուտով դարձան կուզէ , որ այս խանդարումն այլ եւս չ'երկարի և չ'ը ծանրհայ : Մի՛ անտնար քեզի մաքրութիւն կակդրւթիւն մարմնոյ , վերանորսադում արեան և օդափոխութիւն անձի պէտք է : Քու շփոթեալ վիճակը քեզի ծանրացուցեր է , և խօսուած քդ ալ անհասկնալի եղած է : Ըսել չ'եմ ուզեր որ խօսածներդ չ'ը հասկցուիր : Այլ մէկու մը հետ խօսած ատենդ քու ներկայ արիւնդ այն ան-


ձին աղեանը 'հետ չ'ը համաձայնիր : և Բաղդ  
ունիս ապագայիդ մէջ : Զանա' որ քու վերա-  
նորոգմամբդ կարենաս անոնց պատուղը վայե-  
լել ,



## 98

Աքանչելի բնաւորութեան տէր մէկն եռ ,  
սակայն ձեռքդ թոյլէ : Չ'եմ ըսեր թէ շռայլ  
ես : Այլ ափէն քաջ շատելի լայնաձեռն կամ  
առատաձեռն ըլլալդ քեզի յանձանք մը կըր-  
նայ սեպուիլ : Ահեց զատ՝ պակսութիւն մ'ալ  
ունիս , . և բաւտ' ո շորձառու Տըլլալրւդ  
համար , . ուրիշն խօսքերուն դիւրութեամբ  
կ'անսաս :

Բաղդերդ շա ։ ոնտիր և նշանաւոր են . և  
8 ի չափ կան : Ասոնք հետղհետէ պիտի յա-  
ջարդին և քելի մօտենան և դուն ալ անսնց  
յարդն ու օգուտը պիտի ճանչես : Սակայն  
զլոյշ կաց խխատ սեւ մաղերով ու շատախօս  
անձանց հետ յարաբերութիւն ունենալէ : Զի՞  
մի դուցէ ասոնց հետ յարաբերութիւն ընե-  
լովդ քու արեան շրջանդ խանդարի : Միօրի-  
նակ դնա՛ և բնաւ մի՛ վախնար :



2013

234/2



1,3

48

{